


Puapu

6

1978



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Գ. ՍԻՀՈՒՆ	Մեկում ցերեկ է, միսում՝ գիշեր...
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Թռչունները պատասխան վրայ
» »	Հովի մարդիկ
» »	Մարդիկ
» »	Ձերմուքիս 40°
» »	Հասանքին մէջ
ՇԱՀԱՆԳՈՒԽՏ	«Կուտ պայ, մայ լալ»...
Փ. ՀԵՐԱՆԵԱՆ	Մեռեալ ծով
» »	Պիպտոս
» »	Անգարա
» »	Անի
» »	Լնակ իմ
Կ. ԱՐՄԵՆԵԱՆ	Կրիկիանի մերն է
Պ. ՀԵՐԵԱՆ	Ա. Բացին
» »	Քու ֆերթուածը
Ս. ՊԵՐԿԵԹ	Սպասելով կտային
» »	Թուղբին անդատանը
Ս. ԿՐՍԿՈՍԵԱՆ	Միխայիլ Նայմեի հետ
Խ. ԱՍՈՅԵԱՆ	Միխայիլ Նայմեի կեանքը եւ աշխարհը
Ս. ՏԱՏՈՅԵԱՆ	Շարժանկարը իբրեւ միջոց
* * *	Պարը
Վ. ԹԵՔԵԱՆ	Գոյուքեհապաշտարեան փիլիսոփայութիւնը
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Ա. Ատրինէի «Չորրորդ մը կը փնտտուի» հատորը
Պ. Հ.	Ռուբինա Տէր Բարսեղեանի «Իմ սիրտը»
* * *	Ռ. Զարգարեանի «Յայզալույս»ը
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	«Ստախոս կ'ուզուի» բաներախաղին բեմադրութիւնը
* * *	Մշակութային լուրեր

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԷ. ՑԱՐԻ. ԹԻՒ Շ

ՅՈՒՆԻՍԿՈ

1978

ԳԷՅՐՈՒԹ

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

ՄԵԿՈՒՄ ՑԵՐԵԿ Է, ՄԻՒՍՈՒՄ ԳԻՇԵՐ...

Գ. Մ Ի Հ Ո Ւ Ն

Ա.

Սիրելի Սիրվարդ,

Ահա առաջին երկրորդ նամակն է, որ գրում եմ քեզ եւ այս անգամ հեռու, շատ հեռու տեղից: Ասում են՝ երբ ձեր մօտ գիշեր է լինում, այտեղ առաւօտ է, երբ ձեզ մօտ մութն է իջնում, այտեղ արշալոյսն է բացւում: Յիշո՞ւմ ես, առաջին նամակս ես քեզ գրել էի սրանից երեսուն տարի առաջ, մեր դպրոցի աւարտական դաստրանում, երբ մենք 17-18 տարեկան պատանիներ էինք: Դա մի երկար ու ընդարձակ նամակ էր, որի վրայ աշխատել էի ամբողջ գիշեր... Իմ առաջին սիրոյ առաջին նամակը...: Յաջորդ օրը, դասամիջոցներից մէկում, երբ դու եւ Յասմիրը դաս էիք սովորում դպրոցի բակում թեւանցուկ երթեւեկելով, ես լուռ ու դադաղողի մօտեցայ քեզ ու նամակս գրեցի թո սեւ դոկնոցի ձախ գրպանը: Այդ բոլորն մեր սովորական կատակներից մէկը թուաց քեզ եւ դու լուռ ժպտացիր: Երբ դու ժպտում էիր, աչքերդ փայլում էին, եւ լոյսի մի լայնածիր ալիք տարածւում էր ամբողջ դէմքիդ վրայ: Յետոյ ձեռքդ տարար գրպանդ, շօշափեցիր նամակս, թերթերի մի ամբողջ խուրձ, եւ ապա՝ լուռ ու հարցախոն նայեցիր ինձ:

— Կը կարգաս, յետոյ կը պատասխանես... — ձայնեցի քեզ հետուից : Ես մտայ դատարան ու նոտեցի իմ գրասեղանի առջև : Մեր բոլոր դատարանցիները բախում էին : Իսորսր գարուն էր, կապույտ ու արևայայրդ երկինք... :

Չանդը հնչեց : Գատարանի լուսթիւնը յանկարծ վերակենդանացաւ ուրախ ազմուկով ու ծիծաղներով : Պատմութեան դասն էր : Քիչ յետոյ, ուսուցիչը ցուցափայտան ու քարահօր ձեռքում՝ դատարան մտաւ : Առաջինը քեզ կանչեց դասը պատմելու : Գու դասը պատմեցիր սովորականի պէս գերազանց ու վերադարձաւ քո տեղը դոգմանների տարափի տակ հպարտ ու երջանիկ : Երկրորդը, չլիսեմ ինչպիսի գուցադիպուկութեամբ, ուսուցիչը իմ անունը կարգաց յանկարծ : Ես սոփ կանդնեցի ալլալլում : Ես դասը չզիսէի : Ես դասը չէի սովորել... : Ես գասերն սկսել էի արդէն շտովորել... Երբ սկսել էի քո մասին մտածել... : Ես այդ ամբողջ օրը լարում եւ ուշադիր հետեւում էի քո ամէն մի շարժումին : Ի՞նչ էիր պատասխանելու արդեօք : Եւ այդ օրն այնքան երկար տեսեց, որ կարծես մի յաւերժութիւն թուաց : Եւ երբ տուն դնալու ժամը հասաւ, դու աւանց մի բառ ասելու թողեցիր ու դնացիր... : Ես մնացած ամբողջ օրն անցկացրեցի փողոցներում թափառելով :

Յաջորդ առաւօտեան ես շատ շուտ վեր կացայ ու գնացի դպրոց : Երբ դատարան մտայ, ահայ, որ դու ինձանից աւելի առաջ էիր եկել : Դա մի երկվայրկեան ինձ բարեջաջող նշան թուաց : Բայց երբ հայեացքս ընկաւ դէմքիւ, ես խոսոյն շիտթուեցի ու հազիւ կարողացայ «Բարի լոյս» շննջալ :

— Ետ վերցրու քո գրած նամակը, — ասացիր թղթերի տրցակը երկարելով ինձ, — գուցէ հարկ լինի մի ուրիշի գրել, որն աւելի արժանի է, նման բաներ ես չեմ սիրում, խորթ են ինձ համար... քեզ էլ խորհուրդս է գրանց վրայ ժամանակ վառնելու փոխարէն գտներովդ գրագուես... :

Ու անմիջապէս վեր կանգնելով տեղիցդ՝ թողեցիր ու դատարանից գուրս դնացիր : Ես մնացի մենակ : Նամակս ընկել էր գետնին՝ ախար ու ուղրադին ծալքերի մէջ ձգուած : Գարնանային տառտառեան սրայծառ ու արեւոտ երկինքը խաւարեց աչքերին : Ես դրասեղաններին յենուեցի՝ ներքեւ չընկնելու համար : Ես երեխայի պէս ուղեցի արտատուել, ես, դատարանի... Հերզլուես» :

Բ.

Իրանից յետոյ մօտ մի շաբաթ մենք չիտեցիք իրարու հետ : Ես ինչպիսի կակիժով էի ասնում քո բոլոր լուս ու ծածուկ շարութիւնները, որանցով պատժում էիր կարծես իմ յանդիպութիւնը... :

Յաջորդ շաբաթ օրն էր, եւ դու մի ուրախ ու շէնող տրամադրութեան մէջ էիր : Շաբաթ օրերը մենք բոլորս էինք ուրախ լինում : Վերջին մեծ դատամիջոցն էր, երբ դու եւ Քնարիկը դատարան մտաք ձեզ հետ բերելով ռեզինէ մի մեծ դնդակ : Գատարանում մինակ ես էի ու նստած դաս էի սովորում : Գատարանում սկսեցիք դնդակ խաղալ : Գնդակը մերթ ընկնում էր յատակին, մերթ թուղրառում դրասեղանների վրայ, մերթ բախում պատերին եւ ազմուկ ու փուչի բորձրացնում : Ես հարկադրուած զիմելով Քնարիկին՝ ասացի .

— Քնարիկ, ինձ չտա էք խոնկարում, խնդրում եմ դուրս եկէք, բա-
կում խոզացէք...

— Մենք այտեղ ենք խոզարու եւ այտեղից էլ դուրս չենք գայ, իսկ
ում հաճելի չէ՛ նա կարող է գնայ, — ասացիր կամակոր աղջկայ քմահաճ
ձայնով :

Ես լսեցի ու վերադարձայ դատաբքին : Դու այս անգամ աւելի ետան-
դով սկսեցիր խոզալ ու աւելի սեփղն հարուածել գնդակը...

Բայց, ահա, այդ պահին յանկարծ կատարուեց անսպասելին : Քո մի
աւճղին հարուածից գնդակը թռաւ-գնաց հանդիպակաց պատին ամայաուած
բիւրեղաօդակեայ ծաղկամանի վրայ, ներքեւ գցեց այն ու փշուր-փշուր կո-
տարեց : Ազէար սարսափելի էր : Դու մի ճիշ արձակեցիր ու քարացար կանդ-
նած տեղումդ : Դէմքդ ամբողջովին սփրթնեց :

Ես իսկոյն վեր թռայ իմ նստած տեղից :

— Շտա՛ւպ, Քնարիկ, շտա՛ւպ վաղիր, աւելը բեր, — զոչեցի ես ու դու-
ռը փակեցի ետեւից ամուր սեղմած, սրպէտքի ոչ ոք ներս չմտնի :

Քնարիկն աւելը բերեց եւ ես սկսեցի արագ-արագ աւելը դետնի վրայ
սարածուած ծաղկամանի բեկորները : Բայց այդ պահին դուռը բացուեց եւ
մեր գասղեկը, որ օրուայ հերթադասն էր, գլխովը ներս երկարեց :

— Այս ինչ խայտաստիութիւն, — բղաւեց նա՝ տեսնելով ջարդուած
ծաղկամանը ու բարձրացած փոշին, — գասարանը խաղաղաշուր՞ էք վերա-
ծել, ինչ է... Տուն չգնայ, գասարանական ժողով, — յայտարարեց զայ-
րայտմ :

Օ, դու օրինապահ աղջիկ, ինչպէ՛ս հաւատարիմ էիր կարգապահու-
թեան կանոնների հանդէպ եւ ինչպէ՛ս էիր դողում մի բիծ անգամ չտաննալ
քո անուան վրայ, միշտ խոստափելով նման «անկարգութիւններից» : Ես զի-
տեմ՝ մինչեւ ժողովի ժամը դու մի քանի անգամ լաց եղար, բայց յայտնի
չարեցիր : Ես միայն հասկացայ քո կողերի ծայրերից, որ կարմրել էին...

— Հրաչիկ, Քնարիկ, Սիրվարդ, սաի կանդնեցէք, — հրամայեց դաս-
ղեկը, երբ ժողովն սկսուեց եւ ապա՝ մեզ կանչեց գրաստիտատիկ առջեւ կանդ-
ներու : Դէպքը պատմեց գասարանին, որ արդէն ծանօթ էր :

— Ո՞վ կոտրեց ծաղկամանը — հարցրեց նա :

— Ես, — ասացի՝ անմիջապէս ձեռքս բարձրացնելով ու մի քայլ ա-
ռաջ եկայ :

— Ձէի էլ կասկածում, — հաստատեց գասղեկը, — ուրիշ ո՞վ պէտք
է լինէր, — ու դառնալով ինձ, — այ ազայ, — բղաւեց, — մի բոյիդ նայիր,
մի կատարած դործերդ տես, արջի պէս մարմնիդ ես տալիս, գլխումդ խեղ
չկայ, ես քանի անգամ պէտք է սսեմ, որ գասարանում արգելուած է խաղ,
փաղվորաց, դղվորաց... ասա՛ տեսնեմ, ինչո՞ւ խոնդարեցիր կարգը...

— Ճիշդն ասած՝ ես կարգը խոնդարելու նպատակ չունէի, գնդակը
նոր էր ու չափազանց հեռաքրքրեց ինձ, ուղեցի փորձել, մի քանի անգամ
դետնի խփեցի եւ ահա յանկարծ ձեռքիցս թռաւ ու գնաց ծաղկամանի վրայ,
— պատասխանեցի :

— Բայց ինչքան միտմիտ եւ ձեռնուտ, հսկայ ճուտիկ, — ասաց դաս-
ղեկը հեզնական ձայնով, որից յանկարծ մի ուրախ քրքիջ փրթկաց դասա-
րանում, — սուսնց ամաչելու սուտ էլ ես խօսում...

— Ինչպէս թէ, — բողբոջեցի ես :

— Ասա՛ տեսնեմ, դու որտե՞ղ էիր կանդնած :

— Ահա այստեղ, այս անկիւնում — պատասխանեցի ու դրան ետեւ ցոյց տուեցի:

— Այստեղից ինչպէ՞ս գնդակը կարող է թռչել դիմացի պատի վրայ եւ անկիւնում ամբողջում ծաղկամանը ներքեւ դցել, դու պորդապէս ասա՛, որ խաղ ես սարքել դաստրանում ու աղջիկներին էլ քեզ դո՛ւ ես դարձրել... իսկ ս՞ի էր բերել գնդակը:

Ես այստեղ արդէն շիտթուեցի: Բայց Գնարիկն հասաւ օդնութեան.

— Գնդակն իմն էր, եղբայրս էր բերել տնից, մօտը տեսայ, վերցրեցի ձեռքից...

Վերջապէս ժողովը ինձ համար որոշեց վնասուց հատուցում ու դրաւոր նկատողութիւն ու ակարտուեց:

Ես քամու նման թեթեւ թռայ ու գնացի իմ տեղը...

Վերջին ժամից յետոյ, երբ տուն էինք վերադառնում, ինձ համար բոլորովին անսպասելի կերպով, դու ինձ մօտեցար ու ակամջիս տակ փսփոսացիր.

— Երեկոյեան ընթերցարան կը դա՞ս, քեզ բան ունե՞մ տեսլու...

Գ.

Երեկոյեան այդ երջանիկ ժամին, ես մտայ մեր դպրոցի բակը, բարձրացայ աստիճաններից վեր երկրորդ յարկը ու մտայ ընթերցարանի սրահից ներս: Դու եւ Յասմիկը եկել ու նստել էիք լուսամուտի մօտ դրած մի դրասեղանի առջեւ: Զեղանից բացի ոչ ոք չկար: Ո՞վ Շաբաթ օր ընթերցարան կը պար: Դու արտակարգօրէն գեղեցիկ էիր այդ ժամին: Սեւ գոգնոցի ու սպիտակ ժանեկաւոր օձիքի մէջ դէմքդ պողել էր առաւօտեան ցօղից լուացուած թարմ ու բուրակաւ ծաղկի պէս, աչքերդ փայլում էին, ու լոյսի մի լայնածիր այլք տարածուել էր այտերիդ վրայ ու քունքերիդ շուրջ:

Յասմիկը քիչ յետոյ թողեց մեզ ու դնաց: Նա հաղիւ էր հեռացել, երբ դու դարձար ինձ.

— Խիր, Հրաչիկ, ես քեզ խիստ վերաւորեցի, չէ՞. բայց ես մեղաւոր չեմ, մեղաւորը քո նամակն էր, հաւատա՛ ինձ, ով էլ լինէր իմ տեղը, կր վերաւորուէր...

— Ինչո՞ւ:

— Ախր, դու այնպիսի բաներ էիր դրել, որոնք այնքան հեռու են ինձ համար եւ որոնց մասին ես հարկ չեմ համարել դեռես մտածելու...

— Բայց ես իմ սրտի ամբողջ անկեղծութեամբ էի դրել, ես ինչ իմանայի, ինձ թւում էր, թէ մարդ ինչ որ դուում ու մտածում է, պէտք է դրի... Մի՞թէ դա անարխիստութիւն չէ...:

— Բայց վայելուչ չէ, Հրաչիկ, ի՞նչ կ'ասեն մարդիկ, եթէ լսեն, ի՞նչ աչքով կը դիտէ մեզ մեր շրջապատը՝ մեր ընկերները, մեր ծնոյները, ուսուցիչները... Երեւի չես մտածել այդ մասին...: Դու քո գլուխը լցրել ես ազատ դաշտախորհրդով եւ չես մտածում իրականութեան մասին:

Ես ակամայ համակերպութեամբ աչքերս խոնարհեցի ներքեւ:

— Եւ յետոյ, — շարունակեցիր դու. — մտածիր, որ մենք, աղջիկ-

ներս, զեռ շատ անպատրաստ ենք նման բաների համար, որոնք մի տեսակ երկիւզ են ազդում մեր վրայ...

Այս ազնիւ խոստովանութեան անկեղծ շեշտը միտքս սթափեցնում էր՝ քնից զարթնող երեխայի պէս:

— Հրաշիկ, ես ներողութիւն եմ խնդրում քեզանից... ես չգիտէի, որ դու այդքան բարի սիրտ ունես, երբ քո վրայ վերցրեցիր դատարանում պատահած դէպքի ողջ յանցանքը...

Ինձ թուաց, որ յուզումից քո ձայնը դողաց: Ու երբ նայեցի քեզ, ասայ, որ ժպտա չկար քո գէմքին:

— Այսօրուայ դէպքը իմ կեանքի լուսադոյն յիշողութիւններից մէկն է մնալու, — ասացիր դու — եւ ամէն անգամ այս օրերի մասին մտածելիս՝ քեզ սիրով ու երախտադիտութեամբ եմ յիշելու...:

Չգիտեմ ինչո՞ւ այս անգամ քո բառերը տխուր հնչեցին: Մի անհուն կարօտ պաշարեց ինձ յանկարծ: Ես աչքերս յուզումով լուսամտուից դուրս գցեցի: Յետոյ միջօրէի արեւը բարձրացել էր բարձր շէնքերի կաւարներին: Ներքեւ, գպրոցի ամայի բակում մի խաղաղ լուսթիւն էր թեւածում: Կատրոս երկնքում ծիծեռնակները սուրում էին ճողուցելով: Եւ վերջապէս այդ երազական պահին ամէն ինչ հարւում ու ձուլում էր քաղցր ու հեռաւոր կարօտների մէջ...: Յանկարծ մօտալուռ բաժանման դադարաբը ծանր քարի պէս նստեց սրտիս վրայ:

— Ահա մի ամիս եւս, ու մենք կը բաժանուենք իրարից, — ասացի ես մի տառապաղին շուրկով, — եւ ինչ տարօրինակ բան...: Դեռ մինչեւ երէկ այնպէս էի շտապում գպրոցն աւարտելու ու հեռանալ, մինչդեռ հիմա չեմ ուզում արդէն... Յ, կը ցանկանայի, որ գարձեալ կրկնուէին տարիները, ինչպէս որ եկան ու անցան, միեւնոյն բնկերներով, միեւնոյն ուսուցիչներով, ու մենք դարձեալ սկսէինք առաջին դատարանից...

Դրախտից դուրս արտաքսուող առաջին նախամարդու այս տխրութիւնը քե՞զ էլ վարակեց արդեօք, երբ դու դարձար եւ ասացիր ինձ.

— Բաժանուել, ամէն դէպքում չի նշանակում ընդմիշտ հեռանալ: Յիշիր Մեթերլինկի դասը. «Մեռեալներ պիտի չլինէին այս աշխարհում, եթէ մենք յիշել իմանայինք...»: Անցեալը կենդանի պահելու միջոցը յուշերով ու յիշատակներով ապրելն է...:

— Բայց ես ի՞նչ ունեմ յիշելու, ի՞նչ ես թողնում ինձ, որ յիշեմ քեզ — բացականչեցի յանկարծ:

— Անհող կաց, — ձայնեցիր դու շէնչող ողևորութեամբ, — եթէ ցանկանաս յիշել, վեր կաց ու Կոմիտաս երգիր, «Հորովել» կանչիր եւ կամ «Հայաստան, երկիր դրախտավայր»: Կանգնիր ու Դուրեան արտասանիր, Վարուժանից մի կտոր եւ կամ Թուրանեանի «Հէյ, հիմ ճանօթները»: Դարձիր պատին ու թուրանական մի խնդիր լուծիր եւ կամ աշխարհադրութիւնից մի դաս պատմիր: Յայց տուր օրինակ Թրանսիան, քո շատ սիրած երկիրը, նշիր սահմանները՝ հիւսիսից, յետոյ հարաւից, արեւելքից, յետոյ արեւմուտքից: Մտող դիր Փարիզի վրայ ու կանց առ: Դարձիր ու Բօդէյն արտասանիր: «Ես սիրում եմ ամպերը, ամպերը, կրաշալի ամպերը»: Արտասանիր բարձր ձայնով, բզակելով ու թող քո ձայնից թնդան ձեր տան տաստաղն ու պատերը: Բզակիր ասում եմ, որովհետեւ ճանապարհում հեռացած կարաւանի ետեւից բզակում են...: Բզակիր սրտիդ ամբողջ ցաւով ու կարօտով: Մենք յայնժամ պիտի լսենք, ուր որ էլ լինենք, ու թուշունի թեւեր ասած պիտի թռչենք ու զսնք իրարու մօտ...:

Այլ պահին աչքերս լցունէ կին արտասուքներով ու կուրծքս հեռում էր գտաւում հեկեկոցից : Իսկ իսկոյն վեր թուար քո նստած աթոռից :

— Դէ, շատ մի յուսահատուիր, վեր կայ, սուն գնանք...

Ես այդ պահին, թեւերս կարկատելով՝ պողոտային ձայնով դիմեցի քեզ :

— Դէ, եկ, մի անգամ համբուրիր ինձ, կեանքում մի անգամ դոնէ, սրպէս ամենաթանկ յիշատակ...

Իսկ շփոթուեցիր յանկարծ : Վարանած կզնիկի ողբն աջ ու ձախ նայեցիր դատարկ բնութեցոտրահում, շիմանալով ի՞նչ անել :

— Դէ, եկ, մի՛ ուշանայ, չէ՞ որ հաշտուող մարդիկ համբուրւում են...

Եւ ահա արտալ, շատ արտալ, մի ակնթարթից աւելի արտալ դուրսով խոնարհեցիր ու շրթունքներդ հպուեցին իմ աչքերին ու ետ փախար...

Դ.

Կեանքս շուտով մեր ուղիները բաժանեց իրարից : Կեանքը նման չեղաւ գպրոցին եւ գպրոցում մեր սովորած ճշմարտութիւնները սուտ գուրս եկան կեանքում : Ամէն փսեմ ու դեկեցիկ բան անցի տուեց մի ուրիշ բանի հզօր իշխանութեան, որ կոչուում էր՝ ԻՄԱՄ :

Իսկ արժանացար քո երազին : Իսկ մտար բարձրագոյն գպրոց ու ուսումդ շարունակեցիր : Մինչ ինձ համար բարձրագոյն ուսումը յաւերժօրէն փակ մի կախարդական դղեակ մնաց, որի գեղեցիկ շէնքերին այցելութեան էի դնում յաճախ հետուից դիտելու եւ զմայլելու համար բարձր յարկերի վերայ բացուած ընդարձակ սրահներին մեծ ու լայն լուսամուտները, որոնք բազմախորհուրդ հմայքով շողջուրում էին կապոյտ երկնակամարի ճառագայթող արեւի տակ :

Իսկ իմացա՞ր արդեօք, որ այդ ժամանակ եւ փողոցներն ընկած՝ արհեստից արհեստ թափառող մի թշուառական էի դարձել : Ինչպիսի փախով ու տագնապով էի եւ խոյս տայիս քեզանից ու ճանապարհս փոխում, երբ հետուից նկատում էի քեզ, որպէսզի ինձ չհանդիպէիր իմ մերկ խեղճութեան մէջ...

Բայց եւ չէի հանդուրժում, չէի հաշտուում բնաւ մեր բախտի միջեւ ընկած այս անհաւատարմութեան հետ : Ես ընդդիմեցի : Երիտասարդութիւնը չի սիրում պարտուել, որքան էլ նրա երազը իր կարողութիւններից աւելի բարձր լինի : «Կեանքս պայծար է» սովորեցրել էին գպրոցում, եւ ահա, ինձ էլ վիճակուած էր պայծար : Ես բնկայ կեանքի ամենատարբին յատակները ու քայլիցի ամենափշառ ճանապարհներից : Կոտոշ կոտոշի սղորեցի եւ կեանքի հետ՝ ինչպէս կատաղած մի ցուլի գէմ : Չարշարանքների դժնեղոյն անսակներից կրեցի եւ, սրանց մէջ մէկ ուրիշը յուսահատութիւնից ոճրագործ կարող էր դառնալ եւ կամ անձնատպան... : Բայց ինչ փոյթ : Իմ սրտում քո սէրն էր եւ իմ աչքերում քո անսիրը, ինչպէս լուսաւոր բարձունքների մի երազ : Ես ձգտում էի դէպի քեզ, ինչպէս փոթորկաւ ծովում բնկած զժրախտ նաւարկեկալը դիշխրուայ փարոսին : Իսկ չդիտես, թէ ինչպէս ցերեկուայ տառագալից աշխատանքից յետոյ անքուն դիշխրներ էի լուսացնում դրքերի ու

Թերթերի վրայ : Երբեմն հանդատի ամբողջ օրեր տաժանագին տքնութիւններ՝ դրսւորաններում եւ ընթերցարանների մէջ, երբ զրտում դուարձութիւն էր ու վայելք :

Բայց ոնցան ասա յամատ աշխատանքի եւ ընթերցումների մի քանի տարիներ : Եւ մի օր էլ զգայի, որ Լա ստի եմ կանգնել ապաքինուած այն մարդու նման, որ իր երակներում թարմ ուժ եւ սոնկրում կարողութիւն է զգում : Փամանակը աշխատանքի լատագոյն վարձատրիչն է : Ես իմ «Ինքնաշխատութեան դպրոցում» աւելի առաջ էի զնայել, քան բարձրագոյն ուսման բախտաւոր ընտրեալները : Ես թողեցի արհեստից արհեստ ունայն թափառումները եւ վերադարձայ աջակց, որակից բաժանուել էինք : Ես ընտրեցի ուսուցչութիւնը եւ վերադարձայ դպրոցական կեանքին . . . :

Ես այդ ժամանակ ցանկացայ քեզ երկրորդ նամակը գրել : Բայց չգրեցի : Իրա ժոխարէն Լա մի բանաստեղծութիւն գրեցի : Այդ երկրորդը, երրորդը, չորրորդը . . . : Յանկացայ դրանք քեզ ուղարկել : Բայց չուղարկեցի : Վախեցայ, որ մի օր ինձ կը կանգնեցնես ճանապարհում ու կը զոտա վրաս . . .

— Ի՞նչ է, հիմա էլ բանաստեղծութիւններ . . .

Այո, ես վախեցայ ու չուղարկեցի : Այլ ուղարկեցի թերթերին : Մտածեցի, որ հրատարակով եղած խոստովանութիւնը պատկանեալ հասցէ չունի : Եւ այնուհետեւ, Լա սկսեցի բանաստեղծութիւններ գրել յայր թերթերին : Ինչ դատարկ եւ ունայնամիտ է մարդկային աշխարհը . . . : Մարդիկ սկսեցին ինձ արժէք տալ : Երէկուայ աննշանս նրանց աչքին հիմա «Նշանաւոր» սկսեց երեւալ . . . : Օ, ինչքան մեծ կարեւորութիւն ունէին կեանքում հանդամանքները . . . :

Մի օր, ժողովում գէ՛մ գիմաց հանդիպեցինք իրարու : Ես ուղեցի խոյս տալ քեզանից : Բայց դու ուղեցի կանգնեցի բայլերիս առջեւ ու փակեցիր ճանապարհը :

— Կարծում եմ այսքան անսիրտ ու զտողամիտ լինել, երբեք չի ստացում քեզ, — տասցիք արտում ու քաղցր ժպտով, — այս քանիերո՞ք սնդամն է, որ ինձ տեսնելիս փախչում ես, կարծում ես չե՞մ նկատում, մի ջերմ բարեւ եւ մի քանի հաճելի խօսք կարձեմ շատ թանկ չեն նստի քո վրայ : Օ, ինչքա՛ն օտարացել ես դու քեզ, Հրաչիկ, ինչքան դու քեզ նման չլինես . . .

Երկար ժամանակ քեզ այդքան մօտիկից չէի տեսել : Մերտա այդ պահին ճմլակց :

. . . Բայց ես չզլտեմ, արդե՞ք ջերմ բարեւի ու հաճելի զրոյցի իրաւունք ունեմ ես . . . Եւ արդե՞ք գրանք հիմա ուրիշին չեն պատկանում, եւ ես քեզ համար լոկ մի դրսեցի չե՞մ արգեօք . . .

— Ինչե՛ր ես մտածում, Հրաչիկ, ինչե՛ր ես խօսում . . . դու ինձ համար մեր գոտարանի «Հսկայ Ծուռիկ»ն ես, «Միամիտ Հերդիլեդ» . . .

— Յաւս մի խորացնի, ես արդէն գիտեմ, թէ որքան ետական են այս աշխարհի զգացմանքները, որքան անձնապաշտ . . . ես ինչեր չքաշեցի, եւ դու մի անգամ իսկ չբարեհաճեցիր ինձ մօտենալ . . . :

— Չկարծես, — տասցիք՝ ինձ քաշելով պատի տակ մի անկիւն, — ես հեռուից միշտ հետեւել եմ քեզ . . . Գիտեմ, քո բախար փայլուն չեղաւ, ինչ արած . . . Բայց ես չէի մօտենում քեզ, չէի ուզում աւելի խորացնել քո տառապանքը . . . Ես իմ սրտում քեզ համար յաջողութեան մաղթանքներ եմ ունեցել միշտ . . . եւ ես զիտէի, ես մտաս էի, որ դու քո բախարի վեր կը քարձրանաս մի օր . . . :

Այդ պահին երկնքից իջած մի լուսաւոր կակ աւելի գեղեցիկ, աւելի

մաքուր, աւելի պաշտելի չէր կարող լինել: Քո ձայնը հնչում էր ականջիս երկնային մեղեգու մի քաղցրալուր երաժշտութեամբ: Ես վերացած էի...

— Գրե՛ս ինչ եմ մտածում քո մասին, — շարունակեցիր դու, — քո վերջնական փրկութիւնը Հայաստանն է...: Եւտով Հայրենադարձութիւնն սկսուելու է: Աշխատիր առաջին իսկ կարաւանով հայրենիք գնալ: Հայրենիքում դու կը ստանաս ե՛ւ ուսում, ե՛ւ աշխատանք, ե՛ւ պատիւ:

— Կարող ես վտահ լինել, որ արդէն Հայաստանի համալսարանի ուսանող եմ, — պատասխանեցի ու ծոցազրպանիցս հանեցի իմ դիմում-նամակի այն պատասխանը, որ կնիքով եւ ստորագրութեամբ ինձ յայտնուած էր համալսարանի ուսանող ընդունուելուս մասին:

— Օ, անչափ ուրախ եմ, — բացականչեցիր անկեղծ ցնծութեամբ:

— Իսկ դու, դու, ի՞նչ ես մտածում այդ ուղղութեամբ, — հարցրեցի ես:

— Ինչ պէտք է մտածեմ, բոլորս ենք գնալու, մեր վերջին կայանը Հայաստանն է, պէտք է բոլորս այնտեղ հաւաքուենք...

Ե.

Ես հենց առաջին իսկ կարաւանով եկայ Հայաստան: Կարաւաններով Հայաստան էին գալիս աշխարհի չորս ծագերից: Ես դնում էի դիմաւորելու ամէն մի նոր ժամանակ կարաւան՝ քեզ փնտռելու համար: Բայց միշտ էլ յուսախար ետ էի վերադառնում: Եւ մի օր էլ ահա կարաւանները կանդ առին: Երկար տարիների համար վերջնականապէս: Այս հարկադրական անջատումը մեզ բաժանեց: Ես գայրացայ, բարկացայ, կատաղեցի: Ես ուզեցի քեզ երկրորդ նամակը դրել: Յիշողութեան պահերին սուր ցաւի պէս մղկատւ էր սիրտս: Բայց չգրեցի...: Ի՞նչ օգուտ: Տարիներ թաւալուեցին անորոշ սպասումով: Մի օր էլ լսեցի, որ ամուսնացել ես... Իրա վշտից մահանալու չափ կը հիւանդանայի ես, եթէ մօտ լինէի: Այս դէպքում արդէն հեռաւորութիւնը բարեբախտ եղաւ ինձ համար: Աշխարհի օրէնքներով ինձանից խլում էր քեզ երազելու իրաւունքը, բայց հոգու համար՝ ի՞նչ փոյթ...: Տարիներ նորից թաւալուեցին, եւ նոր կարաւաններ վերսկսեցին իրենց երթուղին հեռաւոր հորիզոններից դէպի հայրենիքի ափերը: Այս անգամ շատ մեծ յոյս ունէի, որ կը գաս, ահա, երեխաներիդ ձեռքից բռնած, որոնք անպայման քեզ շատ նման կը լինեն, եւ կ'իջնես դնացքի աստիճաններից վար: Բայց, ի դուր...: Մի օր էլ իմացայ, որ դու տեղափոխուել ու դնացել ես Ամերիկա, Լոս-Անջելոս, որպէս քո վերջին կայանը...

Հիմա բազմաթիւ տարակոյսներից ցաւերն ունեմ սրտուս: Քեզ վերըստին տեսնելու յոյսը ամբողջ կորցնելուց յետոյ, տանջուած եմ՝ հասկանալու այս յանկարծակի փոփոխութեան դազանիքը:

«Մեր վերջին կայանը Հայաստանն է», ասում էիր, եւ երբեք մտքից չէր անցնում, որ քո վերջին կայանը Ամերիկան կը լինէր...: Քեզ ի՞նչ պատահեց, ի՞նչ ուժեր ստիպեցին քեզ այդ քայլն առնել: Ամուսնուղ փոփա՞քն էր, բայց ես գիտեմ, որ քսան հազար օժիտ տանող աղջկայ ամուսինը չի կարող հրամայել... Քո հասունացումն ու խելահասութիւնը հերքեցի՞ն արդեօք:

քո հին երազները եւ նոր ճշմարտութիւնները առ սչի՞նչ յայտարարեցին քո երբեմնի համոզումները: Ինչպէ՞ս թոյլ տուեցիր, որ քո պատրանքները խլին քեզանից: Դու դիտե՞ս արդեօք, որ մինչեւ այսօր ես հին աղան եմ մնացել՝ մեր դասարանի միամիտ «Հերդելըս»ը կամ «Հսկայ ձուտիկ»ը: Միեւնոյն սէրով, միեւնոյն հաւատքով ու երազներով: Ես քեզանից հեռու, քեզ եմ որոնել: Երբ աղջիկներ դնուակ են խաղում, ինձ կը թուայ, թէ դու ես ահա նրանց մէջ: Երբ երգում կամ արտասանում են, ինձ կը թուայ, որ քո ձայնն է հնչում, երբ ժպտում են, կը թուայ, թէ նրանց աչքերը քաղցրանում են ու լոյսի մի լայնածիր ալիք տարածւում է նրանց ամբողջ դէմքի վրայ...

Ահա քեզ իմ այս երկրորդ նամակը: Հիմա երեսուն տարիների մի հըսկայ անջրպետ մեզ բաժանում է իրարից ու անսահման ծովերի եւ ովկիանոսների տարածութիւններ կան մեր միջեւ: Այնքան հեռուոր երկու աշխարհամաս, որ մէկում, ասում են, երբ դիչեր է, միւսում ցերեկ է լինում, երբ մէկում մութն է իջնում, միւսում արշալոյսն է բացւում: Բայց դու ասա՛ ինձ հիմա, ասա՛, թէ ինչպէ՞ս ես հաշտեցնում քո հոգու հին կարօտները այդ հեռուոր աշխարհի հեռուոր ու օտար բարձրի հետ: Ո՛հ, ես դիտեմ, որ դու կամիտաս պիտի երգես, «Հորովիլ» պիտի կանչես կամ «Կալ արա, եգօ ջան», բայց քո ոտների սակ հայրենի դաշտերն ու անդտասանները պիտի չտարածւեն: Դու Դուրեան պիտի արտասանես, բայց նրա ցաւը պիտի չօրօրի քեզ: Դու Վարուժան պիտի ողկկոչես, բայց մեր հօտաղների ու ծաղիկների բուրմոռնքով պիտի չարբենաս, եւ վերջապէս՝ Թումանեանի «Հէյ, հիմ ծանօթներ»ը արտասանելիս, մեր վեհափառ լեռները պիտի չցցուեն քո աչքերի դիմաց...

Հիմա ի՞նչ տեսմ քեզ: Մի՞թէ սոռոյլ մահուան յայտանշաններ չեն, երբ յիշատակները թաւամում են ու յիշողութիւնները մոռացւում...:

Գ. ՍԻՀՈՒՆ

Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

ՅՈՒՉՈՒՆՆԵՐԸ ՊԱՍՏԱՌԻՆ ՎՐԱՅ

Կղզիներ, ուր
 քոչումներ կան. ուրիշ ոչինչ:
 Ձայներն իրենց՝ նիչեր վայրի
 ունկերուն մեր,
 հաւանաբար հոն կը պատմեն
 կարօտներու մասին ազու
 եւ երկինքի լռութեան մէջ,
 գերանուան մղաններու:
 Դեռ փետուրներ տօնահանդէս կը սարքեն.
 կտուցներ մեծ, տարօրինակ
 կ'որսան ձուկեր
 (շունչեր օտար երկրամասէն):

Այլանդակ ու մագնիսական
 խնողուձր մարմիններու՝
 ծածկոզ կղզին՝
 (ինչպէս ահող համահարակ)՝
 կը յիշեցնէ
 բազմութիւնը բազմներու,
 մեքենական արագ հեւքը անցորդներու...
 Սակայն այնտեղ,
 քոչումները բեւեռային,
 պատառախն վրայ՝
 խուսափած ժանտ որդայքէն

կ'ազազակեն ու կը վագեն
 լուռ ծովեզրին...

ՀՈՎԷ ՄԱՐԴԻԿ

Այստեղ հովէ մարդիկն են.
 աչքերուն մէջ իրենց կապոյտ
 տխրութիւն կայ անպատմելի:

Կը դեգերին մեր շուրջ անձայն
 կամ կը հազան,
 քերք կը կարգան,
 ձեւացներով, քէ լրջօրէն գրադած են

կանչելով մեր ուշադրութեան
 գոյութիւնը իրենց անգոյն:
 Իսկ երբ արդէն շատ տարուած ենք՝

մեր խոհերուն, գործերուն մէջ,
մատնեքով թռչի ու քափանցիկ
մեր մագերը կը խառնշուկեն
ու կը փախչին:

Մ Ա Ր Դ Ի Կ

Մարդիկ, որոնք
գնահատելի գիտցած են
եւ արժեւորած
օրերն արեւոտ:

Մարդիկ, որոնք
անաւօքօրէն
կրցած են կայնիլ
երէցներուն դէմ (անցեալին)
եւ հանդարտ ծիծիլ:

Մարդիկ, որոնք
չեն ամչցած արտայայտել
գգացումները իրենց՝
փարթամ կիներուն ու աղջիկներուն:

Մարդիկ, որոնք
արկածալի նամբաներէն
չեն խուսափած:
Ձեն նուաճուած...

Հանգարտօրէն հետեւած են
հեռացումին՝ կիներուն,
մահացումին՝ ընկերներու
եւ քշամիներու հայհոյանքներուն:

Ու աշխատանքին գոյներով հարուստ
օր մը արեւոտ,
լուս սեւեռած են նայուածքը իրենց
շեշտակիօրէն
մահուան աչքերուն
եւ ժպտացած են...

Ջ Ե Ր Մ Ո Ւ Թ Ի Ի Ն 40°

Թող սիրուելիս դէմքը մօտեմայ
կոտտացող մարմնիս:
Այրող կողերս զինք տեսնեն կրկին

— Տարածութիւնը մեզ բաժնող,
 Բանդուի, իյնայ —
 Կապտածորան՝ ինչպէս գիշեր,
 թող մօտենայ սիրուիս
 Եւ ցնցուղուի
 ցանկութեան բոլր ծաղիկներուն,
 չորցած, պապակ շրթունքներուն:
 Թող թարմ տերեւներ խառնուին գիշերին,
 ու ըզճանքները թրթռացող
 ցուրերուն մէջ անհետանան.
 Ժլարձակուող արմատներուն ճայնը չգայ...
 Սիրուիս իր մարմինին մէջ,
 իբրեւ գիշեր կամ աւազան՝
 այս բոլորը պիտի լուծէ,
 եւ ցող ինչպէս առաւօտեան
 պիտի սփռուի
 մարմնիս տարածքին:

ՀՈՍԱՆՔԻՆ ՄԷՋ

Անս կրկին
 ամբոխին հետ
 կայարանին մէջ կը սպասեմք:
 Մեր շուրջ, հերմակ
 մեռելային դէմքեր են.
 հոյնիակ շարքը չի կրնար
 ծածկել մարող հայուածքները:
 Իսկ ձուկերը սենեակներուն մէջ կը հատին:

Կը յիշե՞ս *Ռոման*
 Ֆէլլինիի.
 իբրեւ փապուզի բացուելիք համբուն՝
 հնադարեան սրահը՝ ուր
 իւզաներկերը պատերուն
 դուրսէն խուժող հոսանքին տակ
 վայրկեհապէս սրբուեցան:

Ոչ ոք բան մը կրնար ընել...

Իսկ դուն, որ միշտ
 այս կողմերը տեղ մըն էիր,
 երբ էեզ գտայ
 հոսանքին մէջ դուրսէն եկած,
 Ֆէլլինիի անթիւքները յիշեցնող
 ճկար ինչպէս
 գունաթափած էիր արդէն:

«ԿՈՒՏ ՊԱՅ, ՄԱՅ ԼԱՎ»...

— Կուտ սրայ, մայ լավ...

Օդին մէջ արձակուած փամփուշտի նման Սամիրի այս բառերը մխրճուեցան նրբանցփի գորշ պատերուն մէջ: Պաղ ու խոնաւ շունչ մը կար հոն: Պատերէն կախուած լուսանկարները՝ ընտանի անասուններու, թռչուններու, ծաղիկներու մտերմութեամբ յարդուն, նաեւ մանուկներու՝ այդ բոլորին հետ գուարնացող, կը փորձէին ջերմացնել ցուրտ մըքնոլորտը:

Նրբանցփէն կ'անցնէի, երբ այդ բառերը լսեցի: Զծիծաղեցայ, բայց հաւանաբար ծիծաղեցան իրենք՝ պատէն կախուած նկարները, պաղ պատկերները, որոնք եւս կրնային վկայել, թէ Սամիր անգլերէն չէր գիտեր եւ երբեք այդքան տխուր արտայայտութիւն չէր ունեցած:

Շաբաթը քանի մը անգամ կ'անցնէի այդ նրբանցփէն ու հոն անպայման կը հանդիպէի Սամիրին: Շատ տարբերութիւն կայ սալոնային, սենեկային ու նրբանցփային հանդիպումներու միջեւ: Հասանցփային բառերուն ձգած տպաւորութեան կը նմանին նրբանցփային հանդիպումները, ուր ոչ թէ բառեր կ'արտաբերես, զգացումներ կ'արտայայտես, այլ՝ հագիւ շփոթ նայուածքներ կամ երկմիտ ժպիտներ: Բայց Սամիրի ժպիտները երկմիտ չէին, այլ՝ յստակ: Նոյնիսկ կրնար կատակել այդ ակնթարթային ընդունումն: Անլուրջ բառեր սկսէի, հոգ չէ թէ աշակերտները լսէին: Այդ էր իր հանդիմանքը. արձակ էին իր սիրտն ու տրամադրութիւնը:

Երբ զրօսանքի պահերուն ուսուցչարան մտնէի, հոն կը գտնէի զինք մտախօսի դիրքով. բարձրաձայն կ'արտասա-

նէր իր գրած սիրային բանաստեղծութիւնները:

Պստոնակիցները կը գուարնացին ու հրանցուած սուրնին հետ երիտասարդին բանաստեղծութիւնները կ'արբեցնէին ներկաները երիտասարդական երազներով:

— Սիրեցի՞ք բանաստեղծութիւններս. երէկ գիշեր գրեցի:

Բուքսու հաւանութիւն կու տայինք մեր ժպիտներով կամ ծիծաղով, բացի՝ ըստէ՞ր Մուսիքէն, վաթսուներկ պահպանակալն ուսուցիչը, որ «խայտառակութիւն» կ'որակէր Սամիրի «բաց» ստեղծագործութիւնները ու զայն կը սաստեր հայրական ոգով:

— Լո՛ւ՛, օրիորդէն ամչցիր...:

Սամիրի բանաստեղծութիւնները ձօնուած կ'ըլլային այս կամ այն աղջկան, որոնց ծանօթացած էր եւ կամ պիտի ծանօթանար... մօտ օրէն:

Աղջիկներ շատ կային Սամիրի «գրքպահին» մէջ, թուրքերուն վրայ: Բայց դիւրին չէր կարգալ իր նախասիրութիւնները: Արդեօք ո՞ր մէկ տեսակին վրայ կեդրոնացած էր իր որոշումը: Բայց կարելի՞ էր որոշումի մասին խօսիլ Սամիրի հետ: ՈՐՈՇՈՒՄԸ գլխաւոր անորոշութեան տանող ներմակ մարման էր, ուր կը հալէր ամէն տենչ, ինչպէս արեւուն այրող մատապայթները արծաթեայ առակին սպիտակ խորհարդին մէջ:

**

Դասապահերու վախճանին, անցնելով միշտ այդ սաք ու պաղ նրբանցփէն, Սամիր կը յաջողէր քանի մը գուարնացնել սպիտակ խորհարդին ակնուշխարով:

— Այսօր իսալուսիսին հետ ժամադրուած եմ...

Կամ՝

— Գեղեցիկ կտոր մը ձեռք անցուցի:

Իսկ ես կարծես չէի լսեր իր ըսածները ու կը շտապէի իրմէ խնդրել, որ կէսօրին զիս իրեն հետ տանի ձիւնի:

Շարքը բանի մը անգամ ես կը վայելէի Սամիրի ինքնաշարժին քարիքները, Զմեհա-ձիւնի համբուն երկարութիւնը կտրելու համար: Քսան վայրկեաննոց համբարդութեան ընթացքին՝ Սամիր ինչե՞ր չէր պատմեր իր սիրարկածներուն ու սիրուիկներուն մասին: Օր մը՝ իսալուսի մը կ'ըլլար փնտռուած տեղալիք, օր մը՝ հեղինակի մը, օր մը՝ լիբանուհի մը: Անգամ մը հայուհիի մը անունն ալ տուաւ, բայց զգաց... հոր անդրադարձաւ, որ հայ էի եւ կրնայի հանչնալ անունին տէրը: Այդքան համարձակ ու ազատամիտ կարծուած երիտասարդը զարմանալիօրէն պահել կ'ուզէր իր «գաղտնիքը»:

— Մականունը չեմ ըսեր, — ըսաւ ու միտքարուեցաւ, որ «կատարելապէս» չհանչցայ հայուհին:

Յետոյ սկսաւ ինքնաքաղաքացումի.

— Երիտասարդ եմ... 26 տարեկան եմ... սիրելու ժամանակս է... գէ՞շ կ'ընեմ, աղջիկները կ'ուրախացնեմ... ծուռ մի նայիր ինծի... կէս համբան կը ձգեմ քեզ...

Ու կը խնդար, զատկէր կը զետեղէր ինքնաշարժի փիքափին մէջ: Ընդհանրապէս Փրանսերէն երգերուն կ'երթար իր նախասիրութիւնը. Ագնաուր, Միրէյ Մաթիւ, Տալիսա:

Ունկնդրելով երգերը կը սկսէր փառաբանել իր հանչցած աղջիկները, մա՛նաւանկ վերջինը, մտնելով միւսները, հայուհին ալ... Մէջ ընդ մէջ կը կրկնէր վերջին բանաստեղծութիւնը, ձեռքերը կը հեռացնէր դեկէն, կը քարճարցնէր վեր, հանդիսաւոր, գունաւոր պիտակներ փակցնելով բաներուն:

— Ձեռքե՛րդ, հա՛ Սամիր, ձորը պիտի գլորուիմք...

— Սիրեցի՞ր այս բանաստեղծութիւ-

նրս. երէկ գիշեր գրեցի: Զոյնացած էի, անպիտանը ժամապրութեան չեկաւ: Կը սիրէ զիս զոյնացնել: Երեք ժամ օթոյիս մէջ սպասեցի ձիւնիի հրապարակին վերայ:

— Ո՞վ, հայուհի՞ն, իսալուսի՞ն...

Ուրիշ օր մը, դարձեալ բառն վայրկեաննոց մեր համբարդութեան ընթացքին՝ կը հաղորդէր իսալուսիէն խզուած ըլլալը, որովհետեւ անոր ամուսինը վերադարձած էր վաւայածէն: Կը ծիծաղէր կուշտ, կը ծաղրէր կիները, կը փառաբանէր կեանքը ու կանգ կ'առնէր «նոր կտորի» մը վրայ, յետոյ յանկարծ կը լըջանար ու, գաղտնիք մը հաղորդողի նման՝ ցած ձայնով կ'ըսէր.

— Ասիկա վերջինս է. պիտի չփոխեմ... հոր ծանօթացայ... իրմէ լարը չեմ կրնար գտնել...

Վերջինը, վերջաւորութիւնը, վերջակէտը: Ու եթէ «կտորները» այդպէս արագ վերջանան ու հասնին, ու եթէ «փոխումները» այդպէս շուտ մաշին կամ չկարենան համաձայնիլ, շաղուիլ պտուտակներուն հետ... սկսին դուրս, դէպի դուրս նետուիլ... Ամբողջ կեանք «կտորներու» միացում է, շողկապում, ներգաշնակում եւ՝ հակառակը: Պարզապէս պտուտակային պտոյտով, պրկումով... միայն թէ՛ ժամգերը իրենց դեղին ակունքերով չկրծեն կայծերը պտուտակներուն, միայն թէ՛ չսպառէր անոնց «իւրը» ու չցամփէր կորովը շաղուելու, ու չտափակնային, վերածուելով երկաթի անշունչ կտորի...:

**

Կեանքը վարդագոյն էր Սամիրին համար: Ինքնաշարժ ունէր, բանաստեղծութիւն գրել գիտէր, քերթերու մէջ երբեմն սիւնակ մըն ալ կը տրամադրէին իրեն, դրամ ալ կը շահէր ու, մա՛նաւանդ՝ շատ աղջիկներ ունէր, շատ «կտորներ», բայց չէր կրնար այդ կտորներէն մեկուն կապուիլ, շաղուիլ, պտուտակուիլ:

Կարծես ա՛լ հոգ չունէր: Ինչո՞ւ ու-

նենար. աչքերը կը փառագայթէին, գարնանային շողեր մտած էին հոն, կամ աւելի միշտ՝ այդ շողերը հոնկէ ծնունդ կ'առնէին: Մեր շրջապատը որքան ալ մըշուշ ու անձրեւ ըլլար, ինքնաշարժէն ներս յարիտեմական գարունն էր: Կարծարք ներքին մշուշէն գերծ մնայն էր: Ներքին ամպն է, որ կը խաւարէ ամէն խանդ:

...Եւ ինքնաշարժը կը սուրար քեքեւ, շատ արագ: Նայնիսկ Սամիր չէր նայեր փամբուն ուղղութեան: Կարծես ինք չէր դեկը բռնողը, այլ՝ այդպէս, ինքնաշարժը կ'ուղղուէր եւ ինք՝ անոր հետեւէն...

Շրջապատի մշուշը ամպի կը նմանէր: Ու մենք կը քոչէինք քոչունի քեւերով, եթերին մէջ: Կը լսուէին ֆստեքէն հոսող երգերուն հասաչանքները, սիրոյ կանչերը ու Սամիրին «խառնակ» խօսակցութիւնը, որ այդ օր կը վերջանար «կուտ պայ, մայ լավ»ով:

— Տեմիս Ռուսսը կը սիրե՞ս...

— Մասնաւոր նախասիրութիւն մը չունիմ իրեն հանդէպ:

— Բայց սքանչելի է. այո՞...

— Ինչո՞ւ սքանչելի, խեղդուկ ձայն մըն է, բայց կարելի է նկատել ինքնաբոյն:

— Ինչ որ ինքնաբոյն է, սքանչելի է, համաձայն ես:

Սամիրին մտը անգիտակցաբար գետեղեց ֆստերը խոռոչին մէջ, ուրկէ Տեմիս Ռուսսու պռոսաց ֆանիերորդ անգամ ըլլալով.

«Կուտ պայ, մայ լավ»:

— Աղուո՞ր է այս երգը:

— Այսինքն... մենք աւելի ազուար երգեր ունինք:

— Ի՞նչ կը տատամսիս. ըսէ՛ սքանչելի... լաւ մտիկ ըրէ քատերը ու քաջատրէ, ի՞նչ կ'ըսէ:

Սամիր մտաով կը երէ կոնակը, կը լսեցնէ երգիչը, յետոյ կրկին հարուած մը եւ, դարձեալ՝ «Կուտ պայ, մայ լավ»:

Կ'ունկնդրենք լուս: Կը ջանամ ֆա-

նի մը սեղմ նախադասութեան վերածել երգիչին ապրումները, գոնէ իմանալու սա «Կուտ պայ, մայ լավ»ին միտք բանին: Խակ Սամիր մանրամասնութիւններ կու տայ.

— Ես այս երգիչը չէի սիրեր, բայց այսօր սկսայ սիրել:

— Ինչո՞ւ այսօր եւ ոչ երէկ կամ անցեալ շաբաթ:

— Որովհետեւ ինք շատ կը սիրէր այս երգը:

— Խաւուռի՞ն...

— Ի՞նչ խաւուռի... խե՛րն եմ անիծեր խաւուռիին... Նինա՞ն...

Սամիրի ձայնը խեղդուեցաւ: Տեմիս Ռուսսու կը կրկնէր իր յանկերգը, մինչ ինքնաշարժը կ'երբարար աչ ու ձայս: Թեքեւ քեքուս մը՝ ձորը պիտի գլտորէինք: Իր կողմը նայեցայ. Սամիր կուլար...

— Տախիլաք, ես՞ Սամիր... ձորին ձայնն ենք...

Մանուկներուն եւ կիներուն առանձնաշնորհումը եղող սա լացը, սա աղի հեղուկը երիտասարդի մը աչքերուն մէջ: Բայց ինչո՞ւ կու լայ: Զգայուն ըլլալու ցուցանի՞չ է արդեօք:

— Երէկ գիշեր ժամադրուած էի հետար. չեկաւ, ջղայնացայ: Քշեցի դէպի իրենց տունը: Զրայնութեմէս այնքան արագ էշեցի, որ երկու անգամ բախուս ունեցայ ինքնաշարժներու հետ: Անոնցմէ մէկուն ա'յնքան ուժգին զարկի, որ շրջեցաւ: Հագլու փախայ ու կրցայ օճիքս ազատել: Երէ տեսնայի... Այսօր պիտի քաղեն Նինան...

— Նինա՞ն: Ո՞ր մէկն է այս:

— Այդ, ըսածս... վերջինը... գեղեցկուհին... ֆասն տարեկան էր դեռ... հայրեմակցուհիս էր... ինքնաշարժի արկածով մեռած է՝ կ'ըսեն: Իր ինքնաշարժով բախում մը ունեցած է: Վարորդը փախած է...

Մեռած աղջիկէն աւելի մտածումս կ'երբայ զարնող, սպաննող ու փախչող մարդուն, մարդերուն: Կ'ուզէի ըսել իրեն. ես Սամիր, հոգ չէ, կեանքը գարնելու եւ փախչելու խող մըն է: Ով որ

արագ փախչի, կը փրկուի: Վա՛յ գարնրուողին, մեռնողին... Սակայն ոչինչ ըսի:

Ինք կը շարունակէր.

— Ես իրեն ստրվեցուցած էի էշել, նոր սկսած էր էշել, երանի չստրվեցընէի... Առջինիս իր յուզարկաւորութեան պիտի չկրնամ երթալ, առջինիս քանի մը տող պիտի չկրնամ գրել իր մասին... պիտի ամուսնանայինք ամբան...

Սամիրի մատը կրկին գնաց Տեմիս Բուսուսին, որ կը ճչար. «Կուտ պայ, մայ լավ»:

— Բայց բացատրէ, ի՞նչ կ'ըսէ այս երգիչը «Կուտ պայ»էն ետք:

— Կ'ըսէ... Կ'ըսէ ինչ որ կ'ըսեն բոլոր փախչող տղաները: Օգային բաներ: «Կուտ պայ»էն ետք ըսելիք ոչինչ կը մընայ, Սամիր: Գո՛ւն ալ գնա վերջին «Կուտ պայ»դ քսէ Նինային:

Տղան լուռ էր: Իսկ ես հետզհետէ կ'ընտելանայի երգիչին ձայնին:

Ժամացոյցիս նայեցայ. ժամ մը անցեր էր ու տակաւին ձիւնի չէին հասած: Վերջին բլուրներուն վերջին դարձումէն ներուն վրայ կ'երեքայինք

Ծովը մեր դիմացն էր, այնքան մօտ, կարծես մեր ոտները մխրճած էինք հոն, բայց չէինք հասներ ջուրերուն: Անդրադարձայ, քէ ծովը կապոյտ չէր:

— Ծովը սեւ է, Սամիր:

— Նինային սուգին համար է: Ամբողջ ձիւնին սուգի մէջ է: Իսկ ես յուզարկաւորութեան անգամ պիտի չկարենամ երթալ:

— Ինչո՞ւ, Սամիր, ո՞վ կ'արգիլէ:

— Ինչո՞ւ. ինքզինքս յանցաւոր կը գգամ, որովհետեւ բոլոր նշանները ցայց կու տան, քէ իմ զարկած ինքնաշարժն էր: Գաղտնիքը մեր մէջ. ես սպաննեցի Նինան...

Զարմանալի է մարդ արարածին ներաշխարհը: Խնդացող-կատակող Սամիրը կը բաղդատէի սա մթնցած, խղճահար Սամիրին հետ, որ յուզուիլ ալ գիտէ, արտասուել ալ գիտէ, յանցապարտի ըզգացումով խղճահարուիլ ալ գիտէ: Կը ցաւիմ այդ անծանօթ աղջկան վաղա՛նոյի կեանքին համար: Իսկ սա արեւադարձային երգիչը որքա՛ն կը բռնաբարէ մեր զգացումները: Ինչպէ՛ս կը պարտադրէ ինքզինք, իր հայրենիքէն հեռու տեղ մը, գիւղի մը մէկ անկիւնը, գեղջուկ սրտով բանաստեղծ տղուն հոգիէն ներս, իր քանի մը սովորական քառերով:

— Կեանք է, ես Սամիր, կը պատահի, քեթեւի առ, եղածը եղած է. դուն գնա՛ Նինային յուզարկաւորութեան:

— Ե՞ս, որբագո՞րծը, ներկայ ըլլամ գոհիս քաղումի՞ն:

— Նորութիւն չէ, Սամիր...

Հեռուն, Միջերկրականը սեւ-սեւ կը յօրանցէր: Ալիքէ հիստուած փրփուր-խարիսններէն ներմակ նաւ մը հրաժեշտ կ'ուռնէր: Կարծես Նինային դագաղը ըլլար...

— Կուտ պայ...

ՇԱՀԱՆԴՈՒԵՏ

Փ. Ճ Ե Ր Ա Ն Ե Ա Ն

Մ Ե Ռ Ե Ա Լ Ծ Ո Վ

Պատմութիւնն՝ իր ծովերուն
Այ չէր ցանած տակաւին...

Երբ հինաւորց պատերազմի դաշտին վրայ մէկտեղուած
Հարագատներ բազմագգի՝
Իրենց կտրին գաւակները կ'ողբային՝
Թախառական մը օտար,
Որ ատելութեան ու սիրոյ տարիք չունէր տակաւին,
Տեսաւ մայրերուն արաստուփները վարար
Ու երբ անոնց ծովուն մէջ
Անվերջակէտ իր հայեացքը կաթիլ-կաթիլ սուզուեցաւ՝
Շրթներուն վրայ հողաբոյր կակիծն աշակէս շնջաց.
— Երէկ օտար, արիւնարբու ոտխներ,
Այսօր ծանօթ, սգակիցներ իրարու,
Ստիպեցիք գա՛ւր,
Որ պատմութիւնն իր ծովերուն մէջ ազ ցանէ անագին,
Երբ մարդ սիրոյ, ատելութեան տարիք չունէր տակաւին...

Պ Ի Ղ Ա Տ Ո Ս

Երբ Պիպատոս յոգնատանջ իր սեռերը կը լուար,
Զբամանին մէջ յանկարծ տեսաւ իր դէմքը մուսլի,
Որ օտարի մ'աչփերով զինք անփփիք կը դիտէր...
Ռեստի՝ դողդոջ ասիերով ցօղուեց ջուրը երեսին,
Որ սեփական դիմագիծն իր երբեմնի
Գէթ անգամի մը համար,
Իր աչփերուն ծանօթացնե՛լ կարենար...

Ա Ն Գ Ա Ր Ա

Լայն փողոցներ ուղղածից,
Ուրկէ մարդիկ խուռնամբոխ՝
Քիչ մը ծռած ուտերով,
Մայքէ ի մայք՝ չլուսող մղձաւանջներ կը բաշխեն...

Ու վաղօցներն եզերույ
 Կզմինարբէ մեծ շէնքեր,
 Ռոնցմէ վար քափելով
 Աղանիներ յուսաբեկ՝
 Մուրացկանի բաց արէն
 Հացի փշրանք կը կացեն...

Ա Ն Ի

Թէ ունենայի խոր լսողութիւն,
 Ես փոխ կ'անտէր շրթներդ, Անի՞.
 Ու տառապանքէդ՝ խօսեիրս մտքս՝
 Կը համբուրէի քարերուդ լեզուն:

Թէ ունենայի խոր լսողութիւն,
 Լուրբեանդ մէջ խուլ կը դառնայի,
 Ու կանարին տակ անբակներուդ,
 Ուր կ'երգեն զանգերն ամէն երեկոյ՝
 Ես կը գողնայի ժպիտն Աստուծոյ...

Լ Ճ Ա Կ Ի Մ

Եօք լեռներու մէջ բանտուած՝
 Կռուախնձոր, լնակ իմ.
 Եօք հազար մօր աչքերուն մէջ՝
 Ազի արցունք, լնակ իմ...

Թէ հարցնեն ո՞ւր է խոովքն
 Անբեւոյք ալքերուդ,
 Աչքերու մէջ անմեկնաբան
 Կարիլ մ'արցունք, լնակ իմ...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆՆԱՆ

Կ. Ա Ր Մ Ե Ն Ե Ա Ն

ԿԻԼԻԿԻԱՆ ՄԵՐՆ Է

Երբ փողոցէն քայլենք, միշտ ալ ես քայլ մը առաջ պիտի ըլլամ իրմէ: Այս մէկը չի փոխուիր: Երբեմն ես կը փորձեմ խաղի բերել զինք ու յանկարծ կը պոկուիմ: Նո՛յն բողէին կը դանդաղի նաև ինք. երբեմն կը բարկանամ եւ բացէ ի բաց կը պահանջեմ, որ քովէս քայլ. կանգ կ'առնէ մայթին վրայ, դէմքը կը դարձնէ անդին կեցող Մարտիրոսին ու մտքէն կ'ըսէ՝ սա ինչ խենթի ձեռք ինկանք: Ես յուսահատ կը ժպտիմ. տեղի կու տամ ու նսրէն կը քայլենք: Պահ մը կ'ուզեմ խօսքի բռնել զինք, յուսալով, որ սնըզ-պալարար կը հաւատարի: Չի՛ հաւատարիր: Քալած ստեն չի սիրեր խօսիլ: Միայն իր մէջէն կը խաղարկէ շորս զին:

Տարօրինակ է իր հայրութիւնը իմ վրաս: Ան չուզեց հայր ըլլալ: Հայրութիւնը տուին իրեն դրեթէ բռնի. կի՛նն էր առաջը: Իրենց ամուսնութեան առաջին տարիներուն, մէկը միւսին ետեւէն երեխաներ կը ծնէին եւ ինք չկրցաւ. կտեցնել այս թաւար-զլար բնթացքը. չո՛րս մանչ, երկու աղջիկ. վերջին երկուքը երկուորեակներ էին եւ անոնցմէ մէկը շուտով իմ կինս պիտի բլլար: Գուն եկուր ինձի հարցուր, կ'ըսէր կինը եւ կը սկսէր հին պատմութիւնը ծայրէն: Իսկ իմ մէջն արթնցողը վազաքուշ խօսք մը կ'ըլլար այդ պահուն: Աս լսկտաները մայրս լացուցին... պիտի ըսէր ինք ընդմիջելով կնոջ պատմութիւնը. իսկ ես պիտի հակաճառէի. վնաս չունի՛, պիտի ըսէի, զուն ալ տանին անոնց մայրը լացուցեր ես բաւական... ինք պիտի խնդար մեծահասակ ու պիտի կրկնէր զարմանքով՝ ասքա՛ն ալ նմանութիւն, ճի՛շդ ու ճի՛շդ՝ քրոջս երուանդը:

Ես իր դաւակը չէի եւ ստեղծել զինք միշտ ալ քաշքշած եմ որդիաբար. ինք իմ հայրս չէ եւ տոտր համար ալ կը սիրէ այս դրեթէ անանձնական հայրութիւնը իմ վրաս: Ես քու հօրդ տեղն եմ, ծօ՛, քաշուիլ զիտցիր... կը խեթէ կեղծ բարկութեամբ, երբ աչքով կ'ընեմ իրեն: Քոյր նստողը փարթամ կին մըն է. քառասունըհինգը չէ յոյնեցուցեր զինք. պարճուցեր է խրատօրէչ, մտեղ, իրական. երկար ու ալեկոծ մայերը կը թափին ուսերն ի վար եւ խայթոց բուրմունքը գրուեր է միջոցը: Գեանուզիին վնացքներն են, որ այժմ մեզ կը զարնեն պատէ պատ. ամէն կայան դէմքերու. նոր հաւաքածոյ մը կը շարէ շարժող այս բեմին վրայ. ես անտարբեր կը նայիմ շորս զիս, մինչ ինք քովէս կը զոչէ՝ նո՛րը բերէք... Ծուտով ես ալ կը հասկնամ եղբուրութիւնը: Վերը նստող մէկը կայ, որ կարգադրած է այս բոլորը: Ան կը բերէ, կը շարէ այս դէմքերը մեր առջև. մենք ու չի-ուշով կը զննենք ու չենք հաւնիր ապրանքը. նո՛րը բերէք, կը զոչէ ինք մեծամտօրէն: Քովի կինն է, որ կ'ելլէ օտքի ու կը մեկնի եւ իմ խնդարս կու դայ:

Ես իր առաջին խոհական դաւակը եղած եմ. առաջին անգամն է, որ ինք այսպէս կը խօսի դաւակ մը հետ եւ անկէ հաճոյք կը սկսի առնել. Օհան-

նէսը տեսակ մըն է, կ'ըսէ. Շապուհը ըսեա՛հ հե՛տը չի իտուելիր. միւսներն ալ՝ ամէն մէկը մէկ կողմ. երեսներն տեսած չունինք: Ո՞ւր գացին, կը հարցնեմ: Ինձի՞ կը հարցնես, կ'ըլլայ իր սրտնեղ պատասխանը եւ դէժը կը պտտնայ միւս կողմ: Ես նոր հասած եմ ճամբորդութենէ. պայտասակս առժամաբար ձգած եմ դրան քով: Փամանու՛մս անակնկալ էր երեւի եւ ընդհանայ իր ձեռքին դարձր. ես այդ մէկը շուտով կ'ըմբռնեմ, քանի որ ինք խօսք չի գաներ ըսելիք եւ անորոշ դանդաղներ կը թափէ չորս դին: Կը ժպտիմ: Աջ ձեռքին փոխան երկարեր է դաստակը, որ հող կը բուրէ: Մի լուար, կ'ըսեմ, զնա՛ գործիք. անոնք շուտով կու գան...

Հիմա վերի յարկի պատուհանէն կը դիտեմ իր առայլ շարժումները: Պարտէզի թղենին կը հաւաքէ ու կը խօսի ինքնիրեն. իր խօսքերը չեն հասնիր ինձի, անոնք լեյունկիկ խոհեր կը պարունակեն եւ ես ապակիին ետեւէն մէկիկ-մէկիկ կը տեսնեմ այդ խոհերը: Վարէն դուռը կը դարնեն. ոտքս բռնիկ՝ կը վազեմ վար. Շապուհն է:

— Հո՞ւ է պտպան, — կը հարցնէ դրան մէջէն:

— Հոս է, — կ'ըսեմ:

— Ո՞ւր է:

— Դուրսը, — կ'ըսեմ՝ ցոյց տալով ետեւի պարտէզը:

— Դո՞ւն երբ եկար:

— Հինգ վայրկեան եղաւ, — կ'ըսեմ:

— Լա՛ւ, պապային ըսէ՛ ես իրիկունը նորէն կը հանդիպիմ:

Կը մեկնի տանց ներս մանելու:

Հազրու վեր կ'ելլեմ, դուռը նորէն կը դարնուի: Նորէն վար կը վազեմ:

Դրան մէջ կեցողը Յաննէսն է այս անգամ:

— Շապուհը եկա՞ւ, — կը հարցնէ շնչահատ:

— Այո, — կ'ըսեմ:

— Ե՞րբ, կը բացաղանջէ:

— Հիմա, — կ'ըսեմ:

— Վախ՛նամ զնաց, — կ'ըսէ ու կը բարկանայ, — տարօրինակ սղայ

է, տեղ մը նստիլ չի դիտեր:

Յետոյ մէկէն կը վարակուի իմ լուսթենէս:

— Լաւ, — կ'ըսէ ատանց ներս մանելու, — ըսէ իրենց՝ ես նորէն իրիկունը կը հանդիպիմ:

Ու կը մեկնի:

Իսկ ես կը հանուիմ ու կը մտնեմ բաղնիք: Սառնորակ ջուրը կ'ողողէ մարմինս. անոր կաթիլները կը խուժեն ցնցուղն ի վար եւ կը լուսն ուղեղս: Ես վերջապէս հասած եմ տուն եւ ահաւաստիկ կը դրամ տունը չորս դիւս. այս տունը, որ իմ տունս չէր, իմս եղաւ այսպէս: Այս օտար հողին վրայ ես նորէն ունիմ հայր, եղբայր, ընտանիք. չորս կողմս արդէն կան բուրբ բաները, որոնցմով կ'ամբողջանայ իմ կեանքս. կայ խոհանոց, ուրիշ կու գան բարի բոլորը խաշին. եւ ջրանաթոր ճերմակեղէնները, չորս հանած եմ վրայէս, այժմ կրնամ անխորթօրէն նետել տոպրակը, միշտ վստահ ըլլալով, որ վա՛ղն իսկ անոնք պիտի ըլլան ձիւնի պէս ճերմակ եւ արեւի պէս չոր: Երբորդ պողոտային վրայ, Սրապիտանից Սարգիսը դէմս ելաւ օր մը եւ ես իր խօսքերը դեռ անունիս պէս կը յիշեմ.

— Սարկաւազ, — կ'ըսէր, — հայ աղջիկ մը ձեռք անցուցիր՝ պիտի չիախցնես'ս...

Քիչ էաք, երբ դուք նորէն դարնուի, այս անգամ ներս պիտի մտնէ մաման, որ չորս կողմին հրահանգներ պիտի արձակէ: Այսօր Շարաթ է նորէն եւ իր թեւերը բեռնաւորուած պիտի բլլան ուտեստեղէնի տապրակներով. մնացածը օթոյին մէջն է, պիտի բռնէ եւ ես պիտի վազեմ դուրս, իսկ ինք պիտի պատուիրէ ետեւէս՝ Վրէժուհիին բռնէ՛, դեռ հաց պէտք է սանդուի... Վրէժուհին դեռ չէ իջած ինքնաշարժէն. կը ծոխմ պատուհանէն՝ պատուէրը կրկնելու, երբ ան կը կանխէ դիտ. գիտե՛մ, գիտե՛մ, կ'ըսէ, դեռ հաց պէտք է սանուի, դեռ երեք օրուան հաց ունի տունը... Իսկ ես զինքը կը քշեմ քովի սթուսին ու ես կ'անցնիմ զեկին գլուխը:

Հացին ճամբան կ'երկարի. մենք խօսելիքներ ունինք. պէտք է քննենք յառաջիկայ ամիսներու ծրարիրը. պատկին օրը որոշած ենք արգէն եւ սահայն նամակներ կան գրուելիք. թուղթեր կան լեցուելիք. կան զնուամներ, այցելութիւններ. այս բոլորը ե՞րբ պիտի բնենք, Աստուած իմ, կը խօսի ան ինքնիրեն եւ չ'անդրադասնար, թէ ես արգէն շեղած եմ ճամբէս զէպի մեր հին ծառուղին, մարտծ եմ շարժելը եւ կ'ընեմ իրեն՝ տասնք բարբը պահ մը դուրսը թող մնան:

Մեր բացակայութեան՝ հնչեր էր հեռաձայնը եւ իր փոշոտ ափին հեռքերը մնացեր էին բնկալուելին վրայ. մաման նկատեր էր այդ հեռքերը եւ դայրոյթը ամբարեր ներսը: Ծուկայ երթալէ առաջ չըսա՞ւ իրեն, որ ջուրը չքաշած մարէ օճախին տակը. սրտոն կ'ըսէր: Ճիշդ է, մարեց օճախին տակը եւ սակայն միտը վազուց քաշեր էր ջուրը: Դեռ կար տեսնին: Ճիշդ այն պահուն, երբ մեր մաման կը պատրաստուէր մտնել խոհանոց, հեռաձայնը հնչեր էր երկու անգամ: Մէկը միւսին ետեւէն: Առաջինը Անժէն էր. ահաւաստիկ մէկ ժամէ ի վեր կը սպասէր Սփրինկֆիլտի շուկան եւ Օհաննէսին հեռքը չկար: Երկրորդը Իսկուհին էր, որ ահաւաստիկ մէկ ժամէ ի վեր տունէ տուն կը հեռաձայնէր եւ կը փնտռէր Շարաթը: Մենք հասկցանք, որ այս վէճը պայթած էր դրեթէ ժամ մը առաջ: Երբ հացին տապրակները շալկած ներս կը մտնէինք, մաման անվարան հասցուց իր խօսքը՝ սա որքա՞ն տեսեց մէկ հաց բերեցիկ... Յետոյ նորէն դարձաւ ամուսնոյն եւ սկսաւ ծայրէն՝ միտին տակը մարէ՛ ըսի, չմարեցիր: Այս վէճը երկար պիտի շարունակուէր, եթէ չըլլար իր փրկարար, իր աննման Մարտիրոսը:

Մարտիրոսը իմ գիւտս է: Ան կա՛յ. եղած է միշտ. ես միտն դրած եմ իր անո՛ւնը: Մարտիրոսը ճանչցած է զինք իր մանկութեան օրերէն. հետեւած է իր քայլերուն. իրեն հետ ապրած, իրեն հետ ծերացած. հասած է Դրամասկոս. անցած է Եոթն. գաղթած է Պէյրութ. շունչը առած հոս: Ան եղած է իր լուս ու անբաժան հաղորդակիցը, երբ անելը պաշարած է իր ճամբան, երբ հեռքերը խառնուած են շուրջը, զինք թողած են անօդանավան ու տխուր: Իր նայածքն է, որ մերթ բնդ մերթ կը դառնայ ու կը խօսի Մարտիրոսին. եկուր ասոր մէջէն ելիք, կ'ըսէ. ես ս'ըր, ան ս'ըր. կամ բարկադած կ'աղղարարէ. ձեռքս փորձանք պիտի ելլէ, կ'ըսէ... կամ պարզապէս քէֆը տեղն է այդ իրիկուն, դրած է շիշը, շերտա՛ծ վարունգը, պարտէզէն բերած է լոլիկ, սոխ ու անանուխ, քաշած է տապլին ումսը եւ դաս կու տայ Մարտիրոսին՝ իմէ՛, այ մարդ, կ'ըսէ, սա աշխարհքէն ինչ տանիս պիտի:

Ամէն մարդ ունի իր Մարտիրոսը: Ամէն մարդ կ'ապաւինի իր Մար-

տիրոսին, որպէսզի կարենայ ընել ու սպրել: Այդպէս ալ կ'ըլլայ. ինք, գըրեթէ զինաթափ, երեսը կը դարձնէ երրորդ ուղղութեամբ, ուր այժմ կեցած կ'ըլլամ ես եւ աչք կ'ընեմ՝ քաջ գիտնալով, որ այս տեսարանն ալ պիտի հասնի իր բնական լրումին. յայտնի է, որ բոլորս ալ սկսած ենք անօթենալ եւ մամային բնազդը չի խարեր զինք. թէև երեսը կախ, բայց այնուամենայնիւ ան կը մտնէ խոհանոց եւ պիտի շարժումներով կը սկսի ջարդել կանաչ սոխը: Ինք եւ ես գուրսն ենք եւ ես կ'ուզեմ նոր ածուխ լեցնել կրակաբանին մէջ. դուն ձգէ՛, կ'ըսէ ինձի. քեզի ձգէ՛, ըսի, ես վրա՛ւմ. դուն գնա՛ ներսէն օդիին շիշը բեր...:

Այսպէս է, որ մեր բազմութիւնը հեռահեռէ կը սկսի մտնել իր երեկոյան շէնչոյ ծէսերուն մէջ: Ինչ շուտ փոխուեցաւ մէկէն ամէն բան. յանկարծ բազմապէս բնատնիքներ դարձանք բոլորս. մէկը միւսին ետեւէն աշխարհ եկան երեխաները, եկեղեցին, հին ծանօթները կը կեցնեն մաման եւ կը հարցնեն. իսկ ինք կը հաշուէ՝ Օհաննէս երկու աղջիկ ունի եւ մէկ մանչ, Շաղուհն՝ մանչ մը եւ աղջիկ մը, Վրէժուհիս՝ մանչ մը եւ երկու աղջիկ, Գրիգորս՝ ... Գուրսը խոստովածի կրակին շուրջ բոլորուեր ենք ազաքս եւ օդիին բաժանները կը դարձնենք իրարու. թղենին իր լայն ճիւղերը տարածեր է չորս կողմը. անոր արմատները մտեր են դրացիին պարսէզը. Վաչէն մագրցեր է վրան եւ թուզ կ'երկարէ գրացիին աղջկան, սր իր կապոյտ աչքերով կը կառկածի այս այլանպակ պտուղին: Ազմուկը լեցուցեր է ամն չորս բոյրը. պտաթէթի դնողակը կ'անցնի ձեռքէ ձեռք. Շանթը կը լացնէ Անին. Լորիկը կը փնտռէ մայրը. մօրը ձեռքերը այդ պահուն թաթխուած են քապպուլէին մէջ եւ մեր յայտնի մաման, որ իր լայն մարմնով դրաւեր է միջոցը, անպարանքի կը մտանէ հարսներն ու աղջիկները՝ շո՛ւտ ըրէք, անամ, շուտ ըրէք, կրակը պիտի անցնի... Այլ նեղ պահուն է, որ հարսներէն մէկը պատաս մը թապպուլէ կը թխմէ երեխաներէն մէկուն բերանը եւ դայն դուրս կը դնէ խոհանոցէն:

Այս առտու, երբ վերի տողերը կը կարգայի, յեշեցի զինք: Այդ մէկը Ս. Աստուածածնայ Կիրակին ըլլալու էր կամ երեխաներէն մէկուն կնուները. ըլլալու էր օր մը, երբ մեր վէճերը լատծ էին, դանդատները մոռցուած, երբ մեր վազվազքը դասած էր վերջ, քաշքշուքը՝ ընդհատուած. քէնցողները հաշտուեր էին այդ օրը, վերապահները դարձեր էին անվերապահ եւ ինք սկսեր էր վերադառնել հին տուներուն բարիքը. կ'անցնէր անձէ անձ. չխոնգին՝ կը ստիպէր, որ խմէ. շատ խոնգին ձեռքէն կ'առնէր բաժակը. տեղը նո՛րը կու տար: Մինչդեռ հիմա մենք հաստատուած ենք այս հեռաւոր քաղաքը, որ նահանգին խորերն է, եւ մեր երեխաները կը մեծնան հոս. դիշերները կը բոյրուենք բուխերիկին շուրջ եւ յանկարծ կը գրանք, որ այս առունը ծանրութեան կեդրոն չունի. այլ ու կին ենք միայն եւ երեք երեխայ. շատ խողպ է այս ամն շարժը. անոր պատերը շատ նոր են դեռ. անոր ներքնամասը շատ ընտիր ու գաստապրուած. ասիկա աս՞ն է, թէ տուն չէ, կը խորհիմ ես երբեմն եւ կը դժուարանամ համոզել ինքզինքս:

Մինչդեռ մենք այս տունը մե՛րը ըրած ենք եւ լուր չունինք: Ահաւասիկ գուրսը, փողոցն ի վար, դնողակը կը սուբայ եւ ազաքս կը հալածեն զայն. Չանուրն կը մտնէ ներս սաքս վերաւոր, պատանիի իր դանդուրները՝ հօփին. Նազանը մազլցեր է գրացիին ծառը եւ Լորիկը կը տապըլտըկի խո-

տերուն մէջ: Յանկարծ կը լսեմ նազանին ստրտափահար ճիչը ու կը վազեմ գուրս. աչքերը սառած են օձին վրայ, որ խոտերուն մէջէն հանդարտ կը սողայ գէպի Լորիկը. այդ պահուն ձեռքս անցնողը պոչստ բահ մըն է եւ ես զարհուրանքով գոյն կը կտարեմ օձին վրայ: Ինք, որ վարի սանդուխները կը նորոգէր, վազելով կը հասնի եւ կը դանկ զիս դուռաթափ. ես կը հայհոյեմ երկրի՛ն ալ, ստեղծողի՛ն ալ. ինք կը նայի կիսուսած օձին. կը վերցնէ կտարած բահը եւ ես կը լսեմ իր մեղմ խօսքերը. հանդարտէ, կ'ըսէ, պարտէզի օձ է, ասն օրհնութիւնն է, բան չ'ընէր...

Հիմա ինչպէ՞ս պիտի կրնանք հասկցնել իրեն, թէ հազիւ տեղատուութեամբ, հազիւ տուն-տեղ եղած, պիտի ձգենք ու մեկնինք նսեւ հոսկէ: Այս մէկը իր երկրորդ այցելութիւնն էր մեզի. սուղին անգամ հասած էր յոյնած. մերժած էր ճամբորդել օգննուով. բազմաթիւ ժամեր ծխեր էր օթոպիւսին մէջ. չորս թունել անցանք եւ եօթը կամուրջ, սո սրքա՛ն հեռուները եկեր էք, պապա՛մ, կ'ըսէր ու կը քաշէր սարձին ումպը: Սկաւ, շաբաթ մը մնաց, քննութենէ անցուց տունն ու շրջակայքը. սիրեց մեր բլուրը. սիրեց դիմացի դաշտադեղերը. նորոգեց սանդուխները, ներկեց կառտառն դուռը. ձմրան համար փայտ ապտղերեք, բաւ. նոյնիսկ կարգի բերաւ գրացիին սառուները: Մեկնելէ առաջ, վերջին անգամ նայեցաւ պարտէզին ու ըսաւ.

— Սա անկիւնը լա՛ւ կ'ըլլայ...

— Ի՞նչը, Հայրի՛կ:

— Թղենի՛ն, քանրձ, — եզու պոտասխանը:

Հիմա նստեր է կայարանը ու կը սորտէ մեր գալուն: Ես այժմ հեռուէն կը դիտեմ զինք: Իրեն համար սոխկա նոր տուն մըն է. իր թուները պիտի մեծնան հոս եւ ամէն տուն պէտք է անկէ իր թղենին. Հայրիկ, կ'ըսեմ, սոխկա մեր արեւը չէ, մեր հողը չէ, սո թղենին պիտի չորնայ: Զի շներ. փոխարէնը համբերութեամբ կը բացատրէ ինձի, թէ ինք գոտած է դաղտները. փա՛ստ՝ իր թղենին, որ նահանգին միւս կողմը կը դիմանայ ցուրտ քամիներուն: Պէտք է գտել կաւը, որ խառնուած է այս հողին. դրացի ազարակներէն կը բերես մեծ քանակութեամբ կոպու թրիք. անոյ կը բարեխառնես հողը. թուփին պտուկները պիտի պահես տաքուկ, հետեւաբար, մինչեւ թուփը ամբանայ ու ծառ դառնայ, ամէն աշնան պիտի գիտնաս անոր ճիւղերը հաւաքել եւ պորուրել, որպէսպի անոր պտուկները շատին. ճիւղայս կէտին վրայ ես կ'ընդմիջեմ.

— Կեցի՛ր, — կ'ըսեմ անհամբեր, — ասոնք բոլորը ե՞ս պիտի ընեմ...

Երեսը կը դարձնէ յուսահատ. իբրեւ թէ՛ ինք ինչեւրո՛ւ վրայ է, ես ինչի մասին կը խօսիմ. ու յետոյ կը նայի ինձի ու կ'ըսէ.

— Ասիկա տուն է, ետլու՛մ. հոս շաճա՛լս պիտի մեծնայ. հոս գեռ կնունք պիտ ընէք, հարսնիք պիտ ընէք. ես մեռնիմ-երթամ պիտի, ա՛յ Ադամի որդի, քանի՞ ձեւով խօսիմ պիտի քեզի, որ հասկնաս:

— Հայրիկ, — կ'ըսէ Վրէժուհին վերջապէս, — մենք քեզի լսել չէինք ուզիր. որոշեցինք, որ ծախենք տունը. երթանք պիտի...

Լոռութիւն կը տիրէ սենեակին մէջ: Նոյնիսկ երեխաներուն ձայնը չի լսուիր այլեւս. կը լսեմ միայն իր շնչառութիւնը ու կը տեսնեմ իր գէճքը, որ կը նայի պատուհանէն դուրս: Բան մը կը կծկուի ներսս. կ'ազիմ խօսիլ. կ'ուզեմ քանի մը գիւրի՛ն խօսքեր գտնել. ինք կը կանխէ զիս.

— Զեր դորձին իմ խելքս չի հասնիր, — կ'ըսէ:

Գեո. արտուան պէս կը յիշէ : Վահկան մնացեր էր հեռուն. ինկեր էր Հաճրնը. խսկ իրենք լեռներն էին՝ հի'նդ ձիաւոր. այլեւս չունէին տուն, չունէին ուղղութիւն : Տեղաաարափ անձրեւը կը թափէր իրենց ուսերուն. երբեմն կանդ կ'առնէին քարայրի մը բերանը եւ չէին համարձակեր մտնել ներս. անօթութիւնը կը մթնցնէր իրենց աչքերը : Կիրճի մը մէջ, անսկնկալի բերին երեք թուրք գիւղացիներ. փողերը դրին անոնց ծոծրակին. հարցաքննեցին. համոզուեցան, որ անվնաս մարդիկ են. վերջին պահուն պատահամբ պարզուեցաւ, որ անոնցմէ մէկը կու գար Վահկայէն. եղբայրնէ՛ր, կ'ըսէր ան, քաղաքը մտքըհցինք, մաս-մաքուր եղաւ . . . Ձեռքը սարաւ գէնքին, աղաքը չթողուցին. փամփուշաղ խնայէ, խեղացի՛, պոռաց Շիւրբարմեան Կարապետը : Հեռուն, ձորին մէջ եղ մը տեսան. մարմինը փոքր էր գետին ու կ'որոճար : Յարձակեցան. անձայն մորթեցին. միտին մեծ ու անկունն շերտերը կապեցին իրենց գոտիներուն մէջ եւ սրընթաց արշաւեցին գէպի լեռնադազաթները :

Գիշերը հանդարտ կը սահէր եւ երեխաներուն աչքերը սկսեցին կնկնուիլ. դորդին վրայ, յիշողութիւններու այս շղթան նորէն միութեան եզր ըստեղծեւր էր մեր միջեւ. կարծես հաշտուեր էինք այլեւս եւ նոյնիսկ ուրախ, որ ցերեկուան ծանր մթնալարը սկսեց էր փարատիլ. այնքան բաներ փոխուեր էին մէկ կեսանրի բնթացքին, որ այլեւս զարմանալի բան չէր մնացեր իրեն համար :

— Հիմա, որ նստեր ենք հաս եւ անուշ-անուշ կը խօսինք . . . վերապրելու դազաները, սիրելիս, միայն սպաննելը չէ. պէտք է կարենաս ձախ ափովդ ետեւէն անշարժացնել զոհիդ շնչաութիւնը եւ միեւնոյն ժամանակ պիտի խրեւ գաշոյնը անոր աջ կողին. պէտք է զոհը մեռնի տեղնուտեղը՝ առանց ձայնի-ձիւնի. յետոյ պիտի կարենաս վերստին մտնել մարդոց մէջ, մոռնալ բոլորը, պիտի կարենաս տուն ըլլալ, հասցնել երեխայ ու թոռ : Բայց եկուր տես որ . . .

Այդ տուտու, երբ արթնցանք, ինք արդէն տնկեր էր թղեհին. շամձ՝ վազեցինք վար. չէ՞ր հասկցած միթէ, որ այս տունը այլեւս մերը պիտի չըլլար. շուտով մենք պիտի հաւաքէինք մեր բեռը եւ մեկնէինք հեռու երկիր. չէ՞ր հասկնար, որ ինք ուրիշին համար կը տնկէր այդ թղեհին. չէ՞ր հասկնար, թէ ուրիշը կրնար պարզապէս անոր հոգը չվերցնել վրան եւ անիկա կրնար չորնալ աշնան առաջին օրերուն իսկ :

— Հայրի՛կ, — պոռացի պատահանէն՝ ինքզինքս չզսպելով . . .

Կեցեր էր հեռուն իր անկած թուփին հետ առանձին : Հեռուէն նայեցաւ իր դիմաթափող ու հեղնական ժպիտով. աջ ափը բոռնցք ըրաւ միայն բութամատը ցից բռնած՝ բսել ուղեւով, որ ամէն բան կարգին է, ամէն բան ճիշդ հասկցուած եւ փառաւորապէս յստակ եւ ես ապակիին ետեւէն կարողացի իր անձայն խօսքերը .

— Կիլիկիան մերն է . . .

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

Պ. Հ Ե Ր Ե Ա Ն

ԱՔԱՑԻՆ...

Խոտերուն վրայ ցօղի պէս դալաց
 Եւ խունկի նման բարձրացաւ հոգիս,
 Ու տարածուեցաւ պարապուրեան մէջ
 Ժպիտս բեկբեկ,
 Բայց չգիտցայ, թէ այդ պահուն սիրելի,
 Ո՞վ եւ ինչպէ՞ս զիս ախացեց...

Շուարեցայ եւ յայնժամ, դարձայ նորէն պատանի
 Եւ գոյզ աչքեր աղջկայ ֆնացուցին զիս.
 Բայց արքնցայ եւ ընդստ, երբ զիս գտաւ վերստին
 Այդ միեւնոյն ախացին:

Այնուհետեւ ամէն տեղ եւ ամէն ժամ
 Հետապնդեց զիս օրերուս երկայնքին,
 Եւ հոգիս դարձաւ անեղ անազանց
 Այդ անձանօ՞ր ախացին...

Եւ վերջապէս իր անվրէպ հարուածով
 Անջատեց զիս այս երկրէն,
 Մատաններով ողորկեց, հնձաններով արքեցուց,
 Ախարական ըրաւ զիս
 Եւ օր մրն ալ բաժակին մէջ գինիի
 Ուրուագրեց խոչուած տեսքը Յիսուսի...

ՔՈՒ ՔԵՐԹՈՒԱԾԸ

Պիտի օր մը ձերբագատուիս կեանքի հեւքէն
 Ու փախչելով միասպաղաղ առօրեայէն,
 Պիտի պահ մը դանդաղիս դուն՝
 Մուտքին սոջեւ քերթուածներուս:

Երկչոտութեամբ պիտի սանես ֆայլն առաջին,
 Պիտի մանես անոնց մաայլ բաւուտին մէջ,
 Ու շնչելով բոյրը տամուկ թուղթերուն՝
 Կասկածանքով պիտի փնտտես քերթուածը քու...

Մինչ շուարած անակնկալ քու այցէն՝
 Յանկարծ պահ մը պիտի դադրի
 Ամէն շունկ բաւուտին մէջ...



Ս Ա Մ Ո Ւ Է Լ Գ Ե Ք Է Թ

ՍՊԱՍԵԼՈՎ ԿՈՏՈՑԻՆ

Ա Ն Ձ Ն Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԷՍԹՐԱԿՈՆ
ՎԼԱՏԻՄԻՐ

ՓՈԶԶՕ
ԼԱՔԻ

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ա Ր Ա Ր

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ի՞նչ:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Վերցուր ասիկա:

Էսթրական կ'աննէ վրատիմ-
րի գլխարկը: Վրատիմի երկու
ձեռքերով կը դնէ Լաֆի գլխ-
արկը: Էսթրական կը դնէ վրա-
տիմի գլխարկը իր գլխարկին
փոխարէն, զոր կ'երկարէ վրա-
տիմի: Վրատիմի կ'աննէ էս-
թրականի գլխարկը: Էսթրական
երկու ձեռքերով կը դնէ վրատի-
մի գլխարկը: Վրատիմի կը

դնէ էսթրականի գլխարկը՝ Լա-
ֆի գլխարկին փոխարէն, զոր
կ'երկարէ էսթրականին: Էսթրա-
կան կ'աննէ Լաֆի գլխարկը:
Վրատիմի երկու ձեռքերով կը
դնէ էսթրականի գլխարկը իր
գլխուն: Էսթրական կը դնէ Լա-
ֆի գլխարկը՝ վրատիմի գլխ-
արկին փոխարէն, զոր կ'երկա-
րէ վրատիմիին: Վրատիմի
կ'աննէ իր գլխարկը: Էսթրական
երկու ձեռքերով կը դնէ Լաֆի
գլխարկը իր գլխուն: Վրատիմի

իր գլխարկը կը դնէ Էսթրակոն-
նի գլխարկին փոխարէն, գոր
կ'երկարէ Էսթրակոնին: Էսթրա-
կոն կ'առնէ իր գլխարկը: Վա-
տիմիր երկու ձեռքերով կը դնէ
իր գլխարկը իր գլխուն: Էսթրա-
կոն կը դնէ իր գլխարկը՝ Լաֆիի
գլխարկին փոխարէն, գոր կ'եր-
կարէ Վլատիմիրին: Վլատիմիր
կ'առնէ Լաֆիի գլխարկը: Էս-
թրակոն երկու ձեռքերով իր
գլխարկը կը դնէ իր գլխուն:
Վլատիմիր կը դնէ Լաֆիի գր-
խարկը՝ իր գլխարկին փոխարէն,
գոր կ'երկարէ Էսթրակոնին: Էս-
թրակոն կ'առնէ Լաֆիի գլխար-
կը: Վլատիմիր երկու ձեռքերով
Լաֆիի գլխարկը կը դնէ իր գր-
խուն: Էսթրակոն Վլատիմիրի
գլխարկը կը վերադարձնէ Վլա-
տիմիրին, որ կ'առնէ գայն եւ կը
վերսպարձնէ Էսթրակոնին, որ
կ'առնէ գայն եւ կը վերադարձնէ
Վլատիմիրին, որ կ'առնէ գայն
եւ գետին կը նետէ: Այս բոլորը
տեղի կ'առնենան կեցդանի շար-
ժումներով:

- ՎԼԱՏԻՄԻՐ — Յարմարեցա՞: Ինծի:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Ձեմ դիտեր:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Ոչ, բայց ինչպէ՞ս կը
դանես դիտ:

Ան վայելչօրէն գլուխը կը դար-
ձրնէ աչ եւ ձախ, առնելով մա-
նրէկնի դիրք մը:

- ԷՍԹՐԱԿՈՆ — Պժղալի է:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Բայց ոչ սովորականէն
աւելի:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Ո՛չ աւելի, ոչ սրակաս:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Ուրեմն կրնամ ինծի պա-
հել գայն: Գլխարկս կը նեղէր դիտ:
(Լուսփիւն): Ինչպէ՞ս ըսեմ: (Լուս-
փիւն): Քեզուբուրը կու տար ինծի:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Ես կ'երթամ:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Ձե՞ս ուղեր դեր խաղալ:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Ի՞նչ դեր:

- ՎԼԱՏԻՄԻՐ — Կրնայինք խաղալ Փողոն
եւ Լաքին:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Ձեմ ճանչնար:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Ես Լաքի կ'ըլլամ, դուն՝
Փողո: (Ան կ'առնէ Լաֆիի դիրքը,
կ'աձ՝ բեռներու ծանրութեան տակ:
Էսթրակոն կը նայի անոր ապշու-
թեամբ): Դէ՛, շարունակէ:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Ի՞նչ պէտք է ընեմ:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Անարդէ զիս:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Աղատ՛ա:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Աւելի՛ ծանրը:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Ազբակո՛յտ: Մըրկա՛յ:

Վլատիմիր կ'առաջանայ, ետ-ետ
կ'երթայ, միշտ մէջքը ծռած:

- ՎԼԱՏԻՄԻՐ — Հրամայէ ինծի, որ մը-
տածեմ:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Ինչպէ՞ս:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Ըսէ ինծի, մտածէ, խո՛ղ:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Մտածէ, խո՛ղ:

Լուսփիւն:

- ՎԼԱՏԻՄԻՐ — Ձեմ կրնար:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Կը բաւէ՞:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Հրամայէ ինծի, որ պա-
րեմ:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Ես կ'երթամ:

- ՎԼԱՏԻՄԻՐ — Պարէ, խո՛ղ: (Կը ծռի
կանգնած տեղը: Էսթրակոն յան-
կարծօրէն դուրս կ'ելլէ): Ձեմ կըբ-
նար: (Կը բարձրացնէ գլուխը, կը
տեսնէ, որ Էսթրակոն հոն չէ, կ'ար-
ձակէ ցաւագին ֆիչ մը): Կոկո՞: (Լը-
նուսփիւն: Կը սկսի բեմին վրայ շըր-
ջիլ՝ գրեթէ վագելով: Էսթրակոն
յանկարծօրէն ներս կու գայ, հետա-
պառ, կը վագէ դէպի Վլատիմիրը:
Կանգ կ'առնեն իրարմէ՛ քանի մը քայլ
հեռու): Փա՛ռք Աստուծոյ, հոս ես
դարձեալ:

- ԷՍԹՐԱԿՈՆ (հեւալով) — Ես անիծուած
եմ:
- ՎԼԱՏԻՄԻՐ — Ո՞ւր էիր դուն: Կարծեցի
անդարձ մեկնած ես:
- ԷՍԹՐԱԿՈՆ — Մ'ինչեւ զատիթափին ծայ-

բը: Անոնք կու գան:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Որո՞նք:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ձեմ դիտեր:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Քանի՞ չաստ են:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ձեմ դիտեր:

ՎԼԱՏԻՄԻՐ (յայտարարելով). — Կոտո՞ն է:

Վերջապէ՛ս: (Կը համբարէ Էսթրակոնը): Կոտո՞: Կոտո՞ն է: Փրկուա՛ծ ենք: Երթանք միանա՞նք անոր: Եկո՛ւք: (Կը քաշէ Էսթրակոնը դէպի քուլիս: Էսթրակոն կ'ընդդիմանայ, կը ձերբազատուի անկէ, վագելով դուրս կ'ելլէ միւս կողմէն): Կոկո՞: Վերագարծի՛ր: (Լուսփիւն: Վլատիմիր կը վագէ դէպի քուլիսը, ուրկէ Էսթրակոն ներս կը մտնէ, կը նայի հետուն: Էսթրակոն յանկարծօրէն ներս կը խուժէ, կ'անապարէ դէպի Վլատիմիրը, որ կը դառնայ իր կողմը): Դարձեա՛լ հոս ես:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ես դատապարտուած եմ դժոխքին:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Հետունե՛րք դացիր:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Մինչեւ դատիթափին եղբը:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Արդարեւ, մենք սորա՛հարթի մը վրայ կը գտնուինք: Անկասկած որ դիւրութեամբ, ինչպէս սպիւնի մը մէջ՝ պիտի յանձնեն մեզ ուրիշին:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Այն կողմէն եւս կու գան:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Մենք պաշարուած ենք: (Յնդուած՝ Էսթրակոն կը խուժէ դէպի բեմին խորքը, կը բռնուի ոտքը, կ'իյնայ): Այո՛ւշ: Այդ կողմէն ելք չկայ: (Վլատիմիր կը վերցնէ գայն, կ'առաջնորդէ դէպի բեմին ծայրը: Ձեռքի շարժում՝ դէպի հանդիսասարանը): Հոն ոչ ոք կայ: Այդ կողմէն գնա՛: Շո՛ւտ: (Ձայն կը կրէ բեմին ստալանասը: Էսթրակոն կ'ընկրկի սարսափահար): Ձե՞ս ուղեր: Աստուա՛ծ իմ, չեմ հասկնար: Տե՛ս: (Կը մտածէ): Անհետանալէ զատ ուրիշ բան չի մնար քեզի:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Անհետանալ ո՞ւր:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ծառին ետեւ: (Էսթրակոն կը վարանի): Շո՛ւտ: Ծառին ե-

տեւ: (Էսթրակոն կը վագէ ու կը պայգի ծառին ետին, որ գայն ոչ-ամբողջական ձեւով մը կը պաշտպանէ): Այլեւ մի շարժիր: (Էսթրակոն դուրս կու գայ ծառին ետեւէն): Յայտնապէ՛ս այս ծառը ոչինչով կը ծառայէ մեզի: (Էսթրակոնին): Դուն խեղճ չե՞ս:

ԷՍԹՐԱԿՈՆ (աւելի հանդարտ). — Գլուխըս կորսնցուցի: (Ամչնալէն կը խոնարհէ գլուխը): Ներէ՛: (Հպարտօրէն կը շտկէ գլուխը): Վերջացա՛ւ: Հիմա կը տեսնես: Ըսէ ինձի ինչ պէտք է ընել:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ընելիք ոչինչ կայ:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Գնա՛ եւ կանգնէ այնտեղ: (Ան կը կրէ Վլատիմիրը բեմին աջակողմեան ծայրամասը եւ կը կանգնեցնէ գայն՝ կռակը բեմին): Հո՛ւ, մի շարժիր, եւ բաց աչքերդ: (Ան կը վագէ դէպի միւս քուլիսը: Վլատիմիր կը նայի անոր՝ ուտեստը վրայէն: Էսթրակոն կանգ կ'առնէ, կը նայի հետուն, ետ կը դառնայ: Երկուքը իրարու կը նային իրենց ուտեստը վրայէն): Թիկունք թիկունքի դարձեալ՝ հի՛ն օրերուն պէս: (Կարն վայրկեան մը կը շարունակեն դիտել զիրար, ապա՝ իւրաքանչիւրը կը սկսի իր խուզարկութիւնը: Երկար լուսփիւն): Այս կողմը եկող մէկը կը տեսնե՞ս:

ՎԼԱՏԻՄԻՐ (ետ դառնալով). — Ինչպէ՞ս:

ԷՍԹՐԱԿՈՆ (աւելի բարձր). — Այս կողմը կ'կայ մէկը կը տեսնե՞ս:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ոչ:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ես ալ:

Կը վերսկսին իրենց խուզարկութեան: Երկար լուսփիւն:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Աչքիդ պէտք է երեւցած բոլոր:

ԷՍԹՐԱԿՈՆ (ետ դառնալով). — Ի՞նչ:

ՎԼԱՏԻՄԻՐ (աւելի բարձր). — Աչքիդ երեւցած պէտք է ըլլայ:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Մի՛ պտտար:

Կը վերսկսին իրենց խուզարկու-

քեան: Երկար լուսաբան:

ՎԱՍՏԻՄԻՐ, ԷՍԹՐԱԿՈՆ (միաժամանակ
ես դառնալով) — Ճիշդ է, որ...

ՎԱՍՏԻՄԻՐ — Օ՛հ, ներողութիւն:

ԷՍԹՐԱԿՈՆ — Շարունակէ:

ՎԱՍՏԻՄԻՐ — Բայց ո՛ր:

ՎԱՍՏԻՄԻՐ — Բայց այ՛ն:

ՎԱՍՏԻՄԻՐ — Ընդմիջեցի քեզ:

ԷՍԹՐԱԿՈՆ — Ընդհակառակն:

Ձիրար կը դիտեն բարկութեամբ:

ՎԱՍՏԻՄԻՐ — Հո՛ս նայէ, ծխակրտարու-
թեան պէտք չկայ:

ԷՍԹՐԱԿՈՆ — Յամառ մի ըլլար, դե՛հ:

ՎԱՍՏԻՄԻՐ (խտուրքեամբ) — Նախա-
դասութիւնդ վերջացուր կ'ըսեմ քե-
զի:

ԷՍԹՐԱԿՈՆ (նայնպէս) — Վերջացուր
նախադասութիւնդ:

Լուսաբան: Անոնք կ'ուզուին
մէկը միւսին կողմը, կանգ կ'առ-
նեն:

ՎԱՍՏԻՄԻՐ — Թշուառակա՛ն:

ԷՍԹՐԱԿՈՆ — Ճի՛շդ այդ, վարկարեկենք
զերար: (Նախատինքներու փոխանա-
կութիւն: Լուսաբան): Հիմա հաշտու-
ւինք:

ՎԱՍՏԻՄԻՐ — Կոկո՛:

ԷՍԹՐԱԿՈՆ — Տիտի՛:

ՎԱՍՏԻՄԻՐ — Ձե՛րք:

ԷՍԹՐԱԿՈՆ — Ա՛ն:

ՎԱՍՏԻՄԻՐ — Նետուէ՛ր բարեկեցութեան
մէջ:

ԷՍԹՐԱԿՈՆ — Բարեկեցութեան՞:

ՎԱՍՏԻՄԻՐ (բանալով բազուկները) —
Նետուէ կուրծքիս վրայ:

ԷՍԹՐԱԿՈՆ — Շարունակենք:

Կողջազուրուիմ: Լուսաբան:

ԷՍԹՐԱԿՈՆ — Ինչպէ՛ս արագ կ'անցնի
ժամանակը, երբ մարդ կը դուրսա-
նայ:

Լուսաբան:

ԷՍԹՐԱԿՈՆ — Ի՞նչ ընենք հիմա:

ՎԱՍՏԻՄԻՐ — Սպասման այս միջոցին:

ԷՍԹՐԱԿՈՆ — Սպասման այս միջոցին:

Լուսաբան:

ՎԱՍՏԻՄԻՐ — Կրնանք մեր մարդանքնե-
քը ընել:

ԷՍԹՐԱԿՈՆ — Մեր շարժումները:

ՎԱՍՏԻՄԻՐ — Մեր թախչիները:

ԷՍԹՐԱԿՈՆ — Մտքի անդորրութիւնը:

ՎԱՍՏԻՄԻՐ — Մեր ծաւալումները:

ԷՍԹՐԱԿՈՆ — Մտքի անդորրութիւնը:

ՎԱՍՏԻՄԻՐ — Աշխուժանալու համար:

ԷՍԹՐԱԿՈՆ — Հանդարտելու համար:

ՎԱՍՏԻՄԻՐ — Շարունակենք:

Վլաստիմիր կը սկսի ոտստոտել:
Եսթրակոն կը կապկէ գայն:

ԷՍԹՐԱԿՈՆ (կանգ առնելով) — Կը բա-
ւէ: Յոգնեցայ:

ՎԱՍՏԻՄԻՐ (կանգ առնելով) — Ֆիզի-
քայէս պատրաստ չենք: Այսուհան-
դերձ, կտատենք շնչառութեան
կարգ մը փորձեր:

ԷՍԹՐԱԿՈՆ — Յոգնած եմ շնչելէ:

ՎԱՍՏԻՄԻՐ — Իրաւունք ունիս: (Լուս-
աբան): Այսուհանդերձ, ծառ ձեւա-
նանք, հասարակչութեան հա-
մար:

ԷՍԹՐԱԿՈՆ — Մո՞ն:

Եսթրակոն ծառ կը ձեւանայ՝
մէկ ոտքին վրայ երեքալով:

ՎԱՍՏԻՄԻՐ (կանգ առնելով) — Կարգը
քսկո է:

Վլաստիմիր ծառ կը ձեւանայ՝
մէկ ոտքին վրայ երեքալով:

ԷՍԹՐԱԿՈՆ — Կը կարծե՞ս, որ Աստուած
գիտ կը տեսնէ:

ՎԱՍՏԻՄԻՐ — Պէտք է աչքերդ փակես:

Եսթրակոն կը փակէ աչքերը՝
կ'երեքայ աւելի ուժգին:

էՍԹՐԱԿՈՆ (կանգ առնելով, բռունցքները սեղմած, բարձրադադարակ) — Ասասու՛ճ, Գթա՛ ինձի :

ՎԼԱՏԻՄԻՐ (վիրաւորուած) — Հապա ինձի՛ :

էՍԹՐԱԿՈՆ (նոյնպէս վիրաւորուած) — Ինձի՛ : Ինձի՛ : Գթա՛ ինձի :

Իեւ կու գան Փոզգո եւ Լաֆի : Փոզգոն կուրցած է : Լաֆի բեռնաւորուած է նախկինին պէս : Պարանը կայ դարձեալ, բայց շատ աւելի կարն է, որպէսզի Փոզգոն կարենայ աւելի դիւրութեամբ հետեւիլ : Լաֆի կը կրէ տարրեր գլխարկ մը : Վլատիմիրն ու Էսթրակոնը տեսնելով՝ յանկարծ կանգ կ'առնէ : Փոզգոն, շարունակած բլլալով իր նախան, կը բախի անոր : Վլատիմիր եւ Էսթրակոն ետ-ետ կ'երթան :

ՎԼԱՏԻՄԻՐ — Կսի՛ճ :

ՓՈՉՉՈ (վարելով Լաֆիին, որ այս նոր ծանրութեան տակ՝ կ'երեւայ) — Ի՞նչ է, ո՞վ էր պոսացոյր :

Լաֆի կ'իյնայ, գետին ձգելով ամէն ինչ, եւ իրեն հետ՝ նաեւ Փոզգոն : Անոնք՝ առանց շարժումի՝ անօգնականօրէն երկարած կը մնան բռնեքուն միջեւ :

էՍԹՐԱԿՈՆ — Կոտո՞ն է :

ՎԼԱՏԻՄԻՐ — Ճի՛շդ ատենին կը հասնի : (Կ'ուղղուի դէպի կոյտը, Էսթրակոն կը հետեւի անոր) : Վերջապէ՛ս հասու օգնական ուժը :

ՓՈՉՉՈ (մարած ձայնով) — Օղնութի՛ւն :

էՍԹՐԱԿՈՆ — Կոտո՞ն է :

ՎԼԱՏԻՄԻՐ — Սկսած էինք տկարանալ : Հիմա վստահաբար պիտի կարենանք զիշերը անցընել :

ՓՈՉՉՈ — Օղնութի՛ւն :

էՍԹՐԱԿՈՆ — Օղնութի՛ւն կը հայցէ :

ՎԼԱՏԻՄԻՐ — Այլեւս ասոնձին չենք՝ զիշերուն սպասող, Կոտոյին սպասող, սպասումին սպասող : Ամբողջ զիշեր պայքարեցանք, սպառեցինք մեր սեփական միջոցները : Ա՛լ վերջացու : Գրեթէ վաղուան մէջ կը դանուինք :

էՍԹՐԱԿՈՆ — Բայց անոնք պարզապէս անցորդներ են :

ՓՈՉՉՈ — Օղնութի՛ւն :

ՎԼԱՏԻՄԻՐ — Արդէն ժամանակը սկըսած է սահիլ բարբոսին ուրիշ ձեւով : Արեւը մար պիտի մտնէ, լուսինը պիտի ելլէ եւ մենք պիտի հեռանանք ասիկէ :

էՍԹՐԱԿՈՆ — Բայց անոնք պարզապէս անցորդներ են :

ՎԼԱՏԻՄԻՐ — Այլքանն ալ կը բաւէ :

ՓՈՉՉՈ — Գթա՛ ինձի :

ՎԼԱՏԻՄԻՐ — Խեղճ Փոզգո :

էՍԹՐԱԿՈՆ — Գիտէի, որ ինքն է :

ՎԼԱՏԻՄԻՐ — Ո՞վ :

էՍԹՐԱԿՈՆ — Կոտոն :

ՎԼԱՏԻՄԻՐ — Բայց ան Կոտոն չէ :

էՍԹՐԱԿՈՆ — Կոտոն չէ՞ :

ՎԼԱՏԻՄԻՐ — Կոտոն չէ :

էՍԹՐԱԿՈՆ — Ո՞վ է հապա :

ՎԼԱՏԻՄԻՐ — Փողոցն է :

ՓՈՉՉՈ — Ես եմ : Ես եմ : Վերցուցէ՛ք դիս :

ՎԼԱՏԻՄԻՐ — Ձի կրնար ոտքի ելլել :

էՍԹՐԱԿՈՆ — Երթանք :

ՎԼԱՏԻՄԻՐ — Ձենք կրնար :

էՍԹՐԱԿՈՆ — Ինչո՞ւ :

ՎԼԱՏԻՄԻՐ — Կոտոյին կը սպասենք :

էՍԹՐԱԿՈՆ — Ճիշդ է :

ՎԼԱՏԻՄԻՐ — Թերեւս ուրիշ սովորներ կրնայ տալ քեզի :

էՍԹՐԱԿՈՆ — Ոսկորնե՞ր :

ՎԼԱՏԻՄԻՐ — Վասեակը : Ձե՞ս յիշեր :

էՍԹՐԱԿՈՆ — Ի՞նչքն էր :

ՎԼԱՏԻՄԻՐ — Այո :

էՍԹՐԱԿՈՆ — Հարցուր իրեն :

ՎԼԱՏԻՄԻՐ — Ինչպէ՛ս կ'ըլլայ, եթէ նախ օգնէինք իրեն :

էՍԹՐԱԿՈՆ — Ի՞նչ բնելու համար :

ՎԼԱՏԻՄԻՐ — Ոտքի հանելու :

էՍԹՐԱԿՈՆ — Ձի՛ կրնար ոտքի ելլել :



ԷՍԹՐԱԿՈՆ, ԼԱՔԻ ԵՆ ՎԼԱՏԻՄԻՐ

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կ'ուզէ ստքի ելլել:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ուրեմն թող ելլէ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձի կընար:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ի՞նչ ունի:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձեճ գիտե՛ր:

Փոզգո կը ծռի, կ'ոսնայ, գետի-
նը կը հարուածէ բոռնցճներով:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչպէ՞ս կ'ըլլայ, Էթէ
նտխ սակորնիս ուղեկը իրմէ: Ապա,
Էթէ մերժեցու ըլլայ, այդպէս կը ձր-
ղենք զինք:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ըսել կ'ուզես, որ մեր
զթասարտութենէ՞ն կախում ունի:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Այո:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Եւ թէ պէտք է պայման-
ներո՞ւ ենթարկենք բարեզործութիւ-
նը:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Այո:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Խեղցի ձեւ մըն է ստի-
կա արդարեւ: Բայց բան մը կը վախ-
ցրնէ զիս:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ի՞նչ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Որ Լաքին կընայ յան-
կարծ ստքի կանգնել: Այդ պարագա-
սին՝ կը պարտուինք:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Լաքի՞ն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ան էր, որ երէկ յարձա-
կեցաւ վրադ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ըսի քեզի, որ սնոնք տա-
սր հողի էին:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց ոչ, սակէ ստաջ,
ան՝ որ կից զարկաւ քեզի:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ան հո՞ս է:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց նայէ՛: (Ձեռքի
շարժում): Այս պահուս անշարժ է:

Բայց մէկ վայրկեանէն միւսը կրնայ կատարել:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Եւ եթէ երկուքս միասին փառասուր ծեծ մը քաշենք իրեն:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ըսեւ կ'ուզես, որ վրան յարձակինք քնացած միջոցին:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Այո:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Լաւ դադարիտ է: Բայց կրնա՞նք ընել ատանկ բան մը: Արդեօք իսկապէ՞ս կը քնանայ: (Լաւաքիւն): Ո՛չ, լաւապէսը պիտի ըլլայ օգտաւիլ Փոզդոյի օգնութեան կանչեալէն, Վատահելով անոր երախտագրութեան:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ա՛լ ոչինչ պիտի պահանջէ:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Որովհետեւ յոյսը կորսնցուցած է:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Կարելի է: Բայց...

ՎԼԱՏԻՄԻՐ. — Մեր ժամանակը չլատնենք զուր խոսակցութեամբ: (Լաւաքիւն: Կորովալի): Բա՛ն մը ընենք, երբ առիթը ներկայացած է: Ամէն օր չէ, որ մարդիկ պէտք կ'ունենան մեզի: Ո՛չ անոր համար, որ իրապէս պէտք ունին մեզի: Ուրիշներ նոյնքան լաւ կ'ընեն առիկա, եթէ ոչ աւելի լաւ: Մեր տկանջներուն հնչող օգնութեան կոչերը ուզուած են աւելի համայն մարդկութեան: Բայց հոս, այս վայրկեանիս, մարդկութիւնը մենք ենք, մեզի հաճելի թուի առիկա թէ ոչ: Ընենք լաւապէսը, քանի ուշ չէ: Անդամի մը համար արժանաւորապէս գիրկ բանանք անոր, որուն կոչած է մեզ դաժան ճակատագիրը: Ի՞նչ կ'ընես ասոր:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Մտիկ չըլի:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ճիշդ է, որ ձեռնածալ նստած աւ թեր եւ դէմ հակելով՝ մենք հաւատարապէս պատիւ կը բերենք մարդկային կացութեան: Վարդը իր տեսակին օգնութեան կը փութայ՝ առանց դոյզն սատանումի: Եւ կամ՝ կ'երթայ կորսուել թաւառանբու խորութեան մէջ: Բայց հարցը այդ չէ: Ի՞նչ կ'ընենք մենք հոս, ա՛յդ

է հարցը: Եւ այս պարագային՝ մենք բախար ունինք դիտանալու պատասխանը: Այո՛, այս ընդարձակ շփոթին մէջ մէկ բան յստակ է. — մենք կը սպասենք, որ Կոտն պայ:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ճիշդ է:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Եւ կամ գիշերը իջնէ: (Լորտիւն): Մենք յարգած ենք մեր ժամադրութիւնը, եւ այդքան: Մենք սուրբեր չենք, բայց յարգած ենք մեր ժամադրութիւնը: Քանի՞ հոգի կրնայ նման բանով մը հպարտանալ:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Միլիոնաւորներ:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Կը կարծե՞ս:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ձեմ գիտեր:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Կարելի է:

ՓՈԶԶՕ. — Օգնութի՛ւն:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Մէկ բան որոշ է, թէ այս պայմաններուն տակ ժամերը երկար են եւ կը մղեն մեզ բարեխառնել զանոնք գալիքներով, որոնք, ինչպէս լսել, որոնք առաջին ակնարկով բանական կը թուին, մինչև որ վերածւին սովորութեան: Պիտի ըսես, որ ասիկա միջոց մըն է՝ արդիւլելու մեր բանականութիւնը ազօտելէ: Ասիկա յայտնի իրադրութիւն մըն է: Բայց ասիկա արդէն յախտեանական գիշերուան մէջ երկար թափառումներ չէ՞ր կատարեր, ահա՛ թէ ինչ կը հարցունեմ՝ երբեմն ինքնիրեն: Կը հետեւի՞ս իմ արամբանութեանս:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Մենք բոլորս ալ խենթ ծնած ենք: Ոմանք այդպէս ալ կը մնան:

ՓՈԶԶՕ. — Օգնութի՛ւն, զրամ կու տամ ձեզի:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Որքա՞ն:

ՓՈԶԶՕ. — Հարիւր Քրանք:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ձի բաւեր:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ես այդքան առաջ պիտի չըրթայի:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Կը կարծե՞ս, որ բաւարոր է:

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ոչ, բայց կ'ուզեմ, որ այնքան առաջ պիտի չըրթայի, հաստատելու, թէ ակարամիտ մըն էի, երբ աշխարհ եկայ: Բայց հարցը այդ չէ:

ՓՈԶԶՉ — Երկու հարիւր :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Կը սպասենք : Ձանձրացած ենք : (Կը բարձրացնէ ձեռքը) : Ո՛հ, մի բողբոջեր, մենք ձանձրացած ենք մասուան չափ, կարելի չէ ուրանալ ստիկա : Լաւ : Փոփոխութեան ատիժ մը կը ներկայանայ եւ Ի՞նչ կ'ընենք մենք : Ձուք կը վստահենք գայն : Օն, գործի՛ : (Կ'առաջանայ դէպի Փոզզոն, կանգ կ'առնէ) : Ակնթարթի մը մէջ պիտի աներեւութանայ եւ մենք դարձեալ միտակ պիտի մընանք, առանձնութիւններուն մէջտեղ : (Կ'ելագէ) :

ՓՈԶԶՉ — Երկու հարիւր :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Կու դանք :

Կը փորձէ բարձրացնել Փոզզոն, չի կրնար, դարձեալ կը փորձէ, կը զարնուի բեռներուն, կ'իյնայ, կը փորձէ բարձրանալ, չի կրնար :

ԷՍԹՐԱԿՈՆ — Ի՞նչ ունիք դուք ըստրդ :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Օգնութի՛ւն :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Ես կ'երթամ :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Ձիս մի լքեր : Անոնք կը սպաննեն զիս :
 ՓՈԶԶՉ — Ո՞ւր եմ ես :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Կողո՛ւ :
 ՓՈԶԶՉ — Օգնութի՛ւն :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Օգնութի՛ւն :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Ես կ'երթամ :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Նախ օգնէ ինձի : Ապա՛ միտսին կ'երթանք :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Կը խոտանա՞ս :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Կ'երզնում :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Եւ պիտի չվերադառնա՞նք երբեք :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Երբե՛ք :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Արիէ՛ժ պիտի երթանք :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Ո՞ւր որ ուզես :
 ՓՈԶԶՉ — Երե՛ք հարիւր : Ձո՛րս հարիւր :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Միշտ ուղած եմ թափառել Արիէ՛ժի մէջ :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Դուն պիտի թափառիս հան :

ԷՍԹՐԱԿՈՆ — Ո՞վ զէչ հոտեր վարցուց :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Փողզոն :

ՓՈԶԶՉ — Ես եմ, ես եմ : Գթութի՛ւն :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Գարշելի է :

ՎԼԱՏԻՄԻՐ — Արա՛դ : Արա՛դ : Տո՛ւր ձեռքդ :

ԷՍԹՐԱԿՈՆ — Ես կ'երթամ : (Լուսքիւն : Աւելի բարձր) : Ես կ'երթամ :

ՎԼԱՏԻՄԻՐ — Ամէն բանէ ետք, ի վերջոյ կը կարծեմ, որ առանձինս ոտքի պիտի ելլեմ : (Կը փորձէ ռաքի ելլել, դարձեալ կ'իյնայ) : Ուշ կամ կանուխ :

ԷՍԹՐԱԿՈՆ — Ի՞նչ ունիս դուն :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Դժոխքին կե՛ր դառնաս :

ԷՍԹՐԱԿՈՆ — Հո՞ս պիտի մնաս :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Առայժմ՝ այո :

ԷՍԹՐԱԿՈՆ — Դեհ, սաքի ել, պաղ կ'առնես :

ՎԼԱՏԻՄԻՐ — Ինձմով մի մասհողուիր :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Դեհ, Տիտի, յամառ մի բլտար : (Կ'երկարէ ձեռքը Վլատիմիրին, որ կ'առաջարկէ բռնել գայն) : Օն, սաքի՛ :

ՎԼԱՏԻՄԻՐ — Քաշէ՛ :
 Էսքրակոն կը քաշէ, կը տատանի, կ'իյնայ : Երկար լուսքիւն :

ՓՈԶԶՉ — Օգնութի՛ւն :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Մենք հասանք :
 ՓՈԶԶՉ — Ո՞վ էք դուք :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Մարդեր ենք :

Լուսքիւն :

ԷՍԹՐԱԿՈՆ — Մալրադարո՛վ հոգ :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Կընա՞ս սաքի ելլել :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Ձեմ դիտեր :
 ՎԼԱՏԻՄԻՐ — Փորձէ :
 ԷՍԹՐԱԿՈՆ — Քիչ ետք, քիչ ետք :

Լուսքիւն :

ՓՈԶԶՉ — Ի՞նչ պատահեցաւ :
 ՎԼԱՏԻՄԻՐ (խտուրեամբ) — Ի վերջոյ դուն պիտի լռե՞ս, թէ ոչ, ախտուո՛ւր : Միայն ինքն իր մասին կը մտածէ :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ինչպէս կ'ըլլայ, եթէ փոր-
 ձէինք քնանալ թիչ մը:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Լսեցի՞ր զինք: Կուզէ
 զխնամ, թէ թո՛նչ պատահեցաւ:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Կարեւորութիւն մի տար
 իրեն: Քնայի՛ր:

Լոուքիւն:

ՓՈԶԶՈ. — Գթութի՛ն: Գթութի՛ն:
 ԷՍԹՐԱԿՈՆ (ընդատա). — Ի՞նչ է: Ի՞նչ
 կայ:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Կր քնանայի՞ր:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Երեւի:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Դա՛րձեալ տղատա Փոզզոն
 է:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Գոցէ բերանը: Տար փո-
 րին կեց մը:
 ՎԱՍՏԻՄԻՐ (բանի մը կից տալով Փոզ-
 զոյին). — Վերջացուցի՞ր: Պիտի լը-
 սե՞ս: Ողջ՛ւ: (Փոզզո կը ձերբարատէ
 ինքզինք՝ ցաւի նիչեր արձակելով եւ
 սպալէն կը հեռանայ: Ատեն-ատեն
 կանգ կ'առնէ, կոյրի շարժումներով
 կը դիտէ չորս դին՝ Լաբին կանչե-
 լով: Վլատիմիր կը քնած իր ար-
 մուկներուն՝ աչքով կը հետեւի ա-
 նոր): Ազատեց ինչոզինք: (Փոզզո կը
 կիւ: Լոուքիւն): Ինկաւ:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ուրեմն ստքի՞ ելաւ:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Ոչ:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Ստիպո՛ւ զսէն ըտիբ, որ
 ինկաւ:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Ծուռկի եկաւ: (Լոու-
 քիւն): Թերեւս մենք թիչ մը կուշտ
 եղանք:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Ասիկա միշտ չի պատա-
 չիր մեզի:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Ան մեր գութը հայցեց:
 Մենք խուլ մնացինք: Յամտակցաւ:
 Ծեծեցինք զինք:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Ճիշդ է:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Այլեւս չի կրնար շարժիլ:
 Թերեւս մեռած է:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Իրեն օդնել սպած ըլլալ-
 նաւս համար է, որ մենք այս անկիւն
 մէջ կը գտնուինք:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Ճիշդ է:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Հարուածներդ շատ ուժ-
 ղին եղած չըլլան:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Քանի մը գորաւոր հար-
 տածներ տաի իրեն:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Պէտք չունէիք:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Դուն էիք, որ այդպէս
 սպեցիր:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Ճիշդ է: (Լոուքիւն):
 Ի՞նչ բնենք հիմա:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Արդեօք սպաւով երթա՞մ
 մօտը:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Զիտ մի՛ լքեր:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Կամ ձա՞ն տամ իրեն:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Այո, ձան տաւք իրեն:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Փողօ՞ (Լոուքիւն):
 Փողօ՞: (Լոուքիւն): Պատասխան չի
 տար:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Մխտին կանչենք:
 ՎԱՍՏԻՄԻՐ, ԷՍԹՐԱԿՈՆ. — Փողօ՞:
 Փողօ՞:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Շարժեցաւ:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Վասա՞հ ես, որ Փողզօ կը
 կոչուի:
 ՎԱՍՏԻՄԻՐ (անձկալից). — Պարո՞ն Փող-
 զօ: Վերադարձէ՛ք: Մենք ձեզի չենք
 մնասեր:

Լոուքիւն:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Կրնանք փորձել ուրիշ տ-
 նուաներով կանչել զինք:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Վախնամ, որ լըջօրէն վե-
 րաւորուած է:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Այլ մէկը գուարճալի պի-
 տի ըլլար:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Ի՞նչ բան գուարճալի պի-
 տի ըլլար:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Զինք ուրիշ անուաներով
 կանչելու փորձը, մէկը միւսին ետե-
 յէն անուաներ շարելը: Ժամանց մը
 կ'ըլլար տաիկա: Եւ ուշ կամ կանուխ
 պիտի կարենայինք կանց առնել ճիշդ
 անուան զրալ:
 ՎԱՍՏԻՄԻՐ. — Ըսի ջեզի, որ անունը
 Փողզօ է:
 ԷՍԹՐԱԿՈՆ. — Շուտով պիտի տեսնենք:
 Տէ՛ս: (Կը մտածէ): Արէլ: Արէլ:
 ՓՈԶԶՈ. — Օգնութի՛ն:

ԷՍԹՐԱԿՈՆ. — Տեառ՞ք :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Սկսայ յոգնել այլ ձեւէն :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Թերեւս միւսը Կոյէն կը կոչուի : (կը կանչէ) : Կայէ՞ն : Կայէ՞ն :

ՓՈԶԶՕ. — Յոյսութիւն :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ան ամբողջ մարդկու-
թիւնն է : (Լուսիւն) : Նայէ այդ սրտիկ ամպին :

ՎԼԱՏԻՄԻՐ (աչեքը բարձրացնելով) . — Ո՞ր :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Հոն, գենիթին :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Լուս : (Լուսիւն) : Ատար մէջ ի՞նչ կայ այդքան տարօրինակ :

Լուսիւն :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Հիմա ուրիշ բանի մը անցնինք, կ'ուզե՞ս :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ճի՛շդ ես պիտի առաջարկէի ատիկա :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Բայց անցնինք ի՞նչ բանի :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ա՛հ :

Լուսիւն :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ըսենք թէ սաքի երանք՝ սկսելու համար :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Միշտ կարելի է փորձել :

Ոստի կ'ելլեն :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ատիկ տակի դժուար բան չկայ :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Կամենալ, ահա՛ պէտք ե-
ղածը :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Եւ հիմա՞ :

ՓՈԶԶՕ. — Յոյսութիւն :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Երթանք :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Չենք կրնար :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ինչո՞ւ :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Կը սպասենք Կոստիին :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ճի՛շդ : (Լուսիւն) : Ի՞նչ պիտի ընենք :

ՓՈԶԶՕ. — Յոյսութիւն :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ինչպէս կ'ըլլայ, եթէ ոչ-
նէինք իրեն :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ի՞նչ կ'ուզէ :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ոտքի ելլել :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Յեառ՞ք :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Կ'ուզէ, որ օգնենք իրեն, որպէսզի սաքի ելլէ :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Դէ՛ լուս, օգնենք : Ինչի՞
կը սպասենք :

Կ'օգնենք փոզոյիմ' ոստի ելլե-
լու, կը հեռանամ իրմէ : Փոզո
դարձեալ կ'իյնայ գետին :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Պէտք է նեցուկ կանգնել
իրեն : (Դարձեալ ոստի կը հանեն
Փոզոն, որ կը մնայ երկուսիմ մի-
ջև, կախուած՝ անոնց վիզէն) : Պէտք
է, որ վերադասէ սաքի մնալու ս-
վորութիւնը : (Փոզոյիմ) : Աւելի լաւ
կը դրա՞ս :

ՓՈԶԶՕ. — Ո՞վ էք դուք :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Չճանչցա՞ր մեզ :

ՓՈԶԶՕ. — Ես կոյր եմ :

Լուսիւն :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Թերեւս կրնայ ապագան
դուստիկ :

ՎԼԱՏԻՄԻՐ (Փոզոյիմ) . — Երբէ՞ն ի
վեր :

ՓՈԶԶՕ. — Ժամանակին սքանչելի տեսո-
ցութիւն ունէի — բայց դուք բարե-
կամենե՞ր էք :

ԷՍԹՐԱԿՈՆ (ազմկարար խնդրով) . —
Կ'ուզէ զխոնա՛լ, որ մենք բարեկամ-
ներ ենք :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ոչ, կ'ուզէ հասկնալ, թէ
իր բարեկամներն ենք :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ուրե՞մն :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Փասաը այն է, որ օգնե-
ցինք իրեն :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ճի՛շդ : Կ'օգնէի՞նք իրեն,
եթէ իր բարեկամները չըլլայինք :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Թերեւս :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ի հարկէ :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Այդ մասին չառ չվի-
ճինք :

ՓՈԶԶՕ. — Դուք թափառաչըրկներ չէ՞ք :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Թափառաչըրկներ : Թա-
փառաչըրկներու կը նմանե՞նք :

ՎԼԱՏԻՄԻՐ.— ՕՓ, չե՛ս տեսներ, որ
 մարդը կոյր է:
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Այդպէս է: ձիւղ է: (Լը-
 ուրքիւն): Ինք այդպէս կ'ըսէ:
 ՓՈԶԶՁ.— Մի՛ լքէ՛ք զիս:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Լքելու հարց չկայ:
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Այս վայրկեանիս:
 ՓՈԶԶՁ.— Ժամը քանի՞ է:
 ԷՍԹՐԱԿՈՆ (բնեղիւղ երկիւնէր).— Տե՛ս:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ե՞՞թիւ է... Ո՞՞թիւ է...
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Եղանակէն կախում ունի:
 ՓՈԶԶՁ.— Գիշեր է:

Լուրքիւն: Վլատիմիր եւ Էս-
 թրակոն կը նային մայրամու-
 տին:


ԷՍԹՐԱԿՈՆ.— Արեւածայ է:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Անկարելի է:
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Թեթեւ արշալո՞յս է:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Խենթ բաներ մի բներ:
 Հոն արեւմուտքն է:
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչէ՞ն դիտես:
 ՓՈԶԶՁ (անհամբեր).— Գիշեր է:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ամէն պարագայի՛ արե-
 ւը չչարժեցաւ:
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ըսի քեզի, որ կը ծաղի:
 ՓՈԶԶՁ.— Ինչո՞ւ չէ՞ք պատասխաներ
 ինձի:
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Անոր համար, որ չենք
 ուզեր ախմար բան մը բռնել:
 ՎԼԱՏԻՄԻՐ (վերահաստատելով).— Գի-
 չեր է, պարոն, հասանք զիշերուան:
 Բարեկամս կատկած մը ներշնչեց ին-
 ծի եւ կրնամ խոստովանել, որ վայր-
 կեանի մը համար ցնցուեցայ: Բայց
 ես զուր չանցուցի այս երկար օրը եւ
 կրնամ վստահեցնել քեզ, որ մօտ ենք
 անոր աւարտին: (Լուրքիւն): Ատկէ
 անկախ՝ ինչպէ՞ս կը զգաս ինքզինքդ
 հիմա:
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Մինչեւ ե՞րբ նեցուկ պի-

տի կանգնինք իրեն: (Կէս մը կը ձը-
 գեն զինք, վերստին կը բռնեն՝ տես-
 նելով, որ դարձեալ կ'ըլնայ): Մենք
 յենարաններ չենք:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Եթէ ճիշդ լսեցի քեզ,
 կ'ըսէիր, որ Ժամանակին լաւ տես-
 զութիւն ունեցած ես:
 ՓՈԶԶՁ.— Այո, սքանչելի էր:

Լուրքիւն:

ԷՍԹՐԱԿՈՆ (չզարգիւ).— Մանրամաս-
 նէ, մանրամասնէ:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Հանգիստ ճոխ պինք: Ձե՞ս
 տեսներ, որ սկսած է վերջիչէլ անց-
 եալի իր երջանկաթիւնը: (Լուր-
 քիւն: Յիշատակը կը վերակենդանա-
 ցընէ լաւ երկույթները): Տաժանելի
 է անկասկած:
 ՓՈԶԶՁ.— Այո, շա՛տ:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Եւ կուրսիթիւնը յան-
 կա՞րձ պատահեցաւ քեզի:
 ՓՈԶԶՁ.— Սքանչելի:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Քեզի կը հարցնեմ, թէ
 կուրսիթիւնը յանկա՞րձ պատահե-
 ցաւ:
 ՓՈԶԶՁ.— Գեղեցիկ օր մը արթնցայ՝
 բախտին նման կոյր: (Լուրքիւն):
 Երբեմն հարց կու տամ ինքնիրենս,
 թէ արդեօք տակաւին քնացած չե՞մ:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Իսկ ե՞րբ պատահեցաւ ա-
 տիկա:
 ՓՈԶԶՁ.— Չեմ դիտեր:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց ոչ Երէկուրնէ ա-
 տաջ:
 ՓՈԶԶՁ.— Մի հարցաքննէք զիս: Կոյրե-
 րը Ժամանակի դադարարը չունին:
 (Լուրքիւն): Ժամանակի տարբերը
 եւս ծածկուած են անոնցմէ:
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Լաւ: Կրնայի երդնուլ, որ
 ճիշդ հակառակն է:
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ես կ'երթամ:

(Շար. 5 եւ վերջը յաջորդով)



Ի Վապակաճ Հարժուճ



ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԸ ՊԱՐԳԵՆԱՏՐԷ ՅՈՒՆԵՍԿՈՒ ԳՐԱԳԷՏԸ

ԹՈՒՂԹԻՆ ԱՆԴԱՍՏԱՆԸ...

Կարծանք է տկճան: Իր մէկ նիստին՝ Նոխարարաց Սոբհաւրդը յայտարարեց Միխայիլ Նույնիի փոտաան, որուն պանծացման իրենց մանակցութիւնը բերին պետական թէ մշակութային բոլոր օրդանները, հանդիսութիւններով, բացառիկ թիւերով ու ցուցահանդէսներով:

Արձաղանդելու համար մշակութային այլ բացառիկ երեսօթին, ստորեւ կը ներկայացնենք Հանրապետութեան Նախագահին խօսքը եւ մեր երիտասարդ աշխատակիցներուն տեսակցութիւնն ու մէկ տկնարիք յարելար զբաղէան հեւ, յարելար զբաղէան զարձերուն մասին:

Գիտութեան եւ հոգիի իմաստութեամբ ըսիք, թէ «արդուեցաւ մեծարանի շարաթ մը կայացնել եւ ուզեցին, որ անոր առանցքը հանդիսանաւ ես», կարծէք թէ հարցը կը վերարերէք համաճայնութեան մը:

Թոյլ աուէք ինծի, որ ձեր համեստութիւնը վերաւորեմ եւ բռնեմ, թէ առանցքին դոյս թեամբ պայմանաւոր էր նո՛յնինքն փառասօնը, իսկ եթէ մեծարման իմաստը կը դէկ-կ'անցնի աշխարհ մը, որ դուք էք, հանելու այլ աշխարհի մը, որուն կը պատկանիք դուք. անոր մէջ կան ձեզմէ մասեր, որոնք վեր են ամէն կասկածէ: Որովհետեւ Լիբանանի իմաստներէն են անոնք, միտքն ու հոգին, վեհագոյնի արժանիքներն ու մարդը, — յաւերժական հարստութիւններ. եւ արդեօք կա՞յ Բանէն աւելի մնայունը եւ նախամեծարը՝ յաւերժութիւնը թարգմանելու...

Ով մեծ իմաստաօք,

Բարը իմաստաւորուեցաւ ձեր բազում երկերուն մէջ եւ սիրոյ շարահանը հաւանարար լաւագոյնն է, որուն մէջ յայտնադործուեցաւ այդ վայելչադեղ մեղեդին, — բառին վեհութիւնը եւ մարդուն մարդկայնութիւնը:

Եւ արդեօք ճշմարիտ սիրոյ արդիւնք չէ՞, որ անմնացորդ սիրով մը սիրես, առանց տարբերութիւն դնելու մեծին կամ փոքրին, զօրաւորին կամ տկարին, հարուստին կամ աղքատին միջեւ, եւ անոնք հանդիպին հան, Լորայրութեան սղիւզ, մարդկութեան մը մէջ, տեսնես՝ անարատութիւնը բացուելուն մէջ, եւ արարչադործութեան իմորումը՝ բարիքի ճամբուն վրայ. եւ արդեօք այդ չէ՞ ձեր վարդապետութիւնը եւ ճշմարիտ պատկերը Լիբանանի:

Առ այդ՝ պետութիւնը, որ կը շարունակէ վերաշինութեան եւ կառուցման երթը, գիմադրաւելով բոլոր դժուարութիւնները այս բախտորոշ ժամանակաշրջանին, Միխայիլ Նայիմէի փառատօնին մէջ կը տեսնէ մէկ հանգրուանը երթի հանդրուաններէն, եւ պետութեան հեռ Լիբանան՝ իր վերքերու եւ քայքայման դաւին մէջ՝ վճռած են կառչած մնալ իրենց քաղաքակրթական ու մշակութային դերին. եւ այս փառատօնը կու գայ հաստատելու մեր կատարելիք դերին հանդէպ ցուցաբերած մեր յամառութիւնը:

Ո՛չ միայն հոգր հերկելով ու կառուցելով, այլեւ՝ ձե՛ր արտայայտութեամբ՝ մշակելով «Բուդթին անդաառանք», դաշար մտքի, հոգիի եւ արժէքներու:

Գուք ձեր ետր դահարեցիք՝ թուղթի այդ անդաստանը ցանկալ, որով եւ կ'ամբողջանայ Լիբանանի պատկերը, որովհետեւ Լիբանան միայն նիւթով չէ, որ կ'ապրի...

ՄԻՒԱՅԻԼ ՆԱՅԻՄԷՅԻ ՀԵՑ



ԳՐԱՎՈՐ

Բանաստեղծութիւնը շարժարկան
այն հարն է և յախտնական կարո-
տը, որ մեզ անգաղար կը քաշէ հոգի
ձր սոցիալիստը, գոր չենք ճանչնար
և պիտի չճանչնանք:

Ողջ տիեզերքին հետ միաձուլուե-
լու և ընդկրուցուելու յախտնական
սրտաբայն է բանաստեղծութիւնը...
Անիկա հոգեկան հան է, որ կերկարի
չարանակ՝ մինչև որ իր ծայրամասե-
րը բնդխտանուն Գերապոյն ետի մը թե-
ւեաներան...

ՄԻՒԱՅԻԼ ՆԱՅԻՄԷ

● Բանի մը շարաք ետք, աշխարհի չորս ծագերէն Լիբանան պիտի ժամանեն «Միխայիլ Նայիմի Փառատօն»ին հրա-
վարուած արաք եւ օտար մտաորական-
ներ: Անոնք պիտի զան ձեր եօթանա-
տունակեայ վաստակին մեծարման հան-
գիստը ինններուն տալու ո՛չ միայն հա-
մալիբանանեան, այլե՛ր՝ արաքական ու
միջազգային տարողութիւն: Օրումն
նկարն է՛ք գու՛ք: Տաք հրատարակու-
թիւններու տրամապատ «Մաղր» տնուն
էնկադասական ձեր հատորը եւ միւս
տեղծագործարքի նմանքը վերաբերու-
ման եւ վերբերեցման կարծանանան:
Ամէն մարդ կը խօսի Միխայիլ Նայիմի
էնկադասին, իմաստասէրին, արձակա-
գիրին եւ մտաորականին մասին: Բայց

եւտարեքական պիտի ըլլար իմանալ, քէ
գու՛ք ի՞նչ կը մտածէք այս նախատօնա-
կին մասին, ի՞նչ զգացումներ ոգոնեցին
ձեր հոգին եւ ինչպիսի՞ք հոգեվիճակ մը
սպրեցաք, երբ նախարարաց խորհուրդի
իւր մէկ նիստին մէջ՝ կառավարութիւնը
որոշեց ձեզ պաշտօնապէս մեծարել:

— Այն օրէն սողին, երբ գրչիս եւ հո-
ղիս միջև սերտ յարաբերութիւններ
հաստատուեցան, զիրքերու նկատմամբ
ընթերցողներուն տածած ջերմ ընդունե-
լութենէն աւելի ոչ մէկ մեծարանք կ'ու-
կընկալէի: Ասալին օրէն նման ընդունե-
լութեան մը արժանացան զիրքերս եւ ա-
տիկա եղաւ իմ դերադոյն վարձատրու-
թիւնս: Արարական աշխարհի թէ՛ օտար
երկիրներէ ընթերցողներու զրկած հա-

զարուօր նամակները բաւարոյն թարգմտներ հանդիտացան ո՛չ միայն իրենց հիացական գրացումներուն, այլև նրապատեցին Բանի գորութեան նկատմամբ ունեցած խոր համոզումքն ու ժեղացման:

Երբ իմացայ, որ համերայեցութեան նախադասը մտածած է զիս մեծարող հանդիսութիւններու կազմակերպման մասին, խորապէս գնահատեցի անոր մասնակցութիւնը ու նախաձեռնութիւնը ու՛ր ո՛չ թէ իմ գրական արժէքս պիտի բարձրացնէր, այլ պայծառ ու հաւաքատ գիծերով տեսանելի պիտի դարձրնէր Լիրամանի դիմադիծը, ա՛յն դիմադիծը, որ հիմնովին կը օտարբերէ լուսարձակներու սակ բռնուած Լիրամանի ներկայ դիմադիծերէն: Արտօհետեւ, այսպէսով, պիտի ներկայացուէր իր ներկայ ժամերէն շատ աւելի հետու հորիզոնները խորապնակ քաղաքակիրթ Լիրամանի ճշմարտա դիմադիծին մէկ արտա ուրուանկարը:

Այս կացութեան մէջ ինծի եղած մեծարումը կը նկատեմ մէկէ մասին անձնու փառարանում: Անիկա մեծարումն է իմացական, բարոյական եւ սգեկան այն մնայուն արժէքներուն, զորս կը ներկայացնէ այս անձը: Անիկա փառարանումն է Բանին, որ, իմ համոզումով՝ մարդկային կեանքի մեծագոյն հրաշքն է: Ես համեատ ինկարիւր մըն եմ Բանին մեհեանին մէջ եւ ամբողջ փափաքս այն է, որ լիութի եւ լուսադոյնս կատարած ըլլամ հոգեւոր սրտածեղայի իմ պարտականութիւնս:

● Անիկ քան կէս դար գրականութիւն մշակելէ ետք, կը կարծե՞ք, թէ տարբեր արժէքի մը մէջ մարդ կրնայ գտնել իր էութիւնը: Արդեօք Բանը կրնա՞նք փոխել աշխարհի ֆակտագիրը:

— Բազմիցս կրկնած եմ եւ գարձեալ կը շնորհեմ, որ խօսքը մարդկային կեանքի մեծագոյն հրաշքն է: Մարդ անով կ'արտայայտէ իր էութիւնը եւ անոր դրութեամբ մարդ կ'ազդ կը համար ճանաչումներու եւ ազատութեան ամէնէն հետուար եւ նոյնիսկ աներեւակայելի բար-

ձունքներու: Բանը աշխարհներ կառուցելու եւ ուրիշ աշխարհներ ջնջելու կարողութիւնը ունի: Սակայն մարդիկ զեռ մտնուկներ են եւ, գծրախտարար, բացերու հետ կը խաղան ճիշդ ա՛յնպէս՝ ինչպէս մանուկները պոպոկիկներուն հետ կը խաղան: Եւ եթէ մարդկութիւնը գիտակցէր այն հոգը ու թաքուն ուժին, զոր իր մէջ ունի բոսր՝ դայն պիտի չանտեսէր, այլ անոր միջոցաւ պիտի սրտնէր իր ամբողջական էութիւնը:

Աւելի՛ն. նման գիտակցութեան մը հասած մարդը Բանը պիտի սրբեզրէր իբրեւ անփոխարինելի զէնք՝ զինք իր բոլոր վախերէն ազատուցելու եւ ամէնէն հետուար թիրախները նուաճելու համոզումով: Իր էութեան ծանօթ մարդը չի կրնար անտեսել այս ճշմարտ ճշմարտութիւնը, այսինքն՝ Բանին ամենազոր եւ անսպառ յատկութիւնները:

Կայ ես բարը, որ մայրն է բոլոր բացերուն: Մարդ կ'ազդ ի վերուստ տրբուած է այս բառին ծաւալը բնորոշակելու աստուածային կարողութիւնը, եւ անիկա մինչեւ ա՛յն տոտիճան, երբ ես բարը իր մէջ կ'ընդգրկէ տիեզերքի տեսանելի եւ աներեւոյթ բոլոր մտածումները, զրացումներն ու խորհուրդները: Երբ կը համարի ինքնաճանաչումն այս մակարդակին՝ այն առեւն ամբողջական ու յարատեւ խաղաղութիւն մը կը հաստատուի էութեանդ եւ տեսանելի բոլոր գոյութիւններուն միջեւ, էութեանդ եւ աներեւոյթ արժէքներուն ու խորհուրդներուն միջեւ, էութեանդ եւ նոյնիսկ տիեզերքի ամէնէն աննշան հիւլէին միջեւ:

Մարդուն նպատակը, իմ համոզումով՝ կը կայանայ մարդկային ետի շքեղանակին յարատեւ բնորոշակման մէջ, մինչեւ որ համար ա՛յն մակարդակին, երբ ետի տարողութենէն դուրս սչինչ կը մնայ: Անիկա ձեռք չի ձգուիր կարճ ժամանակի մը մէջ, որուն կեանք սահմանումը կու սանք: Նման բան մը կրնայ իրականանալ միայն ա՛յն պարագային, երբ կեանք բոսածը կ'երկարի եւ կ'ընդգրկէ բախանգակ ժամանակը:

● Լա՛ւ, կը խօսիք տրամաբանութեան շեղումով, բայց ձեր բնութագրած նպատակին իրականացումը եթէ անտրամաբանական չէ, գէր կրնանք ըսել, որ դժուարամտաչելի գաղափար մըն է: Շատ հաւանաբար, բացարիկ ծնունդներու վերապահումը՝ նոյնքան բացարիկ երազ մը: Մինչդեռ, հարցը տազանցներու կամ հանկարկներու մակարդակին վերայ ներկայացող խնդիր մը չէ: Դուք գայն գրիք իր ընդհանրական ծիրին մէջ, ասկայն չպարզեցիք, թէ պարզ մակաբանացումն ինչպէ՞ս պիտի նուանէ անյադրահարելի կարծուած ժամանակը:

— Նախ ճշգրտեմ, որ Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդուն համար անյայտահարելի բան չի կրնար դոյութիւն ունենալ: Մարդը գերազոյն յայտնական է. հականը ա՛յն է, որ նախ ճանչնայ իր ետին արժէքը, երկրորդ՝ հաւատայ իր անսպաս կարողութիւններուն, եւ երրորդ՝ ի դարձ դնէ ալք թաքուն ուժերը, երեւելի եւ աներեւոյթ բոլոր դոյութիւններն ու արժէքները ընդգրկելու ի խնդիր:

Հետեւաբար, այս նպատակին հասնելու համար մենք պէտք ունինք մէկէ աւելի տարիքներու: Այդ իսկ պատճառով՝ ես խորատուզուեցայ եւ իբրեւ կեանքի հաւատամք որդեգրեցի կերպարանավորութեան համոզմունքը, որ մարդկային կեանքը կը տեսնէ իբրեւ իրարու կատրուած տարիք-օղակներէ բաղկացած շղթայ մը: Հոս, մահը հանդրուան մըն է միայն, բաղձաթիւ հանդրուաններէն մէկը: Ահա թէ ինչու մահը կը դիմաորեմ ամենայն խաղաղութեամբ, որովհետեւ զայն կը նկատեմ մեզ անվախճան կեանքին առաջնորդող ծնունդ մը:

Այս բնեւոր՝ պէտք չէ հասկնալ անշուշտ, որ դիւ չի շահագրգռեր բաժանումը այն սիրելիներէն ու մտերիմներէն, որոնց հետ կեանքս կապուեցաւ ամբապինդ հանգոյցներով: Միտէ եւ արիւնէ շագրտուած մարդ էակին համար ցաւ կ'առաջացնէ նոյնիսկ ժամանակաւոր բաժանումը: Եւ, վերջապէս, մարմիններու

աշխարհին մէջ մենք կը տառապինք, երբ մեր նմաններուն հետ կը միանանք ու կը յաժնուինք՝ եթէ նոյնիսկ ճշմարտապէս դիտակցինք, թէ մեր ժամանակաւոր բաժանումէն ետք վերստին պիտի միանանք:

Եւ այնքան տտեն, որ մենք կը հազնելնք զգետաւ արեան ու միտի, պէտք է արեան ու միտին վճարենք իրենց տուրքը:

● Այս տեսակետները ըսած ու գրած էք բազմիցս, ձեր գաճազան գրութիւններուն մէջ: Սակայն կայ նաեւ այլ ճշմարտութիւն մը, որուն համաձայն՝ մարդ արքան առաջանայ խոր ծերութեան մէջ, նոյնքան աւելի կ'անի մահուան սարսափը իր հոգիին: Այսօր, դուք կը գտնուիք իննիսուսի սեւիւն. կ'ուզէիք գիտնալ, թէ իննիսուսուանայ նայումէն նո՞յն ձեռով կը մտածէ:

— Այո՛: Ինչպէս դուք ըսիք, ըսած եմ մէկէ աւելի անելի արիթմետով, ըսի քիչ առաջ եւ այս վայրկեանիս ալ կ'ընդդեմ, թէ մահը ամբողջովին տէրունական իմատուն կարգադրութիւն մըն է: Ձեռ կըրնար երեւակայել աշխարհ մը, ուր մահը դոյութիւն չունենայ: Եւ եթէ մահը միանգամընդմիջաւ չընտար այս երկրի վրայ, ես ու դուն, ոտք կոխելու չափ տարածութիւն մը պիտի չունենայինք: Եթէ դուք մահը անջատէք մարդ էակի կեանքէն՝ պէտք է նաեւ դայն բաժնէք բուսական ու կենդանական աշխարհէն:

Սակայն մենք կ'սպրինք աշխարհի մը մէջ, ուր կը տիրէ անձան եւ ընդհուրզման օրէնքը, եւ չկայ բան մը, որ տնկէ, հասունանալէ եւ իր լինելութեան դադարիտիկտին հասնելէ ետք, դարձեալ ֆիզիքական հասկացողութեամբ, չընդհուրզուի: Եւ եթէ աշխարհի վրայ կարենայիք երեւակայել բան մը, որ անեղէ ետք չ'ընդհուրզուի, այդ բանը առանձինն պիտի գրաւէր աշխարհը:

Կր կրկնեմ դարձեալ, որ այսօր եւս մահը ինձի կը թուի հանդրուան մը, որ երբեք կանց չ'առնէր: Եւ ինչպէս քունը հանդրուան մըն է օրէ օր երկարող մարդ-

կային ու կենդանական կեանքին մէջ, այնպէս ալ հանդրուան մըն է մահը: Ամէն կազմութիւն դատադարտուած է ատրոյնումի, իսկ հոգին, որ կեանք հու սայ բոլոր կազմութիւններուն, կը յարատեւէ:

Այն բոլոր բաները, որոնք կ'իշխան զգայութիւններով ճանչնալու համար կարգին մէջ, անդադար կը փոխուին: Անփոփոխ եւ ամէն բան փոփոխութեան ենթարկող միակ ուժը կը գտնուի մարդուն մէջ: Եւ իրենց այլազանութեամբ ի՞նչ են մարմինները, եթէ ոչ մեքենաներ, զորս այդ ուժը կը գործածէ որոշ ժամանակի մը համար, մինչեւ որ հասնի իր հետապնդած նպատակին:

Հակառակ իրենց զեղեցիկ արտաքինին, մեր մարմինները անդադար փոփոխութեան կ'ենթարկուին, եւ այն հոգին, որ կը բնակի մեր մարմիններուն ներսը ու շարժման մէջ կը դնէ գանձնք, մի է եւ անփոփոխ: Այդ իսկ պատճառով՝ մահը կը նկատեմ հանդրուան մը՝ ճանաչումներու անդադար ծաւալող ճանապարհին վրայ: ճանաչումներ, որոնք կ'աւարտին միայն ա՛յն պարագային, երբ կը հասնինք ծայրագոյն ճանաչումին, այսինքն՝ տիեզերական հոգին իր ամբողջութեամբ հասկնալու գերբնշտիկ պահուն եւ ծայրագոյն ազատութեան, որ անխտիր կ'իջիւի բոլոր բաներուն վրայ եւ որուն վրայ ո՛չ մէկ իշխանութիւն իր կամքը կրնայ պարտադրել:

ՏՂԱՄԱՐԻՈՒՆ ՄԻՒՄ ԿԵՍԸ

● Փիլիսոփաներէն ումանք կ'ըսեն, թէ տղամարդը իր կէսը կը գտնէ կնկան մէջ եւ ո՛րքան խորասուզուի անոր աշխարհէն ներս, ա՛յնքան կը յայտնագործէ իր աշխարհը: Այս մտածումէն մեկնելով՝ կարգ մը փիլիսոփաներ անհրաժեշտ կը նկատեն սեռային ազատութիւնը եւ գոյցի մը մարմնական յարաբերութեան մէջ կը գտնեն ազատութեան ու վերացումի անփոփոխարինելի ճանապարհ մը: Հետաքրքրական է գիտնալ, թէ ի՞նչ կը մտածէ ժուժկայ կեանք մը վարած նայիւմէն:

— Տղամարդն ու կինը թուունի մը երկու թեւերն են, իսկ թուունը՝ մարդկութիւնը: Առանց կնկան՝ այրը կէս մարդ է, եւ կինը առանց տղամարդուն՝ գարձեայ կէս մարդ: Կինն ու այրը կը կազմեն ամբողջական մարդ մը: Իրենց յարաբերութեան նպատակը սերնդազարծումն է եւ եթէ չեղին այդ նպատակէն՝ հաստարապէս փոսնդաւոր կը դառնայ ե՛ւ տղամարդուն, ե՛ւ կնկան համար:

Ես այն անձերէն եմ, որոնք կ'ըսեն, թէ մարդուն նպատակը կաշկանդիչ բոլոր կազանքներէն ազատագրուիլն է: Երկուութիւնը կը բխի այդ կապանքներէն, որոնք կը խանդարեն անբաժանելի մէկը պատնալու մարդ էակին ճգտումը: Երբ զոյգ մը կը վերածուի մէկ անձի, այն ատեն էգ եւ արու ըլլալէ կը դադրին անոնք: Հետեւաբար, պէտք է պարտութեան մատնել տուփանքը եւ բնագոյնն ախորժակներն ու բոլոր երեւոյթները, հասնելու համար իր ազբիւրին, այսինքն՝ Աստուծոյ հետ միացման գաղափրակէտին: Վերջապէս, Աստուած ո՛չ էգ է եւ ոչ ալ արու:

Այսպէս կը մտածեմ ես, ու զոյգի մը յարաբերութիւնը կը դիտեմ իրենց Ահուներին հետ միանալու մակարդակին վերայ, որուն իրականացման ղեկաց իբրեւ խոչընդոտ կը բարձրանան գայթակղեցուցիչ բնազգները, որոնք մարդը դէպի վար կը քաշեն, փոխանակ թափ տալու բարձունքներն ի վեր խոյսցող անոր թրուիչքին:

● Ձեր «Եօթանասուն» անուն հասարէն կ'իմանանք, որ կղերականի ժուժկայ կեանք տարած «Շախրուպի ճգնաւորը» Ռուսիոյ մէջ, իր ուսանողութեան տարիներուն, ճանչցած է սէրը: Նայիմէի կեանքին ու գրականութեան մասնագէտները կը նշեն, թէ ձեր կեանքը կը յատկանշուի հակադիր երկու իրադարձութիւններով. առաջին՝ ախորժակ դէպի անբժութիւն եւ մարմնի վրայ հոգիին կողմէ հաստատուած գերակայութիւն, եւ երկրորդ՝ անյարձակարեւի սլայքար մարմնի պահանջներուն եւ անկէ բխած հոգեկան մնայուն տագնապներուն եւ անհասարկութեան:



ՄԻՆԱՅԻԼ ՆԱՅԻՄԷ.— Պատանաբեկն միջև պետայր

տառ հոգեվիճակներուն դէմ: Այս ենթադրութիւնները մի՞շտ են:

— Այդպէս է:

• Այդ պարագային՝ ինչո՞ւ չամուսնացաք, երբ տղամարդուն ու կնկան մարմնական միացման մէջ նայնիսկ կը տեսնէք Աստուծոյ հետ միանալու ուղիներէն մէկը:

— *Կեանքին մէջ զազանիքներ կան, որոնց խորքը թափանցելու զարծր ո՛չ միայն գծուար է ուրիշներուն, այլև ենթակային համար: Մինչև քառասուն տարիքս, մէկէ աւելի աւիթներով մտածած եմ ամուսնութիւն մը կնքելու մասին: Սակայն պայժանները թայլատու չեղան:*

Լիբանան վերադառնալէս ետք, ինքզինքս ամբողջովին նուիրեցի գրականութեան եւ հասայ ա՛յն եզրակացութեան, որ եթէ ամուսնութիւնը անհրաժեշտութիւն մըն է մարդոց մեծամասնութեան համար, ինծի պէս մարդու մը անհրաժեշտ չէ: Մնաց որ, ամուսնացայ կինէսկէն աւելի յաւերժական կոչումի մը հետ, զոր զպայսմ եմ պատանի տարիքս: Ամուսնացայ Բանին հետ: Եւ ստեղծագործութիւններուս ու ընթերցողներուս նկատմամբ ունեցած զգացումս այն է, որ փոխանակ մէկ ընտանիքի՝ ունիմ բարձրութիւ ընտանիքներ:

ՆԻ ՈՐՈՎ, ՀԵՏՏԵՒ
ՅՈՐԵՆԻ ՀԱՏԻԿ ՆԵՔ...

• Ծնած էք Լիբանանի ամէնէն գեղեցիկ գիւղերէն մէկուն մէջ, Սաննիքի

լանջին: Ձեր պատանութիւնը կազմուած է բնութեան ծոցին մէջ եւ Միացեալ Նահանգներէն վերադառնալէ ի վեր, տարւոյն մեծ մասը կ'անցընէք ձեր ծննդավայրին մէջ: Նմանապէս, ձեր գրականութեան մէջ կերտած էք հոգը մշակազ պարզ մարդոց տիպարները: Արդեօք ձեր կազմութեան պէտք է վերագրել հողին ու մշակներուն սկստմամբ ձեր տածած տնտես երր: Բնութիւնն ու մարդը ի՞նչ համեմատութեամբ ազդած են ձեր վերայ:

— *Բոլորս այ կ'ապրինք հողին վրայ: Սակայն շատ քիչեր կը լսեն հողին ձայնը, կը գլտն հողին եւ անոր վրայ բնակող մարդոց զգացումները եւ բնութեան մէջ կը տեսնեն սոփոքական ակնարկէն վրեպոց մնացուն գեղեցկութիւններն ու ճշմարտութիւնները: Շատ քիչեր կը հասկընան հողը եւ չենք կրնար լսել, որ ամէն մարդ կ'ազդուի հողէն: Եւ ատոր պատճառը մարդուն բնութիւնն է:*

Ճիշդ է, որ ծնած եմ Պիւքէնթա, 1889ին եւ, ինչպէս գիտէք, լեւնային գեղեցիկ, հոյակապ դիւղ մըն է, ուր մարդիկ կ'ապրին հողով կամ այլպէս կ'ապրէին իմ մանկութեանս ու պատանութեանս ընթացքին: Հետեւաբար, առաջին իսկ օրէն անպատմելի կտայ մը հաստատուած է իմ, բնութեան եւ հողին միջև: Եւ որովհետեւ մեր պայերէն ժառանգած ենք Սաննիքի լանջին երկարող Շախրուպ անուն հողամասը, ամբողջ ա-

մտառ կ'անցընէի այդ հողին վրայ, այդ հողին հետ, այդ հողին իւրաքանչիւր հիւսիսին մէջ:

Օ՛, հողը, հողը... Ես չեմ կրնար եւ ո՛չ մէկ մարդ չի կրնար քեզի բացատրել, թէ հողը ինչ ազդեցութիւն ունեցած է իմ խառնուածքիս վրայ, ո՛չ մէկ անձ կրնայ վերլուծել այդ յարարերութեան խորհուրդները, ո՛չ մէկ մարդ կրնայ գուշակել, թէ սոխակին երգը ինչ կը նշանակէր ինձի, ինչ կը նշանակէր գլուխնոր Սաննիկի բարձունքներէն հոսոց ջուրին, ինչ կը նշանակէին աչքերուս առջեւ խոյսցող երկնաթռիչ ժայռերը, ծիծեռնակներուն երամները, երբ անոնք բարձր ժայտերու ծերպերուն մէջ իրենց բայները կը հիւսէին, ինչ կը նշանակէին երեկոյեան փարախ վերադարձող ոչխարներու բոժոժներուն զնդզնուցը, արծիւին վեհապանծ սաւառնուծը կամ այն ժամերը, երբ ես կ'անցընէի ըմբոշխներով բնութեան իւրաքանչիւր մասնիկը, հայեացքներովս թռչելով ծիծեռնակներուն հետ, որոնք կարծես թէ կը թռչէին իրենց թեւերէն տարբեր ու անբեւսյթ թեւերով: Այս բոլորը չեմ կրնար վերլուծել ձեզի եւ ոչ մէկ անձ կրնայ հասկնալ, թէ Սաննիկի ետեւէն բարձրացող արշալոյսը ինչ անդրադարձ կ'ունենար վրաս կամ պայծառ լուսնկան ինչ զգայնութիւններ կ'արթնցնէր էութեանս մէջ, եւ կամ՝ ինչ ազդեցութիւն կը ձգէին իմ վրայ օրն ի բուն անջրպետին մէջ լողացող մեղեգիները:

● Բայց հողին վրայ եւ հողին համար ապրող մարդոց հանդէպ ձեր աշխարհահայեացքի մասին բան մը չըսի՛ք:

— Իրաւունք ունիք: Զանոնք կը զգայի, ինչպէս հայրս կը զգայի, երբ առաւօտուն տունէն դուրս կու գար արող հերկելու կամ սերմը նետելու: Եւ նախ քան արող հերկելը կամ սերմ նետելը, հայրս կը խաչակնքէր երեսը այնպիսի՛ երկիւզածութեամբ, որ կարծես կը գրանդէր մայր տաճարի մը մէջ: Յետոյ կըրցայ ըմբռնել, որ հայրս կ'աղօթէր ամէ-

նէն ընդարձակ եկեղեցիին բաց տարածութեան մէջ: Այո՛, հայրս կը խաչակնքէր երեսը եւ գերագոյն կանչով մը կ'ըսէր. «Տէր իմ, դուն ես քերպը շնորհողը, իսկ ես՝ գայն բաշխողը»: Այս բոլորը հսկելու ներս կը սահէին անդիտակցարար: Այդ իսկ պատճառով՝ փոքր տարիքէս հասկցայ արժէքը հողին, արժէքը ցորենի հատիկին, ջուրի կաթիլին, արեւու նշոյլին, որովհետեւ մենք ալ ցորենի հատիկ մըն ենք, ցանուած՝ արեւգերական աներեւոյթ անդաստանին մէջ:

Կենդանիներու, մարդոց եւ բնութեան յարարերութիւնները առանց գիտակցութեան մուտք կը գործէին հողիէս ներս եւ ես կը զգայի այնպէս, որ կարծես մէկ մասն ըլլայի յարաբերողներէն, կը զգայի այնպէս, որ կարծես ինքս հոգը ըլլայի, իսկ հողը՝ Միխայիլ Նայիմէն:

ԲԱՂԱՔԸ ԱՊԱԿԱՆՅՑ ՄԱՐԳԸ ԵՒ...

● Հողին ու մշակին նկատմամբ ձեր տածած անհուն սէրը ծանօթ է, սակայն նոյնքան ծանօթ է, որ «Շախրուալի նըզնաորը» կ'առէ քաղաքը, եւ միայն ճշմարտութիւն կ'իջնէ Պէյրութ, իր եղբորդիներուն մօտ: Տեղ մը, ձեր հերթադրութիւն մէկուն բուսելով, կ'ըսէք. «Կը հեռանամ մարդոցմէ՛ գիրենք աւելի լաւ ճանչնալու համար»: Կրնայի՞ք բացատրել մէկ կողմէ բնութեան, հողին ու մշակին նկատմամբ ձեր ունեցած սիրոյ, եւ միւս կողմէ՛ քաղաքին ու քաղաքակալին նկատմամբ որդեգրած ձեր բացասական կեցուածքներուն սրտախաւսական տարբերութիւնները:

— Կը սիրեմ ամտաշ նախնականութիւնը եւ գայն կը նկատեմ բացարձակ զեղեցկութիւն մը, որովհետեւ մարդկային ձեռքը գայն դեռ չէ խառնչուած: Մանկութիւնէս պաշտած եմ բնութիւնը, որովհետեւ անիկա պահած է իր հարագատ ճշմարտութիւնը, ճշմարտ գեղեցկութիւնը եւ չէ պղծուած մարդուն կողմէ, չէ այլանդակուած: Իսկ քաղաքը բո-

լորտոյին տարբեր է. քաղաքը խճողուած է մարդոցմտով, մարդոց կեղծիքով, եսամոլութեամբ, կոյր ախորժակներով եւ անյարուրդ պահանջներով, որոնք կ'ուզեն առանց նուազագոյնը վճարելու՝ ձեռք ձգել առաւելագոյնը, ամէն միջոցով, ամէն տեսակի նենդութեամբ, անբարոյականութեամբ, ամարդութեամբ: Ամբողջ քաղաքը կը վտպէ նիւթին ետեւէն, կարծես թէ նիւթը իրենց կուսքը ըլլար, իսկ իրենք՝ անոր ստրուկները:

Կ'աւան ժխորը քաղաքին, ուր կեանքը օրբտօրէ աւելի եւս կը մեքենայուի, մարդիկ կը դառնան պտուտակներ եւ կ'ապրին ղեխութեան թակարդներուն մէջ: Եւ որովհետեւ կը հաստատմ, թէ բնութիւնը առաւելագոյն չափով կ'ազդէ մարդուն նկարագրին ու մտածողութեան վրայ, ես կ'ընտրեմ մտքուր միտորար՝ պայծառ, առողջ եւ ճիշդ ձեւով կարենալ մտածելու համար:

Ասիկա փախուստ չէ մարդոցմէ: Ընդհակառակն, կը բխի խոր սէրէ, որովհետեւ եթէ պայծառ ակնոցով զիրենք դիտելու առիթը չներկայացուի ինծի, ես չեմ կրնար մարդուն մէջ տեսնել լաւ արժանիքներ եւ ոչ ալ մատնանշել կեանքի ուղիղ եւ ճշմարիտ ճանապարհը:

● Սակայն չէ՞ք կարծեր, որ քաղաքն ու արդի քաղաքակրթութիւնը նաեւ ունեցան դրական անդրադարձներ: Օրինակ, մշակութային շարժումները, որոնք կ'ստիպեն ձեր մտանցած քաղաքին մէջ: Հոն է, որ լոյս կը տեսնեն ձեր հատորները, քաղաքն է կեդրոնը երաժշտութեան, կերպարուեստին, նարտարագիտութեան, ուսումնական հաստատութիւններուն, եւ այլն: Ինչո՞ւ այս երեսը տեղ չէ գտած ձեր հատորներուն մէջ եւ շեշտը դրած էք բացասական, մութ եւ յոռի գիծերուն վրայ:

— Այն՝ ինչ որ քաղաքակրթութիւն կը կոչենք, մարդը հեռացուց իր գոյութեան հիմնական նպատակէն: Մարդուն գոյութեան նպատակը ինքզինք ճանչնալ ու իր գոյութիւնը արժեցնելն է: Եւ մարդուն գոյութեան արժեւորում կը նշանակէ ուղղակի յարաբերութիւն հաս-

տատել այն ուժին հետ, որմէ բխած են բոլոր բաները: Եւ քաղաքակրթութիւն բառով, ներառեալ քաղաքը, մարդը կը շեղեցնեն այս հիմնական ուղիէն, որովհետեւ անոնք մարդուն համար կը ստեղծեն դնայուն, բայց շողջողուն նըպատակներ, զինք այլասերող ժամանակաւոր նպատակներ, որոնք կը մթազնեն մարդ էակի իմաստը արդարայնապէս ակալական միակ ուղին:

Քաղաքն ու քաղաքակրթութիւնը ո'չ միայն թունաւորեցին մարդուն բարոյական զիմազիծը, այլեւ՝ բանականութիւնը: Այն բոլոր գեղեցիկութիւնները, որոնք քաղաքակրթութեան ծնունդն են, ոչինչ կ'արժեն, եթէ չնպաստեն մարդը իր գերազանց ու միակ նպատակին մօտեցնելու աշխատանքին: Իմ համոզումով՝ քաղաքակրթութիւնը մարդը հեռացուց եւ կը շարունակէ հեռացնել իր հիմնական նպատակէն, որ ինքզինք եւ Արարիչը ճանչնալն է, որուն հասնելէ ետք միայն կը չքանան «սրկէ՞», «ղէպի ո՞ւր» եւ «ինչո՞ւ» հարցումները:

Հ Ի Ն Գ Ը Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք Ն Ե Ր Է Ն Ա Ն Դ Ի Ն

● Ձեր գրականութեան մասին արտահայտեր գրած գրականագետները, բնագիտները, մտաւորականներն ու ձեր կրտսեր գրչեղբայրները կը բաժնեն այն ընդհանուր մտածումը, որ Միխայիլ Նալմիի գրականութիւնը առատ տեղ կուսայ փիլիսոփայութեան ու կրօնական հարցերուն: Ասկէ՝ «փիլիսոփայ-գրագետ» եւ «գրագետ-փիլիսոփայ» սահմանումը ձեր մասին: Սակայն հետաքրքրական է գիտնալ, թէ դուք ի՞նչ սահմանում կուսաք փիլիսոփայութեան:

— Փիլիսոփայութիւն բառը կը սահմանուի իմաստասէր, իմաստ եւ նախաձում հասկացողութիւններով: Ոմանք կը կարծեն, թէ վերոյիշեալ դիտելիքները սահմանուած են սակաւութիւ ընտրեալներու, որոնք իրենց ողջ կեանքը փիլիսոփայութեան կը յատկացնեն:

Ես կը կարծեմ, թէ այս աշխարհի

վրայ սպրոզ իւրաքանչիւր մտքով փիլիսոսփայ մըն է (ինչպէ՞ս կը բացատրէ դոյաւթիւնը, ի՞նչ բացատրութիւն կու տայ աշխարհի վրայ իր գոյութեան եւ ինչպէ՞ս կը բացատրէ իր դոյաւթիւնը՝ իր խել մահէն ետք) :

Այն փիլիսոսփայութիւնը, որ Հոնոյնիբ ատրիբ կոչուած, աշխնքն՝ ծնունդին եւ մահուան միջև երկարող ժամանակաշրջանը՝ շատ, շատ, շատ տհաս փիլիսոսփայութիւն մըն է :

Իսկ զիս կը հետաքրքրէ այն փիլիսոսփայութիւնը, որ մարդուն կը մօտենայ սնոր ծնունդէն առաջ եւ կը փորձէ գտնել պատասխանները «ս՞որ էր մտքդը», «ինչո՞ւ սեղծուեցաւ», «ի՞նչ է իմաստը ծնունդին», «մահը տարիքին ու կեանքին աւա՞րտն է, թէ յետ մահու կեանք կայ» հարցումներուն :

● Այսինքն՝ կողմնակից է՛ք որոշ ուղղութիւն ունեցող փիլիսոսփայութեան մը : Նախապէս, փիլիսոսփայութիւնը միաժամանակ «ամէն բան էր» եւ «ոչ մէկ բան» . իսկ այսօր կը սահմանափակուի բնագանցութեան, գոյութեամբաբանութեան, մարմնեան եւ այլ բնութեամբան մէջ : Կը կարծենք, որ դուք հոգեկան արժէքներու վրայ իմնուած բնագանցութեան կը հաւատաք . կարելի՞ է այդպէս ըսել :

— Կա՛մ այն է, որ տիեզերքի մէջ գոյութիւն ունեցող իւրաքանչիւր էակ իր նպատակը կ'ունենայ եւ կամ ալ փիլիսոսփայութիւնը որեւէ գիտութեան օգտակար չ'ըլլար, աշխնքն՝ կը գտնայ անխմտա գոյութիւն մը :

Բանականութիւնը կը գրադի զգայարանքներով, կը խորսխուի հինգ զգայարանքներուն վրայ, եւ ապա՝ հարցերը կը վերածէ արդիւնքներու, իսկ արդիւնքները՝ գաղափարաբանութիւններու :

Սակայն զգայարանքները փոփոխութիւններու կ'ենթարկուին, իսկ այն զգայարանքը, որ վիճակի մը վրայ չի կեդրոնանար, անկարելի է, որ մեզի բերէ համոզիչ եզրահանումներ :

Այս իսկ պատճառով՝ անհրաժեշտ

է, որ մենք ունենանք հինգ զգայարանքներէն անդին դանուող զգայնութիւն մը : Ընդհանր եւ անիկա կը կոչուի բնազդ, երեւակայութիւն, յայտնատեսութիւն եւ գեղարխատեան ու բարոյական չափանիշներ : Ասոնք սրտաքին զգայնութիւններու վրայ չեն խորսխուի, այլ կը գլխն ու կ'անցնին դանուր :

Եւ անդայար կը պեղեմ ճշմարտութիւն բուսած բանը, հասկնայու համար, թէ դոյաւթիւնս կը հետապնդէ նպատակ մը : Տարիներու խտրումներէն ետք, այժմ հասած եմ այն եզրահանումին, որ իմ էութիւնս կընամ հատկապէս միայն այն պարագային, երբ կը թափանցեմ թաքուն ճշմարտութիւններու խորքը, որուն իսկ պատճառով յարատեւ պեղման մէջ եմ :

Ի՞նչ են այս թաքուն ճշմարտութիւնները : Եթէ դանուր փնտռես՝ պիտի գտնես . ստաջին հերթին, մտատանջութիւնն է, երկրորդ կարգի վրայ՝ մտատանջութիւնէն բխող կարօտը, եւ յետոյ՝ կարօտէն ծնունդ առնող շարժումը :

Գլխաւոր մտատանջութիւնը հետեւեալն է .— սուրկէ՞ եկայ, ինչո՞ւ, ս՞որ կ'երթամ : Այս հարցումները պիտի շարունակեն արեւոծել սղջ էութիւնս, մինչև որ գտնեմ զիս դահացող պատասխանները : Էութիւնս է, որ շարժման մէջ կը գնէ զիս . կարօտը ունիմ ճանաչումին հասնելու, սրեմն՝ ճանաչումը կարելի է ձեռք ձգել , եթէ փնտտուք-շարժումը շարունակեմ, եւ որովհետեւ իմաստը նրաճերով՝ հասած կ'ըլլամ ամբողջական պատուիեանս, հետեւաբար, երկրի վրայ իմ շարժումներս կը շարունակեմ իմաստին եւ պատուիեան իմ մերձեցման արժէչափով :

● Ձեր այս տեսութիւնը անմակաւն փորձառութեան ու համոզումի՞ արդիւնք է, թէ ներշնչուած է ասիական տեսութիւններէ՞՝ ձեր մօտ բիւրեղացող համոզումը առաւել գորացնելու առաջադրութեամբ :

— Ինչպէս չեմ կրնար ասորբայութեմ թոքերէս ներս մուտք դործող եւ արտաշնչուող օդին քանակն ու բաղադրութիւն

նը, այնպէս ալ՝ չեմ կրնար վերլուծել այն բոլոր սուեանքները, որոնք զիս սասանարդեցին այս ուղղութեան, կամ աւելի ճիշդ՝ նպաստեցին այս ուղղութեան որդեգրումին:

● Ականատես եղած էք ուսական յեղափոխութիւնը կանխած տազնապնրուելու շրջան մը ունեցած էք ընկերվարական հակումներ: Ներկայիս, ի՞նչ է ձեր կարծիքը մարքսեան տեսութիւններուն մասին:

— Այժմ կը գրեմ հասար մը, որուն մէջ կը հասնիմ այն եզրահանումին, որ ընկերվարութիւնը ինքզինք կը պարտադրէ: Սակայն մարքսեան ընկերվարութիւնը նկատու չունիմ, որովհետեւ անկէս բազմազանակ է եւ այն բոլոր երկիրներուն մէջ, ուր մարքսեան ընկերվարութիւնը կը կիրարկուի՝ մենք ակամատես կ'ըլլանք բազմազան ու բազմօրինակ կիրարկումներու: Իմ շօշափած ընկերվարութիւնս իրատաշտ ընկերվարութիւնն է, որ ինքզինք կը պարտադրէ բոլոր մարդոց:

Մենք միասին կը վայելինք շատ մը քաններ, օրինակ, օդը, ջուրը, ծովը, ամպը, երկինքը, եւ այլն: Եթէ ասոնք չըլլային՝ մենք երկրագունտին վրայ պիտի չպատասպարուէինք: Ուրեմն՝ ընկերվարութիւնը անխուսափելի եւ ինքզինք պարտադրած իրողութիւն է, սակայն շատ, շատ, շատ մեծ է տարբերութիւնը մեզուի ընկերվարութեան ու Մարքսի եւ Լենինի քարոզած ընկերվարութեան միջեւ:

● Ինչպէս ըսիք, Մարքսի ընկերվարութիւնը որպէզրած պետութիւնները կը

կիրարկեն հակասական ընկերվարութիւններ, երբ անոնցմէ ոմանք կարելի է նոյնիսկ ընկերվարութիւն կոչել: Աւելի՛ն. նոյնիսկ մարքսականները գիրար կը հակասեն, յետոյ՝ պէտք չէ մտնուլ «պրոլետարիատի տիկտատուրա»ն: Ձեր բնածեւած ընկերվարութիւնը կրնա՞ք աւելի եւս պարզացնել:

— Սիրով: Նախ՝ բնեմ, որ աշակերտները յաճախ այնքա՞ն շատ փոխած են իրենց ուսուցիչներուն գաղափարաքանութիւնները, որ խնդրոյ առարկայ վարդապետութիւնը հիմնովին խեղաթիւրած են: Եթէ խօսուեն օրինակ մը կ'ուզէք՝ առէք քրիստոնէութիւնը: Այսօրուան քրիստոնէականները մէկ հովիտի մէջ են, իսկ Քրիստոս՝ այլ հովիտի մէջ: Եթէ քրիստոնէականները տարէին յիսուսակերպ կեանք մը՝ այն ստեն ո՛չ պատերազմ, ո՛չ բռնութիւններ, ո՛չ բարբառոտութիւններ եւ ոչ ալ մարդը իմաստազրկող հաւաքական յեղատպանութիւններ պիտի բլլային:

Եթէ ապրէին Քրիստոսի քարոզած վարդապետութեան համաձայն՝ բոլոր ազգերը պիտի բլլային մէկ ընտանիք, պիտի վայելէին բարիքները թթիւմորելիէ ետք հասունեցած ընկերվարութեան, եւ ոչ թէ պիտի կրէին միլիոնաւոր մարդիկ մէկ անդամէն ընկերվար անձերու վերածելու ճրագրին շարիքները:

Տիպար ընկերվարութիւնը՝ մեզուի վեթեակի ընկերվարութիւնն է: Այս է բնութեան օրէնքը, իւրաքանչիւր մեզու ինքնարեւարար կատարելիք իր գերը ունի... Երանի՛ մարդկութիւնը մեզուներու պէս ապրէր:

Հարցազրոյցը վարեց՝ ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

Ե. Ա. ԱՌՅԵԱՆ

ՄԻՒԱՅԻՆ ՆԱՅԻՄԵԻ ԿԵԱՆՔՈՂԵԻ ԱՇԽԱՐՀԸ



Ինխուսն տարեկան, առկա քան քառասունհինգ տարուան ինքնամեկուսացում բնութեան զրկին մէջ, սուղում՝ քրիստոնէական վարդապետութեան խորհուրդին խորքը, պեղում՝ հոգեկան աշխարհի, միախալիզմով խորհրդանշուող ասորեայ, փրկչութեան (ոուսական) սճի եւ արեւմտեան խորքի (կրօնամիտաբ) ազդեցութիւն, գրական մամուլի խմբադիր-աշխատակից, դասախօս, շուրջ երեսուն հատոր դիրք, յաճախ հրատարակած դանազան երկիրներ, գրական աշխարհէն ներս մրցանակներով պարգևատրուած :

Ահաւաստիկ Լիբանանի յոբելեարը, Միխայիլ Նայիմէն :

Միխայիլ Նայիմէ ծնած է 17 Հոկտեմբեր 1889ին, Պիսքէնթա-Սաննիկի փէշեքուն. նախնական ուսումը կը ստանայ ծննդավայրին մէջ, ապա կ'անցնի Նազարէթ (Պաղեստին), ուսումը շարունակելու ուստական օրթոտոքս եկեղեցւոյ դպրոցին մէջ : Հոն, ձմրան երկար ամիսներուն ընթացքին, առաջին անգամ բլլալով՝ կը զղայ գիտութեան բարերար դերը. իսկ ամառները կը փերտղատնայ հայրենի տունը, օթանդակելու բնտանիքի անգամներուն հոգամշակութեան աշխատանքներուն եւ արբենալու Լիբանանի գեղեցիկութեամբ : Այս շրջանին սկսան արժատանայ իր մէջ սէրը հանդէպ հոգին եւ հայրենիքին, զղացումներ, սրտեք մարմին առին յասկապէս անոր գրական աշխատանքներուն մէջ :

Իր աշխատասիրութեան համար՝ Նայիմէի ընթացք կը տրուի հետեւելու ուսուցչանոցի դասընթացներուն, զորս կ'աւարտէ փոքրուն յաջողութեամբ եւ կը տիրանայ կայսերական Ռուսիոյ մրցանակին, տաւելէ՛ առիթ կը տրուի իրեն յուելեալ տասը տարիներ ուսումը շարունակելու Ռուսիոյ մէջ :

1906ի աշնան Նայիմէ կ'աշակերտէ արդէն Պարլալիոյ (Ուքրանիա) Աստուածաբանական հաճառին :

Նոյն միջավայրը անոր փոխանցեց կեանքի եւ մշակույթի աշխարհի փորձառութիւնները եւ սկսաւ ազդուել Լեւոնապետի, Թուրաթի, Տոստոյեւրպի, Կոհրէի եւ արեւելի, որոնց կնիքը տնայաջաղ դարձաւ անոր սփռն կազմութեան վրայ: Նոյն շրջանին կը գրէ իր առաջին քերթուածը, սուսեքէնով: Այդ տարիները կը նկատուին իր փիլիսոփայական հակումներուն կազմութեան հիմնական շրջանը:

Մարտիային դոյութեան հոգեկան եւ ֆիզիքական երեսներու գոյութիւնը մղեց Նայիմէն, որ արհամարհէ ֆիզիքականը եւ նուիրուի հոգեկանի պեղման՝ ինքնամեկուսացման միջոցաւ իր անձին մէջ որոնելու: Տշմարտութիւնը: Այս մտայնման խորացումը պատճառ դարձաւ, որ եկեղեցական կառույցին մէջ չդռնէ ճիշտութիւնը պատգամը եւ, հետեւաբար, որոշեց հեռանալ եկեղեցական միջոցորտէն, ինչպէս հետագայ կը ֆիզիքական աշխարհէն:

Պոլստիային մեկնելու (1911) իր կրօնական գրողապատճառներուն կողքին՝ կար դորատը այլ իրակէտ մը, եւ այդ իր եւ իր դատողները Ալիուշիայի ամուսնացած քրոջ՝ Վարիայի միջեւ գոյութիւն սենցող սէրն էր եւ անոր հարմարութիւն անդրադարձը: Հակառակ ամուսնացած ըլլալու հանգամանքին եւ տարիքի մեծ տարբերութեան, Վարիա արդէն ինքզինք տիկին Նայիմէ սկսած էր նկատել: Գոյով Նայիմէի, սիրոյ ըմբռնումը բարբառիւն այլ պատկեր պիտի պարզէր անոր համար: Քրիստոնէական իր ըմբռնումն ու կրթութեան 1906ի աշնան Նայիմէ կ'աշակերտի արդէն Պալլաւիայ (Ուքրանիա)

կեցուցած քրտալի հետուն շին կրցած մղել զինք: Անոր այդ կեցուցածքին իրեն հետեւանք՝ Վարիա կը գրիմէ անձնատպանութեան: Հակառակ իր փախուստին եւ իր կեանքէն ներս այլ կիներու մուտքին, որոնք, հաւանաբար, վերինէն տարբեր վերաբերումի շարժանացան, Վարիայի յիշատակը եւ գիմանկարը մինչեւ այսօր կը մնան անջնջելի եւ անսպառ անոր մտքին եւ ստորեակին մէջ:

Թերապիա՝ կը վերադառնայ Լիբանան, հետագային ուսումը Սորպոն շարունակելու մտադրութեամբ: Մակայն եզրօր՝ Ատիպի ժամանումը կը յեղաշրջէ ամէն ինչ եւ անոր պնդումներուն վրայ կ'որոշէ մեկնել Ռուսիայի թիւն, Սիպոնի համալսարանը, զոր կ'աւարտէ չորս տարի ետք, պատկառը արեւաւոր վկայականով:

Ուսանողութեան շրջանին կը ստանայ «Պետրոս» գրական պարբերութեանը եւ անոր մէջ կը գրէ իր առաջին յօդուածը: Խմբագրելը՝ իր նախկին դասընկերներէն Նատիպ Ատիտա, ս'չ միտին ընթացք կու տայ Նայիմէի, այլեւ կը մղէ զինք աւելի յաճախ աշխատակցելու թերթին: Այս շրջանին ան մուտք կը գործէ գրական աշխարհէն ներս, նոյն տան կապ հաստատելով միտիք շալլաւաթին հետ, ու նաեւ գրողներու, ինչպէս՝ Թորո, Էմբրսըն եւ Ռեիթման: Այս սերունդի փիլիսոփայութիւնն ու անոնց կեանքի մտայնումները իրենց անուրանալի հետքը ձգեցին իրանանցի գրողին վրայ:

Շրջանաւարտ ըլլալէ անմիջապէս ետք, Նայիմէ կը մեկնի Նիւ Եորք, ուր կը ծանօթանայ լիբանանցի եւ արաբ գրողներու, որոնց կարգին՝ Ճըլբան-Պալիլ-Ճըլբանի: Նոյն տարուան ընթացքին կը կատարէ Թատերական իր առաջին փորձը: Տարի մը ետք, կը ստանանէ «Պետրոս»ի աշխատանքներուն կազմակերպումը եւ կը յաջողի հաստատակցուել ժամանակէ մը ի վեր անոր նիւթական աճող բոցը: Յաջորդ տարի կը կանչուի գինուորական ծառայութեան ու կը զրկուի ճակատ՝ Գաշնակիցներու կողքին կուսելու: Պատերազ-

մէջն վերագտանալէ ետք, գործնալ կը փորձէ վերականգնել պարբերաթերթին նիւթական վիճակը, սակայն ուշ էր այլեւս եւ «Ձմեռն», պարտքերու տակ բռնաւարտած՝ կը փակուի 1920ին :

Ճրպարանի գլխաւորութեամբ՝ պարբերաթերթին նախկին աշխատակիցները կը հիմնեն գրական միութիւն մը՝ Ռապիքա պ-ֆալամիէ անուն տակ, որուն նախագահ կ'ընտրուի Ճրպարան, իսկ գործադար-բարտուղար՝ Միխայիլ Նայիմէ :

1921ին լոյս կը տեսնէ միութեան թերթին՝ «Ռապիքա»-ի առաջին թիւը, որուն կ'աշխատակցին, Ճրպարանէն ա Նայիմէէն գտած՝ Ռելիեթ Խազէն, Էլլիա-Ազու-Մարի, Ռաշիա Էյուպ, Նասիպ Ասիաա, Սատրա Հատտաա, Էւայլն : Խմբագրական այդ կազմով եւ այդ աշխատակիցներով սկսած «Ռապիքա»-ն կը համարուի Երեսօթ մը արարական գրականութեան թէ արարական ակիւնքին մէջ :

Այդ երեսօթին մարդսրէսթիւնը հասանարար կատարած էր «Ռապիքա»-ի հանդանակը .

«Ամէն ինչ, որ մեյլանով կը գրուի քերթին վրայ՝ գրականութիւն չէ, ոչ ալ բոլոր անոնք, որոնք յօգուած մը կը գրեն կամ քերթուած մը կը հիւսեն՝ գրողներ են . գրականութիւնը, գոր կը հասկանա՞նք՝ ա՛յն գրականութիւնն է, որ իր սնունդը կը ստանայ կեանքի հողէն, լոյսէն, օդէն... գրողը, գոր կը պատուենք՝ ա՛յն գրողն է, որ կը յատկանշուի գգայնութեան փափկութեամբ, մտքի յստակութեամբ, հեռուստութեամբ եւ կեանքի եռեւեփումով» :

Մինչեւ Ճրպարանի մահը (1931), որ լոյս տնդրագարձ կ'ունենայ Նայիմէի կեանքին եւ հասանարար գրականութեան վրայ, ան յաջորդարար կը հրատարակէ «Մազը» անուն քննադատական հատորը, պատմուածք մը՝ «Արգաշին ժամը» եւ յօդուածներու շարք մը, որ հետագային պիտի հրատարակէր առանձին հատորով :

Ճրպարանի մահէն հօգիւ տարի մը ետք, Նայիմէ վերջնականապէս կը լքէ արեւմտեան տասնները աւ կը վերագտնուայ տուն, ուր բոլորովին կը նուիրուի գրականութեան, շտա քիչ ատեն հեռանալով իր մեկուսացած կեանքէն : Վերագործէն ետք, անոր առաջին գործը կ'ըլլայ «Ճրպարան-Խալիլ-Ճրպարան» . կ'ենթագրուի, թէ ան չկրցար ձերբագրատուիլ իրեն ընկերացող Ճրպարանի շուքէն :

1936-46 յաջորդարար կը հրատարակէ «Ժամագրութեան վտարումը», «Կար ու չկար», «Թարթիչներու շրակը», «Հայրենիքը» եւ «Այգեստան մը Բալբեզլիին» հատորները, ուր պիտի հանդիպինք գլխաւորարար անհատի երկուսթեան եւ խորխոփումներուն, որոնք պիտի արտադրան իր երկերուն մէջ պարտուած միտքիսիզմի բարակ երանգով մը :

Այս շրջանին է, որ լոյս պիտի սկսին տեսնել անոր լուսագոյն երկերը . «Հանդիպում», «Մըրատ», «Արգաշի յուշերը» . առաջինին տնագարտ սիրոյ միտքի երանգը, երկրորդին՝ փիլիսոփայական-մարդարէական (ինչպէս Ճրպարանի «Մարգարէ»-ն) շունչով խորատուգումը, երրորդին՝ հօգեկան ընդերքներուն պեղումը պիտի բլան իր վաստակը ցոլացնող գլխաւոր երկերը :

1950-էն ետք կը սկսի Նայիմէի գրական տեղատուութեան շրջանը, հակառակ յաջորդարար հրատարակած «Մոխրագոյն հարը», «Հնովին հետ» եւ «Ուղիներ» հատորներուն :

Այդ շրջանին է, որ անդէրէնէ կը թարգմանէ Ճրպարանի «Մարգա-

ըէ՞ն: Մասկուայէն վերագործէն ետք, ուր հրաւիրուած էր 1957ին, «Մասկուայէն եւ Ռուշինկըմէն ետու» հասարբ, երկու տարի ետք «Յօթանաւառն» խորագրով ինքնակենսագրութեան Ա. հասարբ, ապա յաջորդաբար ծիւս երկու հասարնեբբ:

1960ին՝ յառուկ շքանշանով կը պարգևատրուի հանրապետութեան նախագահին կողմէ՝ լիբանանեան կեանքին եւ մշակոյթին բերած իր մասնակցութեան իբրեւ վարձատրութիւն:

Արարական կարգ մը երկիրներու եւ Մասկուայի հրաւերներուն ընդառաջեկ եւ վերադասնայէ ետք, յաջորդաբար կը հրատարակէ «Վերջին օրը», որ կը ներկայացնէ մահամերձի մը հոգեփրճակը, ապրումներն ու խոհումները. «Այուպ» թասերգութիւնը, խորհրդապաշտ մօտեցումով. «Ով Ազաւորդի՞ն», որ կը փորձէ թափանցել ճշմարտի խմտաին. երկերու հաւաքածոն՝ «Նար մաղը» եւ «Վերջալոյսի խորհուրդը», «Մամլոյ գրոյցներ», «Յիսուսի ներշնչումէն» եւ «Յովէր»:

1978ին՝ Լիբանանեան պետութիւնը, նախագահ Իլիաս Սարգիսի պատւէբով եւ անոր նախագահութեամբ՝ կ'որոշէ յոբելինական համաշխարհային ձեւանարկ մը կողմակերպել, Ապրիլին վարձատրելու համար լիբանանցի այս բողմերախա զուակը:

Նայիմէի գործին մէջ ամբողջական ներկայութիւն է Ան, իր յախտենականութեամբ, զգացումներու, երեւակայութեան, գիտութեան եւ ազատութեան իբրեւ խորհրդանիշ: Հաւանաբար Նայիմէի հետեւեալ սուգերը լուսազոյն զարացնեն Աստուած-մարդ փոխասացութեան անոր բմբռումը.

«Ուրիմն գիտցէք, գոյութիւն չունին Աստուած եւ մարդ, այլ գոյութիւն ունին Աստուած-մարդը եւ մարդ-Աստուածը, գոյութիւն ունի մէկը, որ որքան ալ կրկնուի կամ մասնատուի՝ յախտեան կը մնայ մէկ»:

Աստուծոյ գոյութիւնը պայմանաւորել ա՛յս աշխարհին վրայ եւ, հետեւաբար, զայն որոնել մեր շուրջ, մեր անձին մէջ:

Այս եզրակացութենէն մեկնելով՝ Աստուած եւ մարդ փոխարարութեան դժով՝ Նայիմէ կ'անցնի այլ եզրակացութեան, որովհետեւ իւրաքանչիւր անհատ ունի իր ետը, հետեւաբար, նոյն ետին մէջ բոլոր ետերու միացումով կը ստացուի մէկ ընդհանրական եւ, որ արիւշ բան չէ, եթէ ոչ ի՛նքը՝ Աստուած:

Խորասուցումի հաւատամքէն բացի, ոչինչ կրցած է մուտք գործել Նայիմէի ներաշխարհէն ներս, առ այդ եւ իբրեւ իր խորացումներուն արգիւնք՝ ան պիտի ազդեցութիւնը կրէր Աստուածաշունչի (Հին եւ Նոր Կտակարաններուն) որսական սճարնութեան, արեւելեան ուղղափառ եկեղեցւոյ բմբռնումներուն եւ արեւմտեան միստիսիզմի, որոնք մեծ անդրադարձ ունեցան կողմակերպելու համար իր մօտեցման ձեւերը, ու յարարերութիւնը՝ խորքին եւ արտաքին բմբռումին:

Այս բոլորին իբրեւ արդիւնք, իբրեւ կեդրոնական հարց՝ Նայիմէի գործերուն մէջ օղակ առ օղակ սկսաւ տարածուիլ անոր սիրոյ բմբռումը, կազմելու համար մէկ ընդհանրական գիծը իր աշխատանքներուն, ուր կը խառնայ իր բմբռումներուն ամբողջութիւնը. օրինակ, ան կ'ըսէ.

Սէրը Աստուծոյ հաւատամքն է
եւ դուք գոյութիւն ունեցաք՝ միայն սէրը նանչնալու համար,

Եւ դուք սիրեցիք՝ միայն կեանքը նանչնալու համար .
 Այս է պատուէրը, գոր պէտք է սորվիք .
 Եւ եթէ սորվեցուք գայն՝ ազատ կ'ըլլաք
 Բացի անկէ այլ պատուէրներ գիտնալէ :

Կամ՝

Գուք ծառն էք կեանքի
 Եւ զգո՛յշ, դուք մեզ անկէ չբաժնէք,
 Տերեւ մը՝ ուրիշ անրեւի մը դէմ հանելով,
 Ճիւղ մը՝ այլ նիւղի մը դէմ,
 Պտուղ մը՝ այլ պտուղի :

Քրիստոսէն մինչեւ այսօր, սիրոյ ընդհանրութիւնն ու ընկալումը ամենօրեայ կրկնումի նիւթ ըլլալով հանդերձ, Հեկէլի եւ Մարքոսի ըմբռնումներու ժխտելի մէջ Նայրիմէի ընկալումը կը ջնջէ ամէն երկզրամութիւն եւ կը մնայ ընդհանրական եւ մէկ, որուն ընդմէջէն կը հանդիպինք բւերեղացած միատեսիկին .

«Մարդոցմէ ոչ ոք ատեցէք, եւ եթէ անպատճառ կարիքը կայ ատելու, ատեցէք մարդոց մէջ գոյութիւն ունեցող ամէն տկարութիւն եւ վատութիւն, մի՛ ատէք անարդարը, այլ ատեցէք անարդարութիւնը, որովհետեւ եթէ անարդարը ատելու ըլլաք, անարդար պիտի ըլլաք անար դէմ, եւ եթէ սիրէք գայն՝ պիտի գիտնաք արդարութիւնը եւ անարդարութիւնը վերադարձրնել իրեն» :

Արաքահան աշխարհի եւ Լիբանանի վրայ թանձրացող խուարը, հեռուանք՝ թրքահան բռնատիրութեան, առաջին հերթին հեռաւորութիւն մը կը ստեղծէ գիտութեան եւ մտքի լոյսով հմայուած պատանի Նայրիմէի համար, Նազարէթէն սկսեալ . հակադրութիւնը կը խորանայ աւելի անոր Պուզաւիա ուսանողութեան շրջանին, երբ կը սկսի բողոքատականը կատարել առաջինին խաւարամտութեան եւ երկրորդին մշակութային, մարդկային եւ դրական նուաճումներուն :

Երրորդ ճամբորդութիւնը, Միացեալ Նահանգներ, բոլորովին հիասթափ կ'ընէ երիտասարդ մտաւորականը, երբ կը վերջիշէ իր հայրենիքին մէջ դոյութիւն անկող իսլամը եւ անոր վրայ աւելցող քաղաքական ճնշումը : Սակայն երկրիեզրուէ հաշտեցնող միակ կէտը կ'ըլլայ իր ծննդավայր Շախրուզը (Պիսքէնթա), ուր կու գայ վերջնականապէս հաստատուելու, իոյս տալով յոռաջողէմ, սակայն քաղքենիացած ու մեքենայացած Արեւմուտքէն : Պիսքէնթայի մէջ ինքզինք մեկուսացնելով եւ խորանալով իր անձին մէջ՝ Նայրիմէ յաւելեալ բւերեղացումով կը կազմէ իր փելիսոփայութիւնը :

Միջին Արեւելքի մէջ տիրող իրականութիւնը, որուն իբրեւ անդրադարձ յաճախ կը հանդիպինք անոր ընդվզումին, զինք ինքնամեկուսացման մղող դիտաւոր ազգակիներէն մէկը հանդիսացաւ : Սակայն այլապէս եւ այլ ճշմարտութիւն է անոր հայրենատիրութիւնը, մանաւանդ նուիրումը ծննդավայրին հանդէպ, գուրդուրանքը՝ իւրաքանչիւր ծառի, քարի ու էակի վրայ : Իր բառերը պերճախօս են այդ ուղղութեամբ .

«1902ին, Սաննիհի փէշեթէն, ծննդավայրէս առաջին անգամ հեռանա-

լէս ետք, շրջեցայ շատ հեռուները, գամագան կողմերը աշխարհի, եւ որքան մեծ է քիւր այն սենեակներուն, զորս նանչցայ եւ որոնք նանչցան զիս, մտնքիմ եղայ անոնց եւ անոմք փոխադարձեցին մտերմութիւնս շրջագայութեանս երեսուն տարիներուն ընթացքին, եւ որքան զարմանալի էր այդ տաներուն մեծութիւնը եւ անոնց հեղուցիչ մթնոլորտը, մտերմութիւնն ու մեծութիւնը, ապահովութիւնն ու նեղսրտութիւնը, հիւրասիրութիւնն ու փախուսար: Բայց ամերեւոյք քեկեր, աւելի հիշող՝ պարաններ սկսան զիս մըղել դէպի Պիսկէնթայի այդ փոքր հիւղակը, որ աշխարհի վրայ բացուած հանցիլիս էր»:

Եւ կամ հեռուեալ սողերբ.

«Սակայն Լիբանանի հանդէպ կարօտս, Ամերիկայէն վերադարձի նամբութս վրայ, տան մը եւ բնտանիքի մը հանդէպ գոյութիւն ունեցող կարօտն աւելին էր, եւ աւելի նոյնիսկ հողի, երկինքի, ջուրի կարօտներէն, մանկութեան խաղափայլերու, պատանեկան եւ երիտասարդական յիշատակելի վայրերու կարօտն»:

Եր գիւղին առթած կրօնական մթնոլորտը եւ իր բնական հակամտերը քրիստոնէական վարդապետութեան հանդէպ, խորացան աւելի եւ արմատացան շատ աւելի իր ուսանողութեան (Նազարէթ) շրջանին, ուր ամենաչնչին երեսօյթներն ու դէպքերը, յիշատակելի վայրերն ու անոնց պատմութիւնը պատանի Նայիմէն կը մղէին խորասուզուելու իր անձին մէջ եւ ապրելու Յիսուսի եւ անոր աշակերտներուն ներկայութիւնն ու մտերմութիւնը, ա՛յն աստիճան, որ ժամանակի պայմանն ունենայէ զազրած էր անոր համար եւ լեցուած էին բոլոր խրատները, տալով իրեն ինքզինք Աստուածորդւոյն ժամանակաշրջանին եւ մթնոլորտին մէջ զգայու ապրումը: Սակայն Ռուսիա իր ուսանողութեան շրջանին երիտասարդութեան հասակը թեւակոխող Նայիմէ կը սկսի քրիստոնէական վարդապետութիւնն ու եկեղեցիներու կիրարկած քրիստոնէութիւնը բազդատել, որուն իրբեւ արդիւնք կը խզէ կապերը եկեղեցւոյ հետ, կը լքէ ուսանողութիւնը, կը հեռանայ Ռուսիայէն, ուր զացած էր աստուածարանութիւն ուսանելու եւ կը վերադառնայ Լիբանան:

Ճարլիներ ետք, քրիստոնէական իր բմբանումներուն մասին Նայիմէ պիտի գրէր հեռուեալը.

«Հոս, այս փոքր, համեստ քաղաքին մէջ, կախուած մեծ լերան մը կողմէն, հո՛ս, Նազարէթի մէջ, ապրեցան աստղագործ Յովսէփ եւ նշանածը՝ Մարիամ. հոս, արեւելեան քէ արեւմտեան աշխարհի մէջ, հագար իննը հարիւր տարիներէ ի վեր, հասակ առաւ այդ հրաշք-մանուկը, որ փառաբանուեցաւ միլիոնաւոր մարդոց կողմէ, եւ դուն մէկն ես անոնցմէ, Միխայիլ»:

«Հոս ես դուն, Պաղեստինի ամբողջ տարածքին, բերրի ու կախարդիչ քաղաքի մը մէջ, որուն տարածքին ո՛ւր որ ալ քալես, ո՛ւր որ նայես, ծնունդ կ'առնեն անհամար դէմքեր ու դէպքեր, որոնք արմատացած են էութեանը մէջ, եւ անոնց ամենասիրելին, *սուսցչիս* դէմքը եւ դէպքերը կեանքին: Որքան կարն էր այդ կեանքը: Բայց որքան անկարող է ժամանակը՝ զայն մոռացութեան տալու, վա՛յ քեզի, երէ մոռնաս, Միխայիլ, ահա հո՛ս ես դուն, *Յիսուսի ներկայութեան մէջ*:

«Այս բառերով կը խօսէի հագուայս հետ ամէն անգամ, որ առանձին մընայի. կրօնական խոր գգացումներ, զորս Սանկիսի փշեղերէն միասին բերի, սկսան արմատանալ Նազարէթի մէջ»:

Ս. Տ Ա Տ Ո Յ Ե Ա Ն

ՁԱՐԺԱՆԿԱՐԸ ԻՐԻՏԻ ՄԻՋՈՑ

Ըստ Փիևս Ժանանի գիրքին, իրլան-
 Թահան ազատագրական շարժումին հե-
 րսաները դատած եւ գործադրած են յե-
 զափոխական պատերազմի մը սկզբունք-
 ներուն մեծամասնութիւնը: 1913էն սկսե-
 Կա՛յ՝ անոնք միացուցած են նաեւ շար-
 ժանկարը իրենց պատերազմին, հանդի-
 սանալով «Պայքարող շարժանկար»ին
 զլիաւոր փորձառութիւններէն առաջի-
 նը: Ետքը երկար է Իրլանտայի եւ Ֆիլ-
 մարուհատի համադրածակցութեան սկի-
 սերով ճան Գորաէն մինչեւ Սթենլի
 Բիւպրիքի «Պարի Լինալն»ը, Իրլան-
 տայի պատմութիւնը միշտ ներկայաց-
 ւած է միջազգային պտտառներուն
 վրայ, թէեւ աւելի ուշ ծագած պա-
 տիստիկան հարցը սկսած է շարժել
 արար թէ այլ բեմադրիչներուն հետա-
 քրքրութիւնը: Տարբեր երկիրներու մէջ
 երևան եկած եւ պատիստիկան ինդիքը
 վերլուծող կամ դատը պաշտպանող Ֆիլ-
 մերը, իրենց յեղափոխական կեցուած-
 քով, պատասխաններ են ընդհանրապէս
 աւելի համաշխարհային գորտութեամբ ըն-
 թացող հրէական փրփականաին: Աե-
 լարդ է նշել փոխարարութեան կարե-
 ւորութիւնը: Թիւով՝ շատ, թեքնիքով՝
 անվիճելի, այդ Ֆիլմերը շինք տեսներ
 Լեթամանի կամ արարական երկիրներու
 մէջ՝ զբուծի արդիւթին պատճառով:
 Միջոցները առատ են, երբեմն միեւնոյն
 նիւթը քանի մը տարբեր արտադրու-
 թիւններու կ'արժանանայ, ինչպէս Լն-
 թէպիի հրեայ պատանդներուն տղատա-
 զբուծը, որ սեխարիոյի վերածուեցաւ ե-
 րեք ամերիկեան եւ մէկ հրէական ժապա-
 ւէններու համար:

Սովորական երևույթ է դրականու-
 թիւնն ու դեղարուեստը օգտագործել՝

մասածումներ, գզացումներ եւ խոհաներ
 հազարդերու իբրեւ միջոց: Այժմ ճայնը եւ
 նկարը կը հանդիսանան ազդեցիկ նոր
 ձեւ մը՝ շնորհիւ փոխանցումի ու սփռու-
 մի ընծայած դիւրութիւններուն: Ներ-
 կայ շրջաններուն զլիաւոր յատկանիչը
 արտաութիւնն է, որմէ կը ծնի ժամանա-
 կի պակասը: Յեղափոխական որեւէ պայ-
 քար, իրլանտական, պաղեստինեան թէ
 հայկական, կրկնութիւններու մէջ ինյա-
 ւով՝ ժամանակի բնթացքին կը ծանրա-
 նայ, կը դանդաղի եւ կը մարի: Ժամա-
 նակի փտանդաւոր գէնք մըն է լաւազոյն
 նպատակակէտը պանելու համար հարկ է
 նախ ընտրել արդիականը, նորազոյնը:

Պատկերասփիւռը արդէն մասած է
 ժամանակակից մարդուն անմիջական ա-
 սօրեային մէջ: Արեւմտեան երկիրներու
 մէջ անխուսափելի սովորութիւն մը դար-
 ձած այդ գործիքը ներշնչումներու եւ
 ազդեցութիւններու տղրիւր մըն է՝ մա'ս-
 նաւորարար փոքրերուն ու պատանինե-
 լուն համար: Արեւելքը, միշտ պատրաստ
 հետեւելու վերջին նորութիւններուն՝ կը
 կապիկ եւրոպան եւ Ամերիկան, պատկե-
 րասփիւռը անելով իբրեւ ժամանցի դիւ-
 բին եւ հետաքրքրական միջոց մը: Լիբա-
 նանի մէջ իսկ նոր սերունդներուն կեց-
 ւածքը իսխուած է ընկերային այս իրո-
 գութեան հետ: Իսրայէլեան աշխատանք-
 քէն եւ գոտադրեքերէն անդին՝ պատկե-
 րասփիւռը կը գրաւէ միաքը եւ շարժա-
 նկարը կ'ամբողջացնէ երևակայական
 ձգտումները: Անշուշտ գժբախտութիւն է
 տեսնել պատանիներ, որոնք դրականու-
 թեան պատկանող դիւրեքերէն նուազ հա-
 ճայք կ'աւանն, քան ժամը եօթի պատկե-
 րասփիւռային ամերիկեան ստիկանա-

կան շաքիչներ: Գիրք մը կարգալու. համար անոնք պիտի «յոյնեցնեն» իրենց միտքը, աշխատելով պատկերներու վերածել փոքր տառերով շարուած առգիրը (ժամանակի կորուստ կրնան համարել), մինչդեռ Ֆիլմը կու տայ թէ՛ պատկերը, թէ՛ խօսքը եւ թէ՛ երաժշտութիւնը, հետեւաբար եւ՝ արայ հաճոյքը: Դժուար է քաղքենի ներկայ դասակարգերուն սովորութիւնները փոխել: Հարկ է հարստացնել պայքարին ձեռք եւ լարերը հնչեցնել՝ ընդունակութեան բանալին գործածելով:

Մինչև. հիմա այդ սելուլոիդեան հայկական իրադարձումները թիւով քիչ են: Հայսենիքն ստացած ենք զեղեցիկ օրինակներ: Մեծ հետաքրքրութեամբ կը սպասենք Երևանի եւ Մոսկուայի սթուտիաներու գործակցութեամբ «Միսիար սպարապետ» Ֆիլմին ցուցադրութեան: Հայոց պատմութիւնը եւ հայ գրականութիւնը հաստատ կատարելով պատմական կամ ընկերային նիւթեր կը պարսնակեն: Անոնց հետ, այսինքն՝ յեղափոխական մեր դանազան պայքարներուն կողքին՝ իբրև ընկերային նիւթ՝ կարելի է առնել մեր ինքնութեան պրպտումը (լիբանոսայ, ֆրանսոսայ...), մեր լեզուական պայքարը, հայկական դիտակցութեան կազմաւորումը եւ, մեկնելով հաստատ արժաններէ՝ ստեղծել ընկերային, հոգեբանական շարժանկարներ եւ, ինչու չէ, դաւեչտներ...: Իբրև օրինակ կարելի է առնել հայֆիլմի արտադրութիւններէն «Երբ աշունը գայ» ժապաւնը, որ Փարիզի մէջ ներկայացուեցաւ սովետական Ֆիլմերու շաբթուան ընթացքին: Լաւ ընդունելութիւն դանելով, հետագային սարքեր հանդիսութիւններու ընթացքին կրկին ցուցադրուեցաւ: Նիւթը՝ Հայաստանէն գէղի օտարութիւն ճամբար դած իր աղջկան այցելութեան գացող մեծ հօր մը ապրումները: Ներկայացման սեւով Ֆիլմը հայր մասհարող կարեւոր հարց մը կը քննէ — ժողովուրդի մը աւանդութեան փոխանցումը սերունդէ սերունդ: Հայկական սովորութիւններով սպրող պատանայի ձերտնին կը ջանար իր զբաղումներէն եւ խորհուրդէն մաս



ՍԵՐԳԷՅ ՓԱՐԱՃԱՆՈՎ

մը փոխանցել թսնիկին: Թսնիկը կ'ընդունի մեծ հօր պատգամը, ինչպէս անոր աղջիկը, ինչպէս եւ փեսան եւ զբայնները, որոնք նախ մերժած էին հայորդութեան մէջ մտնել տարօրինակ թուացող այդ ձերտնին նետած բարեկամական կամարջին միջոցաւ: Ետժամկարին պատգամը հասաւ իր զապաթնակներին, երբ բաժանումի վերջին գիշերը, ձերտնիին մըթմըթացած ազգայնաշունչ երգին եկաւ ձայնակցելու իր աղջիկը: Անբաժելի հիւանդութենէ մը տառապող հայրը իր աշունք կ'աղբէր... հմայիչ ձեւով հասող յաւատեալ-յուսեալութիւնը անտարբեր չձգեց հանդիսատեսը...

Ետժամպատկերի հայկական ստեղծագործութիւններէն ուրիշ կարեւոր օրինակ մը՝ «Նոսն գոյնը»: Եթէ «Երբ աշունը գայ» սարդ սենարիսի մը ընդմէջէն կը ներկայցնէ ընկերային ընդարձակ տեսութիւն մը, Փարսճանովի վերջին ֆիլմը ինքնին բարդ խորհրդանիշ մըն

է ժողովուրդի մը «տըտը»ին, Մոյսիմ-
Նափայի կեանքին գուղընթաց :

Արեւմտեան արտադրութիւններուն
մէջ հայուադիւա յիշատակութիւններու
արժանացող հայը յստակ յաղափար մը
չի տար հայկական իսկական հարցին : Ան
սոփոքարար իբրեւ ճարպիկ առեւտրական
կը ներկայանայ օտար հասարակութեան :
Տարբեր երեւոյթ մըն էր Փրանք Գասան-
թիւ «Լաֆիշ բուժ»ը (1977), ուր ար-
գելական սճով կը պատմուէր Փրանսայի
մէջ «Մանուշեան խմբակ»ին նայիներու
գէժ տարած յեղափոխական շարժումը,
Համաշխարհային կրկնորդ պատերազմի
ընթացքին, անոր սնդամներուն ձերբա-
կալութիւնը եւ զնդակահարումը, գլխա-
ւարութեամբ Փիլմին մէջ բազմիցս նըշ-
ւած, «Ճաղումով հայ Մանուշեան»ին :
Փարսի Հանրի Վերնէօյին, փոքր նշմար-
ներ զետեղած է իր ժողաւէններուն մէջ,
բայց անոնք շատ անբաւարար յայտ-
նումներ են, երբ կը վերաբերին, օրինա-
կի համար, հայկական ուտելիքներուն,
ինչպէս «Լը Քաս»ին մէջ : «Օձը» Փիլմը
ասաջին անգամ ըլլալով սրոշ բացատ-
րութիւն մը կու տար Հայաստանի գրաւ-
ւած հողերուն մասին : Ճարտար մօտե-
ցումով (մերթ Հայաստանէն եւ մերթ՝
գրաւուած հողերէն նկարուած Արարատ
լեռը) շարժանկարին բարդ հանդոյցը կը
քակուէր ալլ տեսարանէն սկսեալ : «Մ-
րագի ճամբուլ»ը՝ Լիբանանէն, եւ «Եր-
ջանկութեան արցունքները»՝ Միացեալ
Նահանգներէն հայկական երկու փորձեր
էին երաժշտական շարժանկարի սեւին
մէջ, հիմնուած երկու յայտնի երգիչնե-
րու ժողովրդականութեան վրայ : Հան
կարելի չէ գտնել Փիլմարուեստի յատուկ



ԱՐՆԵՆԻ ՔԵՒՊՐԻՔ

ճիւղ կամ նայնիսկ մասհարութիւն : Եթէ
«Երջանկութեան արցունքները» Փիլմը
գտնէ թեքնիքի բաժինով ընդունելի է,
«Երագի ճամբուլ»ը վերլուծական ո՛չ մէկ
սոց կը վերցնէ : Վերոյիշեալ Փիլմերը
կարելի չէ հաշուի աննել պայքարներու
ուզիին մէջ : Մայրաղոյն պարաղոյն,
այսինքն՝ վստահելի բեմադրութեամբ եւ
կատարեալ խաղարկութեամբ կրնան հա-
ճելի գտնուի հանդիսատեսներուն : Անըն-
դունելի է Մփիւսքի մը ամբողջ արտա-
դրութիւնը կազմել երագի ճամբաներով :

Շարժանկարը՝ իբրեւ ընկերային
հարցերու ներկայացում եւ իբրեւ քաղա-
քական պայքարներու ընկերացող գէնք՝
ե՛րբ տլիտի սկսի արդեօք հայերուն հա-
մար :

ՍԱԳՕ ՏԱՏՈՅԵԱՆ



ՄՕՐԻՍ ՊԵՃԱՐԵ ՄԻԻՏՐԱ ԴՊՐՈՑՈՆ ՄԵԿ ԵԼՈՅՓԸ

ՊԱՐԸ ...

1960ին, «20րդ դարու պալէ»ն ստեղծած տանն, Մօրիս Պեժար իր բարեկամներուն կը յայտարարէր, որ պարր պիտի ըլլայ «Արաւեստը մեր ժամանակին»:

Շուրջ տասնամեակ մը անց, իր L'Alternative անուն դործին մէջ՝ մարքսիստ փիլիսոփայ Բոժէ Կարօտի Նիքոս Բազանձագլոտի հռչակաւոր դործին աւիթով կը դէքը, թէ՛

«Ձորպան աւրք մըն է մեր ժամանակներուն, որովհետեւ ան պարով կ'անձնաւորէ Էականը»:

Կարօտի հաստատումէն երեք տարի ետք, «Ֆիկարօ» գրահանի 8 Փետրուար 1975ի համարին մէջ, Լը Բյէզիոյի եղած ալն հարցումին, թէ ժամանակակից արուեստի արտայայտութիւններէն ո՞ր մէկը ըլլալոյն կը գրեւորէ կեանքը,

— Պա՛րը, — եղաւ երիտասարդ վիպասանին պատասխանը:

Մանաւոր պրպտումի մը պարագային՝ կը թուի, թէ անհատական կէ երկարել հաստատումներուն շարքը:

Պա՛րը...

Աւագ արուեստներուն ալք հնարոյնը, որ ըստ արուեստի տեսարաններուն, արեւմտեան աշխարհին մէջ սմբողջ դար մը սահմա-

նախակ թիւով մարդոց ու շրջանակներու միայն ծառայելէ ետք, այսօր դարձած է ճշմարտագէտ ժողովրդական արուեստ մը:

Վերջերս, Ֆրանսական եւ անգլիական թերթերը միաժամանակ լայն սիւնակներ սկսան տրամադրել պարին, ընդդէմով անոր հենասական նշանակութիւնը, ներկայացուցած ուժն ու հմայքը, ու ա՛յն կարեւորութիւնը, որ երիտասարդութիւնն ու հասարակութիւնը կ'ընծայեն այդ «չարժուն խնճոյքին»: Մօրիս Պեժարի պայծառ նախատեսութիւնէն ետք, կատարուած քննութիւնները ցոյց կու տան, որ այսօր միայն Ֆրանսայի մէջ հաստատուած են պարային 15 հարգար դասընթացքներ՝ 2 միլիոն աշակերտներով:

Ֆրանսացիները կը դանդաղան, որ այս թիւերը համապատասխան չեն անոց պահանջներուն եւ կը մեղադրեն կառավարութիւնը, որ կը շարունակէ պարը համարել... պարուհի մը: Արտայայտութիւնը իրենցն է, եւ ով գիտէ ի՛նչ է բառին պատկերացուցած երկրորդ իմաստը... պարուհի մը:

Միւս տպարկէրներուն պարայային՝ ընդհանրագէտ ժամանակէն բաւական ետ մնալու մեր տխուր համբաւին հակառակ, կը թուի, թէ այս մարդին մէջ նախանձելու քիչ պատճառներ ունինք մեծ ազդերուն: Հաստատումին հիմք ընծայող մեծագոյն կուուանը, անշուշտ, Հայաստանն է, ուր ուղիղ քառասուն տարիներէ ի վեր պետական հովանաւորութիւն կը մայելէ պարը եւ կը հանդիսանայ մտքերու փոխանակութեան ամէնէն աշխուժ երևոյթը: Մտքի խաղաղութեան ձեռքբերման ու «ուելի գեղեցիկ, աւելի ճկուն, աւելի երջանիկ ըլլալու» պատկաններուն խորագէտ նպատակ իր ուժին հետ՝ պարը ազգային յատկանիշներու գրեւորման մէկ ապահով ազբիւրն է նոյն առեւն, որուն հարազատութեան հաշույն հայրենի մեր մտաւորականներուն մտանած բծախնդրութիւնն ու մղած պայքարը մեր են ամէն գնահատանքէ:

Մեր պատմութիւնէն, ճակատագրէն ու էութենէն ցայտած իւրաքայտուելը, գեղեցիկը, մնալունը ընդդէմ ու օտարամուտ ու անհեթեթ տարրերը արիարար մտանանչոց գրութիւններուն մէջ մտքըւելիք երեւոյթներ չէին մտանաւորարար «Սովետական արուեստ»ի մէջ Մկրտիչ Արմէնի եւ «Գրական քերք»ի մէջ Կամարի Տօնայեանի հմտալից վերլուծումները:

Արեւմուտքի մէջ աստիճանաբար պարտութեամբ նոր թափին տարններ՝ Հայաստանի մամուլէն պարբերաբար քաղուածքներ պիտի ներկայացնենք նաեւ մենք, առաջնորդուելով այն մտածումէն, որ աւելի քան ուրիշները մեր ժողովուրդը պէտք ունի պատմութեան իր ժամանակները թարմացնող պարային հարգութիւններու...

Վ. Թ Ե Ք Ե Ա Ն

ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Ազատութիւնը անասնման է եւ որեւէ բանէ չէ, որ ծնունդ կ'առնէ: ԳԻՐՔԸՆԱՐՏ

ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Մարդս՝ ընտրելու ազատութեան համար Մարթը կ'արտայայտէ իր գա-
 րափարհերը այն յօդուածին մէջ, որ ստորագրած է «Les Temps Modernes»-ի
 1 Օգոստոս 1945-ի թիւին մէջ. «Մարդ էր ստեղծէ իր սեփական իսկութիւնը
 այն իմաստով, որ ան չի ստեղծեր մարդկութեան էութիւնը, այլ՝ առանձին
 անհատի մը էութիւնը, որ իբժէ գառ ուրիշ սեւէ անհատի մէջ չի դանուիր:
 Ինք է, որ կ'ընտրէ այն տեսակ մարդը, որ ինք կ'ուզէ ըլլալ: Ստիպան կան
 բաներ, որ մարդ չի կրնար յայթաճարել: Տկար եւ նիհար կողմուածքով
 մարդը ազատ չէ ընտրելու իրրեւ զօրաւոր եւ կոշտ: Տպէտը ազատ
 չէ ինքզինք ընտրելու իրրեւ լեզուապիտական հաճախ անգամ»: Մարթը կը
 շարունակէ բնութիւնը, թէ մարդը պարագայ մըն է շատ տուեալներով պայմա-
 նարկուած — իր ընկերային կեանքը, եկամուտը, իր դարձին բնոյթը, նաեւ
 իր զրպարմները եւ մտածումները ենթակայ են կարգ մը ազդեցութիւններու:
 Հակառակ այս բոլորին, Մարթը կը պնդէ, թէ ընտրութեան շրջանակը շատ
 ընդարձակ է. այս կապակցութեամբ ան կ'ըսէ. «Եթէ մենք անկարող ենք
 ընտրելու այն ընկերային միջավայր, որ ապրած ենք եւ ոչ ալ կողմուածքը
 մեր մարմնին կամ մտքին, գիրքը՝ զոր մենք կ'որոշենք օրգեղբել մեր գասա-
 կարդին կամ մեր Ֆիզիքական կացութեան հանդէպ, վերջին հաշուով մեզմէ
 կախեալ է: Գործաւորը ազդեցութեան տակն է իր ընկերային դասակարգին,
 սակայն ինք է, որ իմաստ կու տայ իր եւ իր պաշտօնակիցներու կացութեան:
 Ինք բանուորներու համար ապրողայ գետին մը կը պատրաստէ կա'մ համա-
 կերպելով այդ status quoին, կամ ապրտամրելով անոր դէմ: Ես եթէ անդա-
 մալոյժ եմ (անկարող), վստահաբար ես չընտրեցի անգամայուծութիւնը —
 ես ազատ եմ ընտրելու կամ ընդունելու որեւէ կեցուածք իմ անգամալուծու-
 թեանս հանդէպ: Մարդ կ'ընտրէ իր էութիւնը բայ իր նախընտրութեան, եւ
 ընտրելու ազատութիւնը սոսման չի ճանչնար»:

Մարթը կ'ըսէ, թէ միւս բոլոր փիլիսոփայութիւնները ընտրութեան
 դատանիչ մը կը դնեն: Եպիկուրիականութեան մէջ այդ ստուգանիչը հա-
 ճույճ է, Քոնֆի դրապաշտութեան մէջ այլասիրութիւնը եւ անձնագրահութիւնն
 են, կրօնական վարդապետութիւնները կ'ըսեն, թէ ան Աստուծոյ սէրն է, սա-
 կայն Մարթը որեւէ դատանիչի մը գոյութիւնը կ'առնէ իրրեւ մարդու ազա-
 տութեան սոսմանաճշգրտմ: Որովհետեւ ատիկա իր գոյութեամբ իսկ կը նշա-
 նակէ, թէ արարքները որոշ խողովակէ մը պէտք է ընթանան եւ այլեւս ազատ
 չեն կրնար բլլալ, նոյնիսկ եթէ շեղին այդ դատանիչէն: Անոր համար է, որ
 Մարթը կը մերժէ որեւէ դատանիչի կամ սկրքունքի գոյութիւն եւ կ'արտօնէ

որեւէ նպատակ ընտրելու բացարձակ ազատութիւն, ստանց սահմանադոմարի: Առիկա տրամաբանական արդիւնքն է իր էութեան անսփոփոխելիութեան ժխտումին: Ընտրութիւնը գինք արդարացնող ազդակէն կախեալ չէ, որովհետեւ միայն մեր ազատութիւնն է, որ կ'արդարացնէ մեր ընտրութիւնը: Եւ մեզմէ իւրաքանչիւրը ազատորէն կը զետեղէ շափանիչները Բարիին, Գեղեցիկին, Ճշմարիտին, իրեն համար միայն, ստանց ստրնչելու որոշ կամ բացարձակ որեւէ շափանիչի:

Ազատութիւնը, Սարթրի կարծիքով, կը նշանակէ, թէ մենք կը յայտնաբերենք այն միջնորդները, որ մեզ կ'որոշեն տանց որ մենք գիտակցինք անոնց: Եւ այս միջնորդներուն նկատմամբ մեր ընտրութիւնը չէ որոշուած կամ պատճառաբանուած: Այս ձևի ազատութիւն մը կը նշանակէ անհատին ինքնայօժար ինքնալարութիւնը եւ դոյութիւն ունի միայն գիտակցութեան մէջ, որովհետեւ մարմինը ենթակայ է աշխարհի որոշադրութեան, սակայն գիտակցութիւնը դոյութեան ազատ արտաբխումն է:

Գիտակցութեան առջև գիտակցութենէ զատ սչինչ կայ եւ մարդը կ'ապրի այս ազատ արտաբխումին շնորհիւ: Ազատութիւնը առանձնաշնորհում մը չէ, զոր միայն ազատ արարքները կը վայելեն, այլ՝ դպացումներ, գլայնութիւններ, համակրանքներ, ցանկութիւններ եւս ազատ են, որովհետեւ անոնք են ենթակային կողմէ ընտրուած վիճակները: Օրինակի համար, իմ վախս, որ կ'ենթադրէ իմ ազատութիւնս, որովհետեւ ես ինքզինքիս վախը ընտրեցի տուեալ կացութեան մը ներքեւ, ազատ է: Սարթր կը շարունակէ ըսելով, թէ մեր բոխանդակ հոգեբանական կեանքը ազատ է:

Այստեղ կ'ընդդռուի մեծագոյն տարաբանութիւնը (paradox) գոյութեանապաշտութեան, ըստ որուն ազատութիւնը ամենակարեւոր յատկանիչն է մարդկային իրականութեան եւ ինք-իր-մէջ էութիւն մը չէ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Սարթրեան պատասխանատուութիւնը տարրեր բնութիւն այս բառին հասարակ դործածութեան: Սարթր օրինակով մը կը բացատրէ այս դպացումը: Մարդ մը, որ կ'ողբայ Քրանոսկան 1940ի աղէտքը, անկարելի պիտի գտնէր այդ ընել, եթէ այդ եղբրական վախճանը տեղի ունեցած չըլլար: Իր սղբով ան կը հաստատէ աղէտքին դոյութիւնը իր կապակցութեամբ, եւ այդ կը կերպընկալէ իր դպացումը այդ աղէտքին հանդէպ: Մենք պատասխանատու ենք ինչ որ կը ստեղծենք մեր մէջ իբրեւ մտածումներ, գլայնումներ եւ համակրանքներ: Պատասխանատուութիւնը, ըստ Սարթրի, զուտ հոգեբանական է:

Մինչեւ հիմա բուռններէն կարելի է հետեւցնել, որ դոյութեանապաշտութիւնը ուժական եւ լաւատես տեսակէտ մըն է, որովհետեւ նկատի կ'առնէ գոյութիւնը իբրեւ շարունակական ներընկալում մը, ներքնթացութիւն մը եւ մտկանցում մը: Մարդ մը կը դերագանցէ ինքզինք իր դոյութեան ընթացքին, որ Անհոռութեան բաց դուռն է: Սարթրի համար դոյութեան դուռը միշտ բաց է, բայց ի'նչ նշանակութիւն՝ երբ ան կ'առաջնորդէ ոչ-ըլլալու կամ սչնչութեան: Սարթրի կարծիքը աշխարհի եւ մարդու մասին կրնայ յատակացնել այս կէտը: Բայց նախ՝ անաստուածեան դոյութեանապաշտութիւնը:

ԱՆԱՏՈՒԱԾԵԱՆ ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ամենամեծ մեկնիչը Ժան-Փօլ Սարթրն է, իր կնաջ՝ Սիմոն ար Պօլուարի եւ այլ գրողներու հետ, ինչպէս Ալբեր Գամիլու եւ Ժորժ Պաթայ: Սարթր սահմանած է իր փիլիսոփայութիւնը իր ամենակարեւոր գոր-

Թեան (phenomenological ontology) գրափորձի մը մէջ. եւ որովհետեւ այս գործը որոշ կէտեր ունէր, որոնք պէտք է պարզարանուէին եւ բնդւայնուէին, Մարթը ուրիշ գործեր գրեց, սրտնցմէ կարեւորագոյնը զիրք մըն է, խորագրուած՝ «Գոյութեամբապաշտութեան մասին», յետոյ ուրիշ գործ մը, խորագրուած՝ «Գոյութեամբապաշտութիւն եւ մարդկայնապաշտութիւն», 1946ին. անկէ ետք է, որ հրատարակեց «Les Temps Modernes» թերթը, ուր ստորագրած են Մարթի գոյութեանագալտ հետեւորդները եւ մտաւորականներ:

«Action» թերթին մէջ իր հրատարակած գրութեան զլիսաւոր կէտերը Մարթը այսպէս կը դասաւորէ. «Իմաստասէրներու լեզուին մէջ խրաքանչիւք արարած էութիւն մը եւ գոյութիւն մը ունի: Էութիւն կը նշանակէ շարք մը յատկանիշներ, եւ գոյութիւն՝ ուղղակի ներկայութիւն աշխարհի մէջ: Շատեր կը հաւատան, որ էութիւնը կը նախորդէ գոյութեան եւ այս ձևի հաւատք մը իր սրմատը կրօնական գաղափարի մէջ կը դանդ: Ան՝ որ պիտի տուն մը շինէ, նախ պէտք է զիտնայ տեսակը եւ ձևը այդ տան, այսինքն՝ անոր իսկութիւնը անոր գոյութենէն առաջ: Եւ անոնք, որ կը հաւատան, թէ Աստուած ստեղծեց մարդը, ըսել կ'ուզեն, թէ Աստուած մարդը ստեղծելէն առաջ ունեցած է պայտար մը: Նոյնիսկ անոնք, որոնք որեւիցէ կրօնք կամ հաւատք չեն խոստովանիր՝ կ'ընդունին այն գաղափարը, որ բան մը գոյութիւն կ'ունենայ համաձայն որոշ էութեան մը: Ժէ. դարուն կը հաւատային, թէ կայ ընդհանուր իսկութիւն մը բոլոր մարդոց համար — այսինքն՝ մարդկային բնութիւնը:

Սակայն գոյութեանագալտութիւնը, ընդհակառակն, կ'ընդունի, թէ միայն մարդուն մէջ գոյութիւնը էութեան կը նախորդէ եւ այս կը նշանակէ, որ մարդը գոյութիւն կ'ունենայ նախ, ապա այս կամ այն կ'ըլլայ: Մարդը դուրս ձգելով, էութիւնները կը նախորդեն գոյութեան այն իմաստով, որ բոյսերու իսկութիւնը իրենց հաւտին մէջ է, եւ անասունինը՝ ապրող բջիջին. այս գործարաններու աճումը ինքնապօր որոշականութեան ենթակայ են, ինչ որ է պարտական անշունչ աշխարհին»:

Մարդը կ'ընդունի բնութեան որոշագրութիւնը, իր պատճառագիտութիւնը սակայն անկէ կ'արտաւանչ մարդը եւ մարդկային գոյութիւնը:

Ա Շ Ե Ա Ր Հ Ը

Մարթը կը պանդոտէ աշխարհը-ինը-իր-մէջ եւ աշխարհը ինք-իրեն-համար ձևերը եւ կ'ընդունի, որ մտածումէն կամ զիտակցութենէն դուրս գոյութիւն ունի ինք-իրեն-համար բան մը (en-soi), որ գիտակցութիւնը չէ: Այս գոյութեան կամ գոյութեան պէմքը չի կրնար ուրիշ կերպ ըլլալ իր եղածէն եւ պատճառակալուած կամ աննպատակ չէ: Ան գոյութիւն ունի տուննց արարիչի, սրարիչը անհրաժեշտութիւն մը չէ: Անոր գոյութիւնը անի-նիմաստ է, աւելորդ, եւ այդ ոչ այս է ոչ այն, այլ՝ տնհեթեթ հիմնապատճառ մը, ենթալու մը, որ գիտակցութիւնը չէ ըմբանած: Այս ինք-իր-մէջ աշխարհը իմաստ կը հաղուի իմ միջոցովս եւ է ինչ որ կ'ըլլայ միայն զիտակցական արարքով մը:

Այս աշխարհը միայն թափանցիկ, յտակ, անկեանք իրողութեանակա-նութիւն մը չէ, ինչ որ ընդհանրապէս մարդիկ կը մտածեն: Աշխարհը, մարդերը, ժողովուրդները եւ ժամանակները կը փոխուին: Օրինակի համար, ար-ւեստապէտը, երկրաբանը, երկրաչափը, հովիւը, գործաւորը տարբեր գաղա-փարներ պիտի դոյայնեն միեւնոյն տեսարանին առջև: Ուրեմն, Մարթը կ'ը-

աէ, մարդ կը ստեղծարարձէ իրական աշխարհը, որ գոյութիւն ունի իրեն համար, իսկ այս աշխարհը կը տարբերի մեզմէ իւրաքանչիւրին սնուցած նըպատակին համաձայն: Հայտը կը ըսած է, որ բաները մեզի համար գործիքներ են եւ եթէ որեւէ յարաբերութիւն չկայ գործիքներուն եւ մեր հետապնդած նպատակներուն միջեւ, բաները պիտի անդոյ թուին: Նոյն բանը կըրոնայ գործածուիլ տարբեր նպատակներու համար, համաձայն տուեալ անձերու:

Այս աշխարհը, որ սաջեւ է, նախ կը յայտնէ իր գոյութիւնը իբրեւ իսկական գոյութիւն մը, կը յայտնուի իբրեւ կազմուած եւ խոչընդոտ, բայց միեւնոյն ժամանակ յոյս կու տայ իմ գոյութիւնս եւ ծրագրիչներս: Սարթը կ'ըսէ, թէ այս աշխարհը մարդկային կացութեան սկսելու կէտն է եւ մենք կ'ընտրենք աշխարհը ոչ թէ ինք-իր-մէջ, այլ՝ մեզի համար իր ունեցած նշանակութեամբ, երբ մենք մեզ կ'ընտրենք: Այս աշխարհը մեզի համար տարբեր է ինք-իր-մէջ աշխարհէն: Աշխարհը-ինքզինքին-համար գոյութիւն ունի միայն մեր միջոցով եւ մենք անկէ կախեալ չենք, այլ ան՝ մեզմէ: Գիտակցութեան նկարագրած աշխարհը միայն կրնայ գոյութիւն ունենալ: Սարթը կ'ընտրէ Հայտը իր սին խօսքին — ես այն արարածն եմ, որուն միջոցով ամէն բան գոյութիւն ունի, — կը վերադարձնէ մեզի Նիցչէի այն պնդումը, թէ այն աշխարհը, որուն հետ մենք ուղղակի փորձառութիւն ունինք՝ իրաւ եւ միակ աշխարհն է եւ ոչ թէ գառաւորած փորձառութիւններու շարք մը, ինչպէս կ'ըսէր Տեքսթ:

Աշխարհը բաներու աշխարհը չէ, որ ունինք, բաներ, որոնք Անձ մը չեն, անոնց ասարկայականութեան համար: Այլ՝ աշխարհը, մասնաւորելու համար, երեւոյթ մըն է նոյնինքն Անհատին: Գիտելով աշխարհը իբրեւ Անհատին մէկ երեւոյթ կրնայ տարօրինակ թուիլ. այս հակադրեցութիւնը մասամբ կը ցոլացնէ իրողութիւնը, որ երբ մենք մտածենք աշխարհի մասին, կը փորձենք բանի ճիշդ ինչ որ կ'ուզենք բանի աշխարհով, աշխարհը առարկայանելու մեր մղումը, անսկսելու պոյն իբրեւ տարածքայնորէն ընդլայնող Ֆիզիքական այլակցութիւն մը: Այս այլակցութիւնը, յամենայնդէպս, առարկայական մասնումի աշխարհն է, պատմապէտին, աշխարհագրէտին, աստղագրէտին աշխարհը: Ինչ որ կը հետաքրքրէ Հայտը կըրը, Ֆիզիքական աշխարհը չէ, այլ՝ երեւոյթը, աշխարհը, որ ինքզինք կը յանձնէ մեզի իբրեւ անմիջական մասը մեր հիմնական իրաջիճակին, լինելութեան աշխարհի մէջ: Հայտը կըրը բառերով՝ հարցը ոչ թէ պարզապէս աշխարհն է, այլ՝ աշխարհայնութիւնը աշխարհին:

Աշխարհի գոյութիւնը այնքան չի հետաքրքրեր զինք, որքան անոր ձեւը, կամ աւելի ճիշդ՝ նշանակութիւնը անոր լինելութեան: Կրնայ ըլլալ որ, կը դրէ Հայտը կըրը, աստուածները հետապնդ են եւ աշխարհը կը մթննայ, բայց Լինելութիւն եւ ժամանակի Հայտը կըրը իմաստաւէր մըն է, որուն համար այս կեանքը այս աշխարհի մէջ բաւական ըսէ:

ՈՒՐԻՇ ԱՆՀԱՏՆԵՐ

Միայն մէկ գիտակցութիւն եւ մէկ մարդ չկայ, ուրիշ մարդեր ոչ կան, որոնք ինծի պէս գիտակցութիւն ունին: Ի՞նչ է իմ պիքս անոնց հանդէպ: Սարթը կը պատասխանէ. — ես միւս անհատները նախ եւ առաջ իբրեւ իրենք-իրենց-մէջ բաներ նկատի կ'առնեմ, աշխարհի մէջ գոյութիւն ունեցող ուրիշ ասարկաներու եւ բաներու պէս: Անոնք գոյութիւն ունին ինծի համար

Երբ որ անոնք իմ ծրագիրներուս մէկ մասը կը կազմեն : Նախապէս անոնք ինծի համար գոյութիւն չունէին : Իրենց գոյութիւնը ինձմէ կախեալ է : Բայց ես գիտեմ, որ անոնք ալ զիտակցութիւն ունին, եւ մասնաւոր գոյութիւն մը՝ իրենք-իրենց-համար : Կը գիտեն աշխարհը իրենց սեփական ակնոյններով, այն չափով, որ իրենց հետ կապակցութիւն ունի ան, եւ ունին ծրագիրներ, որոնց համար ուրիշ բաներ կ'օգտագործեն : Երբ ես զգամ ինձմէ զուրս զանը-ւայ զիտակցութեան մը գոյութիւնը, պայքար մը ծայր կ'աւանդ իմ եւ այդ միւս զիտակցութեան միջև : Ինձի կը թուի, թէ ինք-իր-մէջ ասարկայ մը-միջոց մը իր մէջ զարձած եմ ասրբեր զիտակցութեան մը համար եւ այդ զիտակցութիւնը իր մէջ եւ իրեն համար գոյութիւն կու տայ ինձի : Երբ որ հանրային պարտէյի մը մէջ, օրինակի համար, կը գիտեմ արձան մը, որ կանգնած է արժուի ծոսերու ներքեւ, այդ տեսարանը ինձի համար գոյութիւն ունի : Բայց երբ պատահի, որ ուրիշ անձ մը կտեսնուի կայնի եւ զիտէ նոյն տեսարանը, այս պարագային՝ զիս այ նեռարեայ, ես այդ տեսարանին մէկ մասը կը կազմեմ եւ գոյութիւն կ'ունենամ այդ միւս անհատին համար : Կարծես այդ միւսը իչեց իմ գոյութիւնս, քանի որ ես իր զիտակցութեան մէկ մասը սկսայ կազմել : Երբ այսպէս՝ զգանք որ ուրիշներու համար մենք իրենք-իրենց-մէջ միջոցներ զարձած ենք, կ'ամչնանք կամ կ'ընդգզինք, որովհետեւ միւսին զիտակցութեան մէջ գոյութիւն ունեցող այդ երեւակայութեամբ րանին վերածուած ենք :

Ամօթը, ըստ Մարթի, յանցանքի, սխալի կամ մեղքի մը արդիւնքը չէ, այլ՝ ամօթը այն զգացումին, զոր մենք բանելու աշխարհին մէջ դեռեցեր ենք : Մարթը հասկէ կ'եզրակացնէ, թէ մարդկային ընկերութիւնները չեն հիմնուած այն եզրայրասութեան սկզբունքին վրայ, որ բանաստեղծները եւ փոխտախտները կ'երազեն : Մարդոց միջև եղած յարաբերութիւնը միմիայն պայքար եւ բախում է : Մեզմէ իւրաքանչիւրը կ'ուզէ գոյատեւել, ապրիլ, իրապարծել իր ծրագիրները, բոլոր ինքզինքը եւ ոչ թէ բան մը ինք-իր-մէջ ուրիշ անձի մը համար : Մեզմէ իւրաքանչիւրը կը փորձէ անտեսել միւսներուն իրագործումները, հնարասր եղած շփոթ գերի պարձնել եւ շահագործել զանոնք, իր նպատակներուն համար : Այս օրէնքին նոյնիսկ սէրը բացառութիւն չի կազմեր : Սիրողը կ'ուզէ սեփականացնել սիրածը, ինչպէս որ մենք օրեւէ ինք-իր-մէջ բան կը սեփականացնենք : Բանին եւ սիրուածին ասրբերութիւնը այն է, որ վերջինը մարդկային էտի մըն է, ազատ սրարած մը : Սէրը ուրիշ բան չէ, եթէ ոչ անձկութիւնը տեսնելու սիրուածին անձը իւրացուած, նոյնացած սիրողին անձին մէջ : Սէրը արկածախնդրութիւն մըն է, որ իւրաքանչիւրը կ'ուզէ սեփականացնել միւսը :

Գոյութեան բազմաոքութիւնը կամ մարդու եւ զիտակցութեան գոյութիւնը հիմնականոն ոճիրն է, որ կը գերաճնչէ մարդուն վրայ :

Երբ ես ուրիշի մը գոյութիւնը զգամ, ինքզինքս իր զգացումներուն եւ մտածումներուն մէկ մասը կ'ենթադրեմ : Ան՝ որ ուրիշներու գոյութիւնը կը զլայ, ինք իր գոյութեան մէջ անարդուած կը զգայ : Սիմոն աը Պօլսար կը պատմէ պատմութիւնը անձի մը, որ երբ տեղեկացաւ իր դրոցիին տղուն մահուան՝ խնդայ, երբ իր դրացին կու լար, եւ երբ տեսաւ, թէ ան կու լայ, ինք ալ սկսաւ լալ՝ զրալով իր սխալը ո՛չ թէ խնդալու կամ լալու արարքին մէջ, այլ անոր համար, որ ան ցուակից զարձաւ ուրիշ մարդու մը՝ զլալով զայն, այսպիսով դաւանալով ուրիշ մարդ մը :

Մ Ա Ր Դ

Քերքըհարս կ'ըսէ իր «Տեսակետ»ին մէջ. «Անհտար տյն քաթեկորին է, որուն մէջէն... այս դարը, բովանդակ պատմութիւնը, մարդկային ցեղը իբրեւ ամբողջութիւն, պէտք է անցնի»: Իսկ Հատըրը, նախադասարարը արդի դոյութեան պաշտօնական, կը շեշտէ. «Իրաւ. փիլիսոփայութիւնը պէտք է իր հիմը օրոնէ բացարձակագէտ մարդուն մէջ եւ, աւելի մասնաւորելով՝ աւոր աշխարհային դոյութեան ճշդ իրա կաթեան մէջ»:

Ըսինք, որ աշխարհը, Մարթրի համար, ինք-իր-մէջ առարկայ մըն է, մարդկային մարմինը՝ նոյնպէս: Մենք աշխարհի մէջ ենք մարմինի միջոցով, որ ոչ թէ տրուած կամ աւելցուած է անձին վրայ, այլ, բնդ-հակառակն, անիկա հիմնական եւ անփերջանայի պահանջն է գիտակցութեան կարելիութեան եւ անոր աշխարհընկալումին: Մարթր կ'ըսէ, թէ մարմինը անհրաժեշտ է գիտակցութեան համար, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ մարմինը, եւ ամէն բան, որ գիտակցութեանն անդին է՝ ոչինչ է, դոյութիւն չունի:

Անձը, Մարթրի համար, աննիթականութիւն մը չէ, այլ՝ մարմնական յատկանիշ մը. եւ գիտակցութիւնը կարելու որ ինքնաբաւ բան մը չէ, այլ՝ պարզագէտ ուրիշ յատկանիշ մը: Գիտակցութիւնը, ինչպէս Տեքարթ բաւ, ուղղակիօրէն գիտակից չէ ինքզինքին, այլ արիշ բանի մը, որ եթէ ջնջուի, կ'ոչնչացնէ գիտակցութիւնը: Մարթր իր գիտելիքին (knowledge) մէջ գանազանութիւն չի գնէր գիտցուողի եւ գիտցուածի միջեւ. կ'ընդունի, որ միայն գիտցուածը դոյութիւն անի: Գիտապաշարը, Մարթրի համար կը նշանակէ այն դրացումը, որ մենք այդ գիտցուած բանը չենք: Երբոր չերա մը թուղթի մտապատկերը ունենամ, ես թուղթ չեմ դառնար, այլ՝ հակառակը, կը դրամ, որ ես այդ թուղթը չեմ: Գիտութիւնը պարզ նշան մըն է, որ առարկան կը յայտնէ մեզի, թէ մենք այդ առարկան չենք: Գիտակցութիւնը միշտ բանի մը գիտակցութիւնն է, եւ գիտակցութիւն մը չկայ, որ ոչ մէկ բանի է: Գիտակցութեան մէջ հաստատ պիճակներ չկան պատկերներու, յիշատակներու, ցանկութեան, սիրոյ, ատելութեան կամ համակրանքի: Սակայն գիտակցութեան գուրս գանուող բաներու հանդէպ զերքեր կոն, անցեալի կամ ապագայի հանդէպ, ներկայի կամ անցեալի, իսկաջի կամ անիկաք անձի մը նկատմամբ: Այսպիսի գերք մը որոշ բանի մը արդիւնքը չէ, որովհետեւ գիտակցութիւնը ինք-իր-մէջ դոյութիւն չունի, այլ՝ ոչնչութեան մէջ: Գիտակցութիւնը անկութիւն է եւ միայն բներեւոյթներ են, որոնք դոյութիւն ունին:

Սակայն գիտակցութիւնը միշտ կը ջանայ ինք-իր-մէջ բան մը ըլլալ եւ սպաս է ինքզինք բնարելու: Ուրեմն՝ գիտակցութեան մէջ ամէն ինչ գիտակցութեան շինողն է: Հետեւաբար, կ'ըսէ Մարթր, ես եմ պատճառը ինքզինքրիս, դոյութիւն ունիմ, որովհետեւ կ'ուզեմ: Մարդը ուրիշ բան չէ, եթէ ոչ անպէտք կիրք մը, որ չէ շարունակուած որեւէ որոշ բանի կամ կութեան հետ:

Նախապէս ըսինք, որ Հայաքիրբի համար, մարդու՝ աշխարհի մէջ որոշ տեղ մը դնուելու իրողութիւնը, եւ անհասկանալիութիւնը, թէ ինչո՞ւ ա՛յդ տեղն է՝ կը կոչուի նետուածութիւն կամ ինկածութիւն: Նետուածութեան զգացողութիւնը հաստատապէս կը հարգողէ մարդուն դանելու ինքզինք աշխարհի մէջ տեղ մը անփերջութեան ձեւով մը, մինչ, միեւնոյն ատեն զայն պատասխանատու նկատելով իր լինելութեան — Գրանց Քաթրայի հիմնական թեմաներէն մէկը:

Երկրորդ ձեւը Հայաքիրբի՝ մարդու ինքնաճանաչումի այն է, որ Ան-

հասին դիւտը աշխարհի մէջ աշդտեղ ըլլալու կ'աղչուի իր տրամադրութիւններէն, դրականօրէն՝ իր ներդաշնակութենէն, որուն եղանակներէն Անհատը կը սորվի, թէ ինչպէս կ'ընթանան բաները Անհատին համար: Սարթը կ'ըսէ, որ իմ անձս կ'երեւայ իբրեւ առարկայ մը, որ ունի վարմունքի բացատրելի եղանակներ, բայց կը պարփակէ ոչ իմ ճշմարիտ իրականութիւնս, ոչ ալ էութիւնս:

Այս համոզումը սակայն, որ մարդու մը զգացումներուն կամ տրամադրութիւններուն համաձայն կ'որոշուի իր գիծակը աշխարհի մէջ, առանց համընկնելու դործնական մտածելակերպի, այնքան ալ լայն ընդունելութիւն չէր գտած անդլիական կամ ամերիկեան փիլիսոփայութեան մէջ, ուր զգացումները պիտակուած էին իբրեւ «պարզապէս զգացումներ»: Միւս կողմէ, Հեկեյլ, որուն բանաստեղծութիւնը ընդհանուր նպատակակէտ մըն էր բոլոր գոյութեանպաշտներուն, հաստատած է ճանաչողական նշանակութիւնը զգացումներուն, այսինքն՝ զգացումները օրինաւոր, թէեւ ցած աստիճանի, ձեւեր են, որոնցմով ճշմարտութիւնը կրնայ հասկցուիլ: Նոյն յատակին չէ՞ հպած քանատեղծ Պայրըն, երբ կ'ըսէ՝ մարդը, այս ճօճանակը Ժպիտի եւ արցունքի միջեւ: Իսկ ամերիկացիներուն իմաստուն Աւոյթ Աւթիմընը ուրիշ բան կ'ըսէր. «Ես ծայրակէտն եմ նուաճուած բաներու եւ ներկայիս կ'ըմբռնուած ըլլալիքներուն»:

Մ Ա Հ

Քիրքըկարտի համար յաճախեք է անորոշութիւնը մահուան — մահը այնքան նենդ կրնայ ըլլալ, որ կրնայ գալ վա՛ղը: Իմ մահս, կ'ըսէ ան, երբ որ դայ ընդհանուր բան մը պիտի չըլլայ, մեռնելու ակնթարթ մը պիտի չըլլայ պարզապէս: Ան մշտակայ կարելիութիւն մըն է, որ կը պահանջէ իմ բացարձակ ուշադրութիւնս: Եւ ինչ անտիճան, որ ես ենթակայական ըլլամ, մահուան անորոշակիութիւնը կը յառաջանայ գիւղիկափկականօրէն ներմուծուելու ենթակայութեանս մէջ, եւ յաւելալ կարեւորութիւն կը ստանայ ինծի համար մտածել իր մասին կեանքիս իւրաքանչիւր արարքին կամ հանգրուանին: Այնքան ատեն, որ անորոշութիւնը հոն է ամէն բողէ, ան կրնայ յաղթելի՛ միտյն ամէն վայրկեան դոյն յաղթահարելով: Ուրեմն այտեղ ոչ թէ մահուան անորոշութեան մտածումն է, այլ՝ անորոշութիւնը ինքնին՝ մահուան, որ կը միաձուլուի անհատին ենթակայականութեան մէջ այնպէս մը, որ կը հանդիսանայ անոր գոյութեան մէկ կարեւոր մասը: Պորթին մէջ, Քիրքըկարտ ներայնացուցած եւ անձնականացուցած է մահը:

Հայտըկըր նոյնպէս մահը ներայնացուցած է: Կ'ըսէ, թէ իրողութիւնը, որ ուրիշներ կը մեռնին, անհատին սահմանափակութիւնը մտաշելի կը դարձնեն: Ի՞նչ նշանակութիւն ունի մահը այն անձին, որուն համար մահը իր ըլլալու մէկ կարելիութիւնն է: Հայտըկըր կ'ըսէ, թէ թէպէտ ուրիշներ կրնան լեցնել իմ անզս կեանքիս մէջ, սակայն ոչ ոք կրնայ մեռնիլ ինծի համար: Մահը իմս է իր իւրաքանչիւր մտերմութեամբ եւ տարբեր է այն իմաստէն, որ ուրիշ գործունէութիւններ իմս են, որովհետեւ այդ միւս դործունէութիւնները միշտ ալ ուրիշներու կողմէ կրնան իրապօրծուիլ: Մահս կրնայ նկատուիլ նաեւ ինձմէ ստորադաս բան մը, որովհետեւ անիկա չէ տակաւին ան, որ կը պատկանի իմ լինելութեանս. այսինքն՝ ես իբրեւ անձ կը նկատուիմ իբրեւ ոչ տակաւին կատարելագործուած ամբողջութիւն, կամ բան մը, որ իր վերջաւորութեան կը հասնի: Հայտըկըրի համար մահը այլեւս Անհատ մը չըլլալու կարելիութիւնն է: Գերմաներէն բառը, որ հոս իբրեւ Անհատ կը գործածուի բառացիօրէն կը թարգմանուի իբրեւ «հոն ըլլալ»: Աւելի դիպուկ

է Հայտըկըրի սահմանումը մահուան՝ կարելիութիւնը այլեւս «հոն չըլլալու» (աշխարհի մէջ) : Մահը նաեւ չի նմանիր անհատին այլ կարելիութիւններուն՝ անով, որ ան անխուսափելի է :

Եթէ վերջիչենք, որ սոսկումը աշխարհի մէջ ըլլալու՝ Հայտըկըրի կողմէ նկատուած է իբրև աշխարհի մէջ ըլլալու իրողութեան համար եղած սոսկումը, սոսկումը Անհատին համար կը ստեղծէ պատահութիւնը իր ըլլալիք ուժը հաստատելու : Կործ, աշխարհի մէջ ըլլալու սոսկումը միաժամանակ առիթ է եւ վերջաւորութիւն : Աշխարհի մէջ ըլլալու սոսկումը կ'աւրնչուի մեր լինելութեան բնոյթը որոշելու պատասխանատուութենէ փախուստ տալով : մահուան երկեղը կ'աւրնչուի մեր լինելութեան : Հայտըկըրի գերբը կը յիշեցնէ Համէլթի նշանաւոր մենախօսութիւնը, որուն գլխաւոր հարցը ոչ թէ իր կեանքին ինչպէս ուղղութիւն տալն էր, այլ՝ երբեւեցէ տալիլը :

Մահուան անխուսափելիութիւնը կ'անձնականացնէ անձը : Կարելի է յիշել Թորստայի «Իվան Իլյիչի մահը» : Իր բովանդակ կեանքի լինելոցին Իվանը հոն էր այն խորհանքին, որուն իբր հեռեւանք տարած էր ինչպէս Մէկը կ'ապրի, ընդօրինակած էր առաքինութիւնները տխար անձերու : Իվանի սեռային գործունէութեան համար, օրինակի համար, Թորստայ կը գրէ . «Եղած էր մաքուր ձեռքերով, մաքուր սաւանի վրայ, Ֆրոնսական նախադասութիւններով, եւ աւելին՝ լուսադոյն դասակարգի անձերու հետ եւ բարձր դասակարգի գնահատումով» : Սակայն իր մտեցող մահուան աճույ գիտակցութիւնը կը փարատէ խորհանքը . «Ան (Իվան) երկարեցաւ կոնակին վրայ եւ սկսաւ վերատեսութեան ենթարկել իր կեանքը նոր ձեւով մը . . . Մենց մէջ (իր հեռեւանքը) կ'ինը, աղջիկը, բժիշկը) ան տեսաւ ինքիներք — այն բայերը, որոնց համար ապրած էր — եւ տեսաւ յոտիօրէն, որ իրաւ չէր երբեք, ան ահաւոր եւ հակայ խորհանք մըն էր, որ իր ետին թաքցուցած էր կեանքը եւ մահը» :

Իվանի համար մահը կը կորսնցնէ իր սարսափը, երբ ան կ'ազատագրէ ինքզինք անոր համար, եւ չի ջոնար արգարացնել իր կեանքը : Հաս կաւ դայ Հայտըկըրի նշումը, որ միայն մահուան համար ազատ ըլլալու վիճակն է, որ Անհատին կը հայթայթէ նպատակը եւ իր գոյութիւնը կը տանի գէշի սահմանափակութիւն . այսինքն՝ սահմանափակութիւն մը, որ մահուան կարելիութեամբ կը արուի :

Սարթը, սակայն, հարցադրումի կ'ենթարկէ, թէ արդեօք մահը իսկապէ՞ս կը պատկանի մարդկային իրականութեան (Անհատին) : Սարթը կը պնդէ, որ մահը մարդկային կարելիութիւն մը չէ, այլ՝ կացութիւն մը, որուն մարդ արարածը պէտք է կամայ-կամայ հաշտուի : Մահս, կ'ըսէ ան, իմ լինելութեանս մէկ կարելիութիւնը չէ, այլ՝ միշտ կարելի կացութիւն մը, որ կը պարփակէ Ժխտումը իմ կարելիութիւններուս : Պատահականութեան երեւումը իմ ծրարկներուս մէջ, աննախատեսելի բլրակ գաղբելու ձեւին մէջ բաւարար ապացոյց է, որ մահը ինքնին կարելիութիւն մը չէ : Մահը իմաստ չունի կեանքին համար, ինչպէ՞ս Թորստայ եւ Հայտըկըր կը հաստատային : Միայն մարդկային գիտակցութիւնը իր ազատութեան մէջ կրնայ իմաստաւորել . եւ այնքան ատեն, որ մեննիլը ապագայ չունի — ինչպէս միւս բոլոր փորձարկումները, ըստ Սարթի — այն կարելի իմաստը, որ մարդկային տարբը մը պիտի ունենայ՝ կը մերժուի մահուան :

Սակայն տնուգրակիօրէն մահս տղազայ մը ունի . ապագայ մը, որ ինձի համար չէ, այլ՝ ուրիշներու : Մահովս ամբողջ կեանքս անցած կը նկատուի : Բայց անցեալը անոյս բան մը չէ, բնականապէս, ինքի-մէջ ըլլալու ձեւին մէջ է : Եւ այս կրնայ իմաստ ունենալ անոնց, որոնք իմ կեանքիս պա-

հասարակները կը նկատեն իրենք զիրենք: Եթէ ուրիշներու գոյութեան համար չըլլայ՝ մահուան պարտական պիտի ըլլայ ինքնակամ անհետացումը ինք-իրեն-համարին եւ աշխարհի-համարին, ենթակայականին եւ առարկայականին, բոլոր նշանակութիւններու իմաստին:

Սարթրի համար մահը ոչ ճշգրտ մըն է մարդկային սոսմանափակութեան ոչ ալ ճնշում մը մարդկային ազատութեան. որովհետեւ սոսմանափակութիւնը մտահոնացութեան մէկ որոտքը չէ, այլ՝ ազատութեան: Բայց դիւր՝ Սարթրի՝ Մահը մարդկային կարելիութիւններէն դուրս ձգելուն այն է, որ կեանքը կ'ուզուի գէպի անհեթեթ վերջ մը: Միայն անհասան է, որ կը հայթայթէ telosը, վերջաւորութիւնը:

Այնքան ատեն, որ մարդու գոյութիւնը ազարդին եւ անհեթեթ է, մարդուն կողմէ իմաստուն արարք մը չէ՞ աշխարհի անհեթեթ գոյութենէ մը հրաժարիլ անձնասպանութեամբ: «Ո՛չ», կը պատասխանեն Քամիւ եւ Պատթայ, որովհետեւ մարդուն մեծութիւնը ոչոք յեղափոխական զիրքին մէջ է, որ ան կ'առնէ անհեթեթ աշխարհին մէջ:

Անձի իսկութիւնը ուրանայէ եւ զայն բներեւոյթ ընդունելէ ետք եւ բռնելէ ետք, որ բաներ իրենք-իրենց-մէջ անհեթեթ են եւ անոնց գոյութիւնը՝ անարդարանալի. բնական է Սարթրի համար սերանալ էութեան մը գոյութիւնը, որ պատճառն է բաներու եւ բներեւոյթներու: Այստեղ է, որ ան սերացաւ Աստուծոյ գոյութիւնը: Իր առարկութիւնը այն էր, որ հակասութիւն մը կայ այն էակին դադարարին մէջ, որ ինք իր պատճառն է: Իր սեփական գոյութեան պատճառը ըլլալու համար արարած մը պէտք է գոյութիւն ունենայ իր գոյութենէն աստի՛. կամ սերիչ բառով՝ այն արարածը, որ իր գոյութեան պատճառն է՝ պէտք է իրրեւ պատճառ գոյութիւն ունենայ նախքան իրրեւ արդիւնք՝ իր գոյութեան: Հիմա հարցը կը ծագի, եթէ այս ձևեր ընդունինք, իր գոյութիւնը ինչպէ՞ս կրնայ պատճառ մը ըլլալ:

Բացայայտօրէն Սարթրի փաստարկումը տկար է եւ չէ արդարացում, որովհետեւ մարդակերպային է: Եթէ ըսենք, որ Աստուած գոյութիւն ունի ինք-իր-մէջ, կը նշանակէ, թէ ան ինքզինքէն դատ ուրիշ տեղ գոյութիւն չունի եւ այն՝ որ պատճառը եւ արդիւնքը մէկ են իր մէջ: Սակայն գոյութեան պաշտօնութիւնը, Սարթրի համար, կը նշանակէ իրողութեանականութիւն եւ եթէ ըսենք, որ Աստուած գոյութիւն ունի, կը նշանակէ, որ ան իրողութեանականութիւն մըն է:

Այս բոլորը՝ որպէսզի անոնենք սարթրեան գոյութեանազատական փիլիսոփայութեան հիմնաքարերը:

Սարթր կը պատասխանէ, որ գոյութիւնը ինք-իր-մէջ անհեթեթ է, անհեթեթ է նաեւ գոյութիւնը ինք-իրեն-համար: Անոր համար է, որ մարդու ազատութիւնը, իր գոյութեան հանդէպ իր ազատութիւնը անհեթեթ է: Սարթրը կ'ընդհատուի իր «Լիմելաքիւն եւ անձաքիւն»ը այսպէս. «Մարդը կ'ապրի տոանց սրեւէ անհրաժեշտ պատճառի. իր գոյութեան շարունակութիւնը անհեթեթութիւն մըն է, եւ ան կը մեռնի պատահմամբ»:

Բուսականաբ նշելով, թէ սարթրեան գոյութեանազատութիւնը հիմնուած է անհեթեթութեան վրայ: Ան ուրացաւ անձի էութիւնը, մարդկութեան տիրապետանացումը եւ ընդդէմ, որ մարդու ազատութիւնը ապարդիւն է, իր գոյութիւնը՝ քանի որ անարդարանալի՝ սերեմն անհեթեթ: Սակայն երկար չզիմացաւ անհեթեթութեան այս ամենակուլ ախորժակը: Եթէ մարդկութիւնը մնայ տոանց իր դադարարարանութիւններուն, որոնք իրենց հաստատա զեպիւնները ունին, կը նշանակէ, որ այդտեղ է վերջը: Քանի մը գոյու-

թենապաշտներ, ինչպէս Մարտէլ եւ Լուի Լալէլ, ծանօթ էին Սարթրի փիլիսոփայութեան ճեղքերուն եւ ջանացին խուսափիլ այդ որոգայթներէն :

Մարտէլ մարմինը նկատեց իբրև միջոց անձին եւ արտաքին աշխարհին : Ընդունեց, որ մեր մարմնի զգացումը մեզ կը մղէ զգալու մեր գոյութիւնը, նաեւ գոյութիւնը մեզմէ դուրս բաներու : Անձը էութիւն մըն է, որ կը գոյատեւէ մեր գոյն ըմբռնելով եւ ընդհանրականներով — որոնց միջոցով մենք կը մտածենք : Ինչ որ անձը կ'ըմբռնէ կու գոյ նախ՝ գոյութենէն : Այսպէս է, որ գոյութիւնը կը նախորդէ էութեան :

Ազատութիւնը, ըստ Մարտէլի, կը նշանակէ, թէ ինչ որ մարդ մը պիտի ըլլայ՝ չէ որոշուած իրեն համար, եւ ամէն մարդ կ'ընտրէ ինչ որ ինք կ'ուզէ ըլլալ — իր սեփական էութիւնը, ինչպէս ըսաւ Սարթր : Բայց մեր կայ եւ չկայ ըսելու մէջ տարբերութիւն մը կայ : Մարդը միայն գոյութիւն ունի, որովհետեւ ան ինքզինք է, իր էութիւնն է եւ կը գերազանցէ ինքզինք : Մարտէլ այսպիսով վերածանօթացուց այն էութիւնը, զոր Սարթր ուրացաւ :

Ուրիշ հիմնական կէտ մը, որ կը զատորոշէ Մարտէլը Սարթրէն այն է, որ առաջինին համար մարդը ինքզինք կը գերազանցէ ուղղահայեացորէն եւ կը ձգտի բացարձակ գոյութեան կամ Աստուծոյ, մինչդեռ սարթրեան մարդը մխրճուած է իր անհեթեթութեան եւ ապարդիւնութեան մէջ :

Մարտէլի փիլիսոփայութիւնը չի հիմնուիր անհեթեթութեան վրայ . Քամիւի փիլիսոփայութիւնը կը հիմնուի՝ անհեթեթութեան վրայ, սակայն երկուքն ալ իմաստ մը կու տան կեանքին, յոյսին ընդմէջէն, որովհետեւ կարողական, թարուն ուժ մը կայ կեանքի մէջ : Իրենցը նաեւ ուժականութեան փիլիսոփայութիւն է :

Սարթրէ հաք, երբ ուրիշ գոյութենապաշտներ կեանքը եթէ ոչ իմաստալից, զոնէ ապրելու արժանի նկատեցին, գոյութիւնը դադրեցաւ յոռետեսութեան բոլոր աղետները կրելէ :

Ասիկա շատ կարճ բացատրութիւն մըն է այն իմացական շարժումին, որ վերջին յիսնամեակին զբաղեցուց եւ շփոթի մատնեց շատ մը միտքեր . նաեւ յուսադրեց մարդկութիւնը, զայն արթնցուց իր մրափէն, որպէսզի վերանայի եւ վերաքննէ այն ենթադրութիւնները եւ յայտարարութիւնները, որ առանց հարցուփորձի ընդունած էր եւ որոնք իր մէջ օթոմաթիք կերպով կը գործէին : Յեղաշրջեց եւրոպայի իմացական հոսանքը, մշակոյթը, անգամ մը եւս փաստելով, որ մարդկութիւնը կը յառաջդիմէ միմիայն մարդու աննախապաշարութեամբ եւ հարցաքննութեամբ : «Բայց կան մարդեր, — կը գրէ Սարթր, — որոնք հմայուած են քարի առկունսութեամբ : Անոնք կ'ուզեն ըլլալ զանգուածային եւ անթափանցելի, չեն ուզեր փոխուիլ, ո՞ւր կ'առաջնորդէ զիրենք փոփոխութիւնը . ասիկա սկզբնական վախ մըն է՝ անձէն եւ վախ՝ ճշմարտութենէն» : Գոյութենապաշտները մտան սոսկումի ծեղրերուն մէջ եւ տուին քաններորդ դարու մարդուն իրենց աւանդը . բայց քննութիւն մը պէտք է՝ որոշելու համար, թէ ի՞նչը անհրաժեշտ է այս աւանդին եւ ինչը՝ ոչ :

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)



ԶՈՐՐՈՐԴ ՄԸ ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

(ԱՏՐԻՆԷ ՏԱՏՐԵԱՆ)

Նոր լույս տեսած դիրքերու շարքին չի պատկանիր Ատրինէ Տատրեանի «Զորբորդ մը կը փընտըռուի» անունը կրող գիրքը, որ դեռ նորերս մուտք դործեց «Բագին»ի խմբագրատունը: Թէեւ արձանագրութիւն մը չկայ, սակայն կարելի է ենթադրել, թէ Ա. Տատրեանի այս վէպը լույս տեսած ըլլայ նախ իբրև թերթի «Մարմարա» թերթին մէջ եւ հսնկէ ալ ուղղակի հրատարակելու, ետեւի կողքին կրելով մակնիշը՝ Մարմարա Մտտեմաշարին: Հրատարակուած է, ուրեմն, 1971ին, Սթամբուլ, ոչ-ներկայանալի Թուրքի վրայ, ինչպէս եղած են բոլոր գիրքերը թերթիօտային պիտակ կրողներուն: Հատորը ունի ծանրաբեռնուած 232 էջ:

«Զորբորդ մը կը փնտըռուի» վէպին նիւթը ստեղծած է Փարիզէն: Տիրաբնէրը կը խոստովանին ըլլալ զգայուն հայեր, ներշնչուած՝ հոյսատանկան իրականութեամբ, սակայն խորքին մէջ հորդոտ ծնունդն են Լեւոպական սպասումիտ բարոյականին: Վիպելու կերպին մէջ, Ատրինէ Տատրեան յազուած կը թուի ըլլալ Ինտրայի «Նմարաշխարհ»էն կամ Ն. Եսայեանի «Հոգիս ախարհայ»էն, թէեւ Չարմիցիի: Ո՞նք ու պատմութի միջոց ծառայող լիզուն կը սիրեն բառախաղը, գիտան զծել աղբուր պատկերներ, շինել Փիղիթական կառոյցը տիպարային շէնքի մը: Սակայն օրինազանց են անոնք, իրենց ժառօթկառութեան մէջ, երբ կանչուած են հոգեկան կամ մտային բարգոյթներ խորացնելու աշխատանքին: Հոս կը զդարձի շատ ազատ, թոյլ ու տփուռնած երանդ մը շահնորեան ձեթձեթուն, բայց աղաւաղուած ոճէն: Այս հեռաւոր կողմերէն դուրս, Ատրինէ Տատրեանին կը պատկանի զրական և ժխտական վիճակներու, զիրար հրձակելով կառուց վաղուդ, դէմ առ դէմ պայքարի ելլող հոգեկան եւ զգացական խորհրու մենաշնորհը: Ընթերցողին կը մնայ կայսերական մատին շարժման իրաւունքը՝ վեր կամ վար ընկել, նպաստուոր կամ աննպաստ վճիռ արձակելուն մէջ...

Նիւթին անցնելէ ստաջ, մէջբերներ հոս մէկերկու նմոյշ-հաստատմանք Ատրինէ Տատրեանի վերոյիշեալ վէպէն, ճաշակ մը տալու համար լիզուի եւ ոճի տարրութեան մասին:

«Պատուանի վարագոյրը մէկ կողմ կը բաշէ Սօսի: Ոչինչ: Դիմացի պատը, պարպուած փոքրը, որ շան մը պէս պոչը փռած քնացիր է: Ժամը բանի՞ն է: Կորսնցուցած է ժամանակի զգացողութիւնը: Ինքն է ժամանակը, իր ներկան, որ գալիք չունի եւ կամ չի գիտեր, թէ ունի: Անորոշութիւնը չափել կ'ուզէ անասնամէն յախտեմական երթով: Կ'ուզէ պահ մը անասնամէն մէջ մնալ: Բայց ստիպան է, որ կ'եղերէ նոր ստիպան մը իրեն համար: ...Սօսի գլտէ այդ իրականութիւնը (իրը), որ իրականութեան հաւատարմ հաւատքն է: Բայց խախտած է հաւատքը: Հաւատքը չէ, թերեւս ինք կամ ան: Խախտած բան մը իշնալու կը ձգտի: Թող իշնայ: Սօսի պիտի չընէ անոր ծայրէն, րո՞ղ իշնայ: «Վերջացաւ՝ պիտի չտեսնեմ զինք, վերջացաւ»: Ենդու՞մ մը կը ցրեցէ մարմինը: Ծարած ապակիի մը ինկած կտարները, որոնք հոս ու հոն կը ցուրին: Արցունքներ ետքը ծիծաղ» (էջ 13-14):

Ատրինէ Տատրեանի վէպը կը սկսի շփոթ կացութեան մը մէջ ինկած Սօսի Աւետեանի կիտմարած հոգեփրկիթական յեղափոխ աղբուր տեսարանումով: Չօսիէն աւելի անուած քնարեր դեղահասաներու հեռուանք եղող այլ վիճակը՝ զրդուծի, յուսահատութեան, կեանքէն չուզել բաժնորելու հակասական զգացումներու հանդոյց մըն է, որ քահուելու բնաւ յոյս չի ներշնչեր, որքան որ կը յառաջանայ ընթերցումը ու էջերը կտու կը նետուին: Սօսի Աւետեան վէպին դիտարոր հերոսուհին է. սամնձին դուրս աղջիկ մը, որ կը բնակի փոքր սենեակի մը մէջ, Սէն Ժեթմէն Թաղամաս, Փարիզ: Սօսի այդ սենեակին մէջ կ'ընդունի իր սիրահարը, Վաղդէն, որ ամուսնացած մարդ է, իրմէ մեծ, խմբագիր, զրոյց եւ գեղեցիկ կիներու գերբ, Փիղիթականով ներկայանալի, բայց կրաւորական, թոյլ, անջիւղ մէկը: Սօսիին կուսքը: Վաղդէնին կ'ընը՝ Պրիւնճիլուէ, օտարուհի մը, որ շատ կ'ապուած է ամուսինին և գիտէ անոր մեղաւոր սէրը Սօսիին հետ: Անշուշտ ներքին պայքար մը զօրութիւն պիտի ունենայ երկու կիներուն մէջ, երբ երկուքին սիրոյ ստարկան մէկ է: Նախանձի եւ հանցութեամբ կ'ընէ շատ տարբերութիւն չկայ և արդէն տրամային խորք

ունենալով հանդերձ, վիպումի բնթայքին — Հիւանդագին արամագրութիւններ, յուսալուսմէ աւաջացած ինքնապանութեան փորձ, վրէժի գրացումէ մզուած եւ սակայն, աւարելի ամուսնութիւն (Սօսի), փոխարեքական զժողովիւններ — կը սպասուի արամաթիք եւ ողբերգական վիճակներու լրումին. ի՛ զուր. բնթերցումը կ'աւարտի եւ ինչ բանի որ բնթերցողը կը սպասէր՝ տեղի չ'աւնենար: Հեղինակի կենջական բուսի ու բարբ արամագրութիւնը, կարծէք, կը զուշանայ յաւցած իր հերոսներուն հազցնել զստատարակուի շտպիկ կամ պատանքելու մէկն ու մէկը — Սօսին, Վաղգէնը, Պրիւնհիլտէ, Ավերոֆը, որ Սօսիի մէկ ամբարան ամուսինը զատնալով, կը լքուի ետքէն եւ ուրիշներ, օրինակ, Աբամ մը, Շահէն մը, Պերճ մը, Տէր Պետրոսեան մը — այս բոլոր անունները կ'իջնան Չարբորդի մը փնտառութի ճամբուն վրայ Սօսին: Աւ աղջիկը պիտի վերագտանայ իր Վաղգէնին, ա՛յն համարումով, թէ օր մը Պրիւնհիլտէի կը վիճակուի երբորք տեղը ու լքելով երբորքութիւնը, կը կորսուի եւ կը մնան երկուքը՝ Սօսի-Վաղգէն, երկու զերակաւոր՝ մէկ ամբողջութիւն...

Չարբորդի մը փնտառութիւն մղձաւանջը եւ Վաղգէնի կողմէ անտեսուած ըլլալու համարումը Սօսին ի վերջոյ կը նետն գտտորկայորտ, բայց երեստարզ Պետնար Ավերոֆի գերիւր. պաշտօնական ամուսնութիւն, որուն համար ուրախ ու երջանիկ կը համարէ ինքզինք Պրիւնհիլտէ, ողբաւած ըլլալ կարծելով ընտանեկան այր ու կին ստղատուէ մը — զուտի չունին — մինչ Վաղգէնին համար այդ բաժանումը կը զատնայ խղճի խոյճ եւ տասնպոնքի նոր աղբիւր մը: Վաղգէն պիտի նետուի գերմանուհի մը ետեւէն: Պրիւնհիլտէ աւելի կը գտնէ վրէժը լուծելու ամուսինէն, ինքզինք յանձնելով արձանագրած-նկարիչ Աուրէն Փիլիկեանի թեւերուն: Լուսանցքային գէճը մըն է Աուրէն, որ սենեցած է ժամանակին Սօսին եւս, իր մօտ իրբու մտուէլ գործածելու համար: Գերբին վերջաւորութեան, Աու. Տարեան գեղեցիկորէն նկարագրած է Պրիւնհիլտէի հիւանդութեան տեսարանը, անշուշտ միշտ ինտելիզմ հերոսուհիին վախճանական ելքին: Ինչպէս պիտի գուրգուրայ Սօսիի մասին, որ ան վերադառնայ կեանքին ու մնայ յուխտեանական սերունդին Վաղգէնին:

Տեղ մը, հեղինակը կը գրէ. «Միշտ անխնայիստ, ախար, տեղ մը կասնելու, կասնիլէ կտմ վերադառնալու, կ'ուր կոյի մը պէս, որ կը դառնայ, կայն տեղը էիչ կեռու կամ մօտիկ: Գիշեր բարի կոյս իմ»:

Եւ այս փոյլուն օրինակ մըն է, իր իսկ խոտովանութեամբ, միակ յատկանշական երեսոյթը «Չարբորդ մը կը փնտառուի» վէպի տասնցքին: Ամբողջ գերբը գրուած է մտնր, սովորական հանդիպում-բաժանումներով, սիրելի-չսիրելով, խոտովել-հաշտուելով՝ արպարները անբաժան պահուր, իրարմով բախում ստեղծելու պէտքի մը

աուրբ տուած ըլլալու համար: Չմտանալ, որ գրեթէ բոլոր տիպարները կը պատկանին ինտելիկեան գասակարգի մը, որ կը մերժէ անպատասխանատու արարքներու կամ խորունկ, բիրտ կիւրքի մթնոլորտը: Սօսի բանաստեղծ է. Վաղգէն՝ խրմբացիր, որ կ'աւաւաւա վէպի վրայ կ'աշխատի, Պրիւնհիլտէ նկարիչ է, Ավերոֆ՝ նախկին գեսպան, Աուրէն Փիլիկեան՝ արձանագրած-նկարիչ: Եւ այս մարդիկ ընդունած են եւրոպական բարոյականը իրբու կեանքի ուղեգիծ, մտնալով իրենց կենսանոցին պահպանողական բնոյթը: Սօսի մը ընաւ սարբեր չէ փարիզեան մայթադիճներէն կամ սենեկային սէրերու մանտարդուէրներէն. սուկայն այս աղջիկը ինքզինք կը դաւանի հայաստանուէր, դաղափարով՝ ձախարակուէն, գրադարանը լեցուցած է աստեղաբար հայրենի գրողներու գիրքերով: Սօսի մէկ պատճէնը գուցէ մ. Սահանին, ասանց հեղինակաւոր գրիչի...

«Չարբորդ մը կը փնտառուի» վէպին կը պակասի զործողութեան զգայարանքը. կը մերժէ դասական վէպին կառոյցը, կը ձգտի նորարարութեան ժամանակի անիշխանական գրեւելեղպին. աղիւս առ աղիւս բարձրացուցած շէնքի մը տարաւորութիւնը կը զործէ ընթերցողին վրայ: Բայց անի պատմումի ինքնատիպ ոճ մը, որ կ'թէ սեղմումներու կենթարկուէր, «Չարբորդ մը կը փնտառուի» կ'ընտր յաջողութիւն մը բնուցելի սփիւսեան վէպի կալուածէն ներս: Գրուեցաւ արդէն գրախոսականին սկիզբը, թէ Աուրին Տարեան տուած է յաջուած պատկերներ, փոխարեքական վիճակներու հարստաւ երեւակալութիւն, սճային բատախողի շնորհ: Վէպը կը տաւաղի զարձագողութեան եւ բանաւոր խօսքի արտայայտական միջոցներուն. երբեմն նոյն տողին մէջ պարուած են երկու տիպարներու մտածումները, որմէ չ'ախարժիք անանդական վէպի մը զրեկածեւը: Գերբը կարգալու համար համբերութիւն սէտք է, նմանօրինակ պատմումի մը ընդմէջէն նիթին կարեղը արանելու համար. եւ այդ կարեղը, ի ցու. ընթերցողին, միշտ փոխուտի մէջ է մինչեւ վերջին աւարտը:

ՍՄԲՍ ՓԱՆՈՍԵԱՆ

20-5-1978

ԻՄ ՍԻՐՏԸ

(ՌՈՒԻԻՆԱ ՏԵՐ ԲԱՐՍԵՂԵԱՆ)

Շուրջ քառասուն քերթուածներ պարփակող «Իմ սիրտը» Քուրնա Տէր Բարսեղեանի երախայրիքն է, որ լոյս տեսաւ անցեալ տարի, Պէյրու-

թի «Ճիւղակ» հրատարակչատունէն:

Ընդհանրապէս սիրոյ եւ կարօտի արձագանդներ եւ հեղինակին ներաշխարհը խոտովոյ ու բնականրացման ուժ ունեցող հարցեր կ'արծարծուին անոր էջերուն, բայց յաճախ կը բախին բանաստեղծութեան մտաքին տարածուող մութիւն:

Այնուամենայնիւ, երբեմն դուրս գալով սովորականին շրջածիրէն՝ «Իմ սիրտը» հեղինակին ներաշխարհին հետ աչերասուող մարդկային եւ ընկերային աշխարհին վրայ նայող վարքիկ պատասխաններ կը բանայ:

Ճիւղ է, որ բանագրօսիկ քիչ բան կայ այս գրքոյիկին մէջ, բայց միեւնոյն ատեն հեղինակը ազգնապեցնող պատճառները բանաստեղծութեան թափանցող լուսարձակին տակ չեն առնում:

Այս վերջին գիտադութիւնը պարզ ու հասկերնալի ըլլալու պէտքի մը չի վերաբերիր անշուշտ բարդ ու անհասկնալի սշինչ կայ այնտեղ: Մէք ակնարկութիւնը կ'երթայ խորքի, պատկերի ու ոճի ներդաշնակ ընթացքին, ինչ որ կը պակսի յաճախ:

Ըսինք, թէ բանագրօսիկ քիչ բան կայ գրքոյիկին մէջ, բայց միեւնոյն ատեն սովորականէն վեր յարձրացող շատ բան չէ հազարգուած էջերուն:

Մէկ-երկու քերթումներու պարագային՝ պէտք է ըսել սակայն, որ հեղինակը յաջողած է հազարդական համ մը փոխանցել տողերուն:

Թող քնից ելնեմ մի այլ աշխարհում
Եւ այս աշխարհը մնայ երազում:

Ատտիճան մը տակի յաջող է «Հայրենիւ» անունը կրող քերթումներ:

Լիւն եմ քեզանով
Ուրիշ մայրերին նայող որբի պէս:

Գրքոյիկին մէջ տեղ գտած որոշ շերտաթեան եւ անկեղծութեան եթէ միացած ըլլար նաեւ որոտայայտական եւ կատուցողական կարողութիւնը, անկասկած որ յաջող բանաստեղծութիւններ պիտի դրուէին ընթերցողին արտապրութեան տակ:

Ըսել ազատը հասկցնելու ամապարանքին մէջ՝ Ռուբինա Տէր Բարսեղեան երբեմն դժ յանդեման կը բերէ ընթերցողը պատկերային հսկասութեան, որ կը խախտէ ապաստանութեան ներդաշնակութիւնը: Պրինակ, «Երբ նայում եմ քեզ» անուն քերթումին մէջ կ'ըսուի:

Երբ նայում եմ քեզ
Մարգարիտի պէս
Արտաբուստ սրտուր,
Սակայն փայլում ես եզրույ մաքրութեամբ:


Որքան մենք գիտենք, մարգարիտը, եթէ իրապէս մարգարիտ է, չի կրնար «սղատը» յատկութիւններ անենալ նոյնիսկ բանաստեղծութեան մէջ...

Ամէն պարագայի՝ ասպիտակ մէջ շարժում կայ եւ բառերը անհարկոյն չեն:

Ռուբինա Տէր Բարսեղեանի ստանտարները անմիջականութիւն մը սինին եւ ուրջ հանդամանքը այս գրքոյիկին հիմնական աստեղծութիւնն ու թերութիւնը կը կազմէ միանգամայն:

Աստեղծութիւն՝ որովհետեւ անկեղծութիւն մը կը բերէ, իսկ թերութիւն՝ որովհետեւ անխրնամ մնալու պատճառ կը գտնայ:

Բոյսը պարագաներուն՝ Ռուբինա Տէր Բարսեղեանի «Իմ սիրտը» բանաստեղծութեան յատկութիւն հետանկար լայնող փորձ մըն է, փաստահարութիւն ներշնչելու կարելիութիւն ունեցող ստեղծին բայլ մը:



ՌՈՒԻՔԷՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ

1977ին՝ Ասթարանեան դրական մրցանակի մատակարար լսյւ ընծայեց իր երբորդ հատորը՝ «Յայգալոյս»ը:

Յառաջարանին մէջ ներկայացուած է հեղինակին կեանքը, ստեղծագործական կեանքի տարրեր հանդրոտանները եւ զրահանութիւնը ընտրուող յատկանշական դիմերը:

Հատորի առաջին 240 էջերը պարզ արտատրզումն են «Յայգալոյս»ի նախորդ հրատարակութեանց: Անկէ ետք, նոր գլուխով մը, 109 էջերու մէջ արուած են հեղինակին զեղարուեստական գործերէն անոնք, որոնք «Յայգալոյս»ի նախորդ հրատարակութիւններէն զուրս մնացած են:

Գրութիւնները գասաւորուած են ժամանակագրական կարգով, ըստ մամուլի մէջ անոնց տպագրութեան թուականներուն:

Այսդիտով առաջին անգամ ըլլալով կը մէկտեղուին աւ հատորի մէջ կը մտնեն 21 գրութիւններ: Մնացեալ 40 էջերը յատկացուած են Արտաշէս Տէր Խաչատուրեանի կողմէ պատրաստուած մանրակրկիտ մատենագիտութեան:

Յիշեալ 21 գրութիւնները, ինչպէս նաև մատենագիտութեան բաժինը արդիւնք են հրատարակչական մարմինին տարած մասնաւոր ճիգերուն: Այս արժանիքը ընթերցողը կը զնեն նահատակ զրաղէտը իր գործերուն ամբողջական պատկերով ունենալու կարելիութեան ստիչ:

Ռուբէն Զարգարեանի գործերը ցարզ արժանացած են չորս ակադեմիական, ստալինը՝ Պուլխ, 1910, երկրորդը՝ Փարիզ, 1930, Լըրորդը՝ Վենետիկ, 1959, չորրորդը՝ Երեւան, 1959: Երեքը

«Յայգալոյս» անունով, իսկ Փարիզի հրատարակութիւնը «Ամբողջական կրկեր» խորագրով:

Ռուբէն Զարգարեան լսյւ ընծայած է «Յայգալոյս»ը ստանց ընդգրկուած նիւթերը գասաւորելու գրական սեռերու համաձայն: Միւս հրատարակութիւններն ալ հետեւած են Զարգարեանին, բայց Երեւանէն, որ ամէնէն ընդարձակ հրատարակութիւնն է և յատակ գասաւորումի ենթարկած է նիւթերը:

- ա) Վիպակներ և նորավէպեր,
- բ) հեթաթներ և լեղենչներ,
- գ) Արձակ էջեր եւ պատկերներ,
- դ) Բանաստեղծութիւններ:

Ասոնց կը յաջորդեն թարգմանութիւններ, գրական յղուածներ, յաշարութիւններ և քառարան խորագրիներով ներկայացուած բաժիններ:

Գալով վերջին ժողովածուին, պէտք է բուէ, թէ անկեա կը զերպանցէ նոյնիսկ ամէնէն ամբողջականը՝ երկուսեան հրատարակութիւնը, Լըրեր տարրեր ստուելութիւններով:

Առաջին՝ մամուլին մէջ ցրուած 21 գրութիւններուն մէկտեղումով,

Երկրորդ՝ գրութիւններուն ժամանակագրական կարգով,

Երրորդ՝ Արտաշէս Տէր Խաչատուրեանի պատրաստած շտեկան մատենագիտութեամբ:

Չուտ գիտական այս վերջին աշխատանքը բաւական լսյւ աչքերներ կը տրամադրէ ընթերցողին՝ Ռ. Զարգարեանի ստեղծագործական կեանքի ծալքերը բանալու համար: 16 գլուխներէ բաղկացած այս բաժինին մէջ կը յիշուին հեղինակին գործածած ծածկանունները, ստեղծագործական գրութիւնները, հրատարակարական յղուածները, նաժանները, թարգմանութիւնները, իրեն ձեռնած առաջին գրութիւնները, իր գործերուն նուիրուած ուսումնասիրութիւնները եւ զաստղերքերու մէջ եղած անգրագարծները:

Այս բաժինին մէջ ալ պահուած է ժամանակագրական կարգը եւ զեղարուեստական ու հրատարակարական գրութիւններու յիշատակութեան ստեն տրուած են կարեւոր լուսարանութիւններ:

Մանրակրկիտ ճշգրտութեամբ կատարուած այս հետաքրքրական աշխատանքը կու տայ ամբողջական պատկերը զեղապաշտ սերունդի արժանաւոր ներկայացուցիչին գրական կենսապրութեան: Այս հատորին շնորհիւ ան կը գասաւորուէին զրաղէտը, որուն մտաին կրնան յաջորդ սերունդները ամբողջական գաղափար մը կազմել:

Ըստ այդ մատենագիտութեան, Ռ. Զարգարեան գործածած է բաղմութիւ ծածկանուններ, տրոնք բունալի զարձած են իր գրութիւնները հաւաքելու աշխատանքին: Այդ ծածկանուններն են. Աչք եհովայի, Աւլան, Բարդէն, Զորդար, Զարման, Էժաահար, Հայ Աքսորականը, Հրաչ, Հրաչեայ:

Կ'իմանանք, որ անոր առաջին գրութիւնը լսյւ տեսած է Յովնան Փայաղաշեանի «Մաղիկ» հանդէսին (2 Մարտ 1891), առաջին տպագրապաշտ

էջերը՝ Գրեկոր Զօհրապի խմբագրած «Մասիս» շաբաթաթերթին (1893), առաջին հեքիաթները՝ Արշակ Զօգրանեանի «Մագիկի»-ին (1895), իսկ առաջին գերթուածը՝ Միքայէլ Շահմատեանի «Մասիս» հանդէսին մէջ (1898) :

Գրական և հրատարակչական յօդուածներու շարքէն երեւան կու գայ, թէ Ռ. Զարգարեանի գրութիւնները լոյս տեսած են մասնաւորաբար «Մասիս»ի, «Արեւելք»ի, «Արեւելեան մամուլ»ի, «Ազդակ»ի և «Ազատամարտ»ի մէջ: Ընդհանրապէս 2-10 սուղերու մէջ յիշուած է իրարանջիւր յօդուածի գրուման գրողպատճառը:

Մինչև «Ազատամարտ»ի հրատարակութիւնը, Զարգարեան հաննաւոր կերտով աշխատակցած է «Փամբակ» օրաթերթին, խմբագրականի սիւնակներուն մէջ գրելով 34 յօդուած, նիւթ ունենալով օրուան ամէնէն հրատաղ և ոյժձէպիան հարցերը:

1905-1908 խմբագրած է «Ռագիկ» կոօրեան: 1909-1915 վարած է «Ազատամարտ» օրաթերթին խմբագրութիւնը:

Հրատարակած է «Մեղրագետ» դասագիրքը, Ս. Էն մինչև Զ. Հատոր:

Նամակներու բաժինին մէջ նկատելի է, որ Զարգարեան ընդհանրապէս թղթակցութիւն պահած է «Գրօշակ»ի և «Արեւելեան մամուլ»ի խմբագրութեանց, ինչպէս նաև Ռուբին Որբերեանին, Զապէլ Ետոյեանին, Դանիէլ Վարուժանին, Սիւրիլին և Ռուբէն Սևակին հետ:

Գալով իրեն ուղղուած նամակներուն, յիշուած է, թէ իր ձերբակալութեան առէն անոնք տարուած են ստտիկանութեան կազմէ, և որոնցմէ փրկուած են միայն երեք հատ, մէկը՝ Դանիէլ Վարուժանէն, իսկ միւսները՝ Ռուբէն Որբերեանէն ստորագրուած:

Զարգարեան օտար գրականութենէն թարգմանած է բազմաթիւ գործեր, որոնց մեծ մասը անատորագիր լոյս տեսած են «Ռագիկ» կոօրեան:

Եւ, «Ազատամարտ» շաբաթաթերթի և «Մեղրագետ» դասագիրքին մէջ: Թարգմանուած գործերուն հեղինակներէն կարելի է յիշել Անաթոլ Ծրանար, Յակոբ Ռոյլար, Մարտիմ Գորկին և Էտիար Ալէն Փոն:

Անհրաժեշտ է անգրադատնայ նաև, թէ Ռ. Զարգարեանի գործերն ալ արժանացած են թարգմանութեան: Անոնք թարգմանուած են Փրանսերէնի, անգլերէնի, թրքերէնի, գերմաներէնի, իտալերէնի, նորվեգերէնի և սոււսերէնի: Ծրանարէն լեզուով ա՛շ միայն իր գործերէն նմուշներ թարգմանուած են, այլև հրատարակուած է «Յայգալոյս»ի ամբողջութիւնը, կաթին Պոն Մուրիի կազմէ գրուած յառաջարկումով, որ սրտ յապագութենքով թարգմանուած է հայերէնի («Ազատամարտ» օրաթերթ, Ե. տարի):

Իր մասին ուսումնասիրութիւններ, յուշեր և ակնարկներ գրած են Յակոբ Օշական, Սիմոն Վրացեան, Սիրունի, Եղուարդ Պոյաճեան, Արշակ Զօգրանեան, Վահան Քէքէեան և ուրիշներ:

Վերոյիշեալ գնահատելի կէտերուն կողքին պէտք է յիշել այն խոցելի կողմերը, որոնք կը պարզուին երեւանեան հրատարակութեան հետ կատարուած բազմաութեանէն: Երեւանեան հրատարակութիւնը շուրջ 220 էջերու մէջ տուած է նմուշներ Ռ. Զարգարեանի թարգմանութիւններէն, նամակներէն, գրական յօդուածներէն ու յուշագրութիւններէն ու կազմած է անոր բառարանը: Եթէ հաշուի անուած ըլլոյցին նուեւ այս բաժինները, Ասթորճեան հրատարակութիւնը անտարակոյս աւելի ամբողջական պատկեր մը պիտի ունենար:

Այսուհանդերձ, այս հաստրին հրատարակութիւնը գնահատելի ձեւնարկ մըն է և ընթերցողին մաքին մէջ կը վերակենդանացնէ արեւմտահայ գրական սերունդի նշանաւոր ներկայացուցիչներէն՝ Ռուբէն Զարգարեանը:

«ՄՏԱԽՕՍ Կ'ՈՒԶՈՒԻ»

Բեմադրութիւն՝ ՎԱԶԷ ՄՏՐՈՒՆԻ

Հ.Բ.Ը.Մ.—Հ.Ե.Ը. Վահրամ Փափազեան թատերախումբի մասնակցութեամբ եւ Երիտասարդ բեմադրիչ Վաչէ Ասրաճեի բեմադրութեամբ ներկայացուցաւ Տիմիթրիո Փասթաի «Ստախօս կ'ուզուիք»:

Նիւթը կատակերգութիւն մըն է, կասողքաւ՝ դիտողիք «սուտ»ն վրայ: Երեւոյի տան կառնալ ընտրուելու համար՝ Թէոֆիլոս Գերեկիս սուտ խոստումներ շտախօս է իրեն քուէարկողներուն: Գերեկիս այժմ կը փնտռէ ճարտար ստախօս մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ համոզել կերպով տուն դրիկել իր հանդիսար խանդարող քուէարկողները: Իրրեւ թեկնածու կը ներկայանայ Տոգորոս Պալաս անունով երիտասարդ մը, յայտնելով, թէ ինք «վարպետ ստախօս է, արուեստով կը լիտի սուտը»: Երեւոյի տան քարտաւղարուհին կ'ընդունի զինք, բայց, անխաբի մեղադրելի մը հետեւանքով՝ Տոգորոս կը հարկադրուի խոստալ երեւոյի տանին տունէն: Փորձը կը կրկնուի. հանդիպում՝ երեւոյի տանին տիկնոջ հետ. Տոգորոս յաւանատու անձ չէ, կը յաղթանայ տիկնոջ հետին Գերեկիսի կողմէ զրուած խոչընդոտները եւ առիթը կ'ունենայ ծանօթանալու երեւոյի տանին հետ, որուն համակրանքը անմիջապէս կը շահի, հոն գտնուող ստախօսիքը քուէարկող մը նոյն պահուն «տուն ճամբելով»:

Մաղը արդէն սկսած է: Տոգորոս Պալաս ինքզինք կը գտնէ ստախօսներու թակարարի մը մէջ: Տունէն ներս եւ ամէնուրեք, ու ամէն մակարդակի վրայ, սուտերու շղթայ մը կայ: Տիկնոջ Գերեկիս ունի Ազիս անունով երիտասարդ սիրահար մը, զոր կ'ուզէ ամէն դնով պահել մօտը եւ այդ պատճառով ան կ'ուզէ խաղի բերել Տոգորոսը, այս վերջինը փոխարինելու համար Ազիսով:

Եւ խաղը կը շարունակուի տարբեր մակարդակներու վրայ: Իր կարգին՝ տան ծառան (Վրասիկա) ինք եւս կը սարքէ նման խաղ մը, փորձելով ծուղակը ձգել քարտուղարուհին կամ սպասուհին: Մաղերու շղթային օղակները տակի կընճասարկով թատերախաղին զարգացումին հետ տանսիրուհին եւ անոր սիրահարը կը ծրարեն թակարարի մէջ ձգել Տոգորոսը, որպէսզի բարոյականի հարց մը ստեղծուի այն պահուն, երբ տնօրինը զիւրեք գտնէ մտերմութեան մէջ, եւ... արձակէ Տոգորոսը իր պաշտօնէն: Մակիս Տոգորոս, ստեղծակի՝ Ջենի-Ալիս կային, խոհեմութեամբ կը հետեւի ղեկգրեւուն, որոնց ընթացքին մէջ ինք եւս կը փորձէ երեւան բերել անպարկէշտութիւնը ընտանիքին բարեկամ նկատուող Ալիսի, որուն ներկայութիւնը խոչընդոտ մըն է իր

վերնելին, իր պաշտօնին ու այդ յարկէն ներս իր գոյութեան:

Գերեկիսի կատկոնները անգամ մը Տոգորոսի վրայ կեդրոնանալէ ետք կը փոխադրուին Ազիսի վրայ: Այս կայութեան զիմաց երեւոյի տանը բուրակներէն շփոթի կը մտնուի: Այսպիսով յստակ եղբակացութեան չի յանդիւր խաղը, որ իր զարգացումը կ'ապրի տարբեր մակարդակի մը վրայ, աւարտելու համար իրապաշտ պատկերով մը, զըլխաւոր բոլոր տիպարներու գրեթէ բոլորին կողմէ արտասանուած եւ երեւոյի տան Գերեկիսի կողմէ հաստատուած «վերջապէս ո՞վ է ստախօսը, եւ ո՞վ՝ նշմարացիկ» նախադասութեան կրկնութեամբ:

Ճիշդ է, որ Տիմիթրիո Փասթաի այս խաղը Յունաստանի յիսունական թուականներու քաղաքական անցուղարմէրու մէկ պատկերը կը ցուցնէ, սակայն քաղաքական լուրջ կատակերգութեան մը անգին անցնող ընկերային բարքերու կատակերգութիւն մըն է նաեւ անիկա, որ յողեցած է լայն բնդհանրացումներու շունչով եւ զերծ է բարոյական քարոզչութենէ:

Անիկա կը սկսի համեմատաբար զանդուղ ու սարտած ընթացքով մը: Հոն են երեւոյի տան ու անոր տունէն ներս գործող պաշտօնէութիւնը՝ դոնադան, քարտուղարուհի, սպասուհի, ինչպէս նաեւ երեւոյի տանին կիներ ու անոր երիտասարդ սիրահարը: Այս խառնած Պատատիտի մուտքով կարճ ու հետաքրքրաշարժ պահ մը կը ստեղծուի, որ սակայն իր զարգացումին չի հասնիր:

Վերջապէս, իրրեւ «ուղուած ստախօս» անպիտանարայէս մուտք կը գործէ դուռտէն եկած Տոգորոս Պալաս, որուն հետ խաղը կը սկսի իր զարգացումը սուրբիլ: Գէորգ Մոզմոնեան՝ ստախօսի իր գրեթէ մեայուն ներկայութեամբ՝ աւանդը կը կողմէ խաղին՝ անոր տալով կըլտայթ, աշխուժութիւն եւ ծիծաղաշարժ ղեկգրելու իր ներայնորդ զարգացում: Մոզմոնեանի խաղարկութիւնը կը հոտնի զստախօսիակտի, երբ կը ներկայարկէ, թէ ինչպէս զարգաններու հետ մենամարտած է: Այս պատկերին մէջ ան կ'օգտադործէ շարժապատկերային թէքիթ մը, մեջկատակերգութիւնը, ձեւիք, մարմնի ու զիմախաղերու յաղող համադրումով: Մոզմոնեան կը մարմնացնէ ստախօսի իրական տիպար մը, եւ նոյնինքն սուտը՝ իր բոլոր երեւանքով ու տարբեր մակարդակներու վրայ: Ուշադրաւ էր իր հետեւեալ յայտարարութիւնը. «Ես անկեղծ ստախօս եմ»:

Ուշադրաւ էր Մանուշակ Մարգարեանի (Ջենի-Ալի Գերեկիս, կիներ) խաղարկութիւնը: Հակառակ

առաջին անգամ բեմ բարձրանալու իր հանդու-
մանքին, ան կրքու կապ պահել իրազին բնդհու-
նուր կշռութիւն հետ, մա'նուանդ Տոգորստ-Ջեննիի
սպրամ քանի մը մտերմիկ պահերու մէջ:

Ինչ կը վերաբերի Իւրնէշչեան Վարդգէսի
(Տէոֆիլոս Ֆերեիկոս, Էրեսփոխան), թատերական
կենսոջն ներս քան սարուան փորձառութիւն ու-
նենայոյ հանդերձ, միջնակ խորացրելութիւն մը դու-
ցարեկեց: Ճիշդ է, որ իր վերջուցած զերմ ստա-
խօսութեան արուեստին անձանօթ քողաքողէան
էր ան, լայց անկարողութիւնը սէջաք չէր ազդէր
իր խորարկութեան վրայ: Արատաանուած նախա-
դասութիւնները կենսունակութենէ պարպուած
խօսքեր եղան ստի:

Գոհացուցիչ ու համոզիչ էր խորարկութիւնը
Մարդիսեան Փորոսի (Վրասիկաոս, դանուպան), որ
տիրական ու անհրաժեշտ ներկայութիւնն էր Խ-
րեափոխանին բնակարանէն ներս: Արթուս պահակ
ըլլալու իր գիտակցութեամբ՝ ան կը հետեւէր
աան մէջ անդի ունեցող իւրաքանչիւր անցուպոր-
ձի, սարբեր զոյգերու մտերմութեան պահերուն,
ևւայն:

Կէօքճեան Սեւան (Պիպիցա, քարաուպրուհի)
ևւ էթոյեան Արփի (Կուլա, սպասուհի) զոյգէն
երկրորդ ասելի յաջող ևւ ծիմարչաշարժ խորար-
կութիւն մը ցուցարեկեց: Էթոյեան Արփիին մօտ
չեշտուած էր նախաձեռնութեան ոգին՝ համեմ-
ուած յանդգնութեան համակրելի գիծով մը: Ինքն
է, որ առաջին անգամ, գիշերով, ռուսաբիւի պա-
հու մը, դադանօրէն կը պարէ Տոգորստի հետ:
Ինքն է զարձեալ, որ «պանդակին ձայնէն» կը
ճանչնայ, թէ ո՞վ է եկողը, Էրեսփոխանը, թէ...
այլ անձ մը:

Մեկքանեան Լեւոն (Ազիս, Ջեննիի սիրահա-
րը)՝ դատարկապորտ, շիճ հագուած այս երկտա-
սարդ տիղարը արդարագուց իր ներկայութիւնը,
մա'նուանդ ջղայնութիւն արտայայտող վիզի ու

թելի իր շարժուձեւերով: Բասէն ասելի դիմա-
խաղ ու շարժուձեւ էր ան ևւ համարպատախան
իր մարմնուորում կերպարին ընդթիւն:

Ֆիկիւրաձեներու սահմանին մէջ զերեր վեր-
ցուցած էին Գուլուստեան Չաւէն (Պատտոխոս),
Պատմաճեան Կարօ (Այցելու 1 ևւ 3), Տատարեան
Մեղրակ (Այցելու 2), Տատարեան Համարձուձ
(Պանագիս) ևւ Մինտեան Անիթա (Պիցա Կիցա):


Յաջող գիմարգարուձը ևւ տիպարներուն
պտաչաճ զգեստաւորումը մեծապէս նպաստեցին
վերոյիշեալ հինգ գերախոտարներու ներկայու-
թիւնը համագիչ գարձնելու աշխատանքին: Անոնց-
մէ իւրաքանչիւր հարց մը ունէր լուճելիք, պայ-
մանաւորում՝ Էրեսփոխանին տուած իրենց քը-
ւէնըւյ ևւ անկ տանուած օժանդակութեան խոս-
տուձներով: Դիմաշարգարուձը գորձն էր Կալձակ
Գնդունիի, որ լուտապէս ըմբնած ու մեկնաքանած
էր իւրաքանչիւր զերակատարի հողեկան աշխար-
հը:

Չգեստաւորումը, պտարտաուած Արտեմիս
Պեաիկեանի ևւ Շոպիկ Պոյաճեանի կողմէ, գուտպ
էր ու բնական:

Լոյսերու համարդումը հաշտ էր բեմարդու-
թեան ընդհանուր մթնոլորտին հետ, սար առաջին
երկու արարներու վերջաւորութեան ևւ երրորդ
արարի սկիզբը ստտիճանական գարգացում մը ապ-
բեցաւ խողը:

Վաչէ Աարունիի այս առաջին բեմարգարութիւնը
գեղեցիկ խոտուած մըն է ապաղայի հաշոյն: Եր-
կու սարի միայն թախիձ ապրած Պէլլրութի հան-
գիտատեանն սրտարուի ծիձագի պահ գարգեւած
ըլլալու իրողութենէն անկախ՝ ան թատերական
յաջող գորձ մը հրամցուցած ըլլալու վայելքը ևւ
ընձայեց անար:

ԻՍՕ ՍԱՐԱՃԵԱՆ



**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐ
ԿՄՐԺԱՆԱՆԱՆ «ԼԱՒԱԳՈՅՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ» ԿՈԶՈՒՄԻՆ**

Նիւ Ինկլընտի Գրքերու 1977 տարուան Յու-
ցահանդէսը, որ կը հովանաւորուի «Պոսթընի
Գիրք Արտադրողներ»-ու ընկերակցութեան կողմէ,
հայկական երկու գիրքեր յիշատակած է՝ 1977ի
լուսադոյն հրատարակութիւններու իր դրացուցա-
կին մէջ:

Առաջինը՝ Արշաիր Շիրակեանի «ԹՀԸ Լե-
զԵՄԻ» գիրքն է, «Կուսկն էր մահառակներուն»
գործի անգլերէն թարգմանութիւնը, որուն հրա-
տարակիչն է «Հայրենիք», կողքի դժանկարիչն է
Քաթուլ Սոսնեց-Փափազեան, իսկ տրտադրիչը՝
«Սթեֆըն Տէյ» ընկերակցութիւնը:

Երկրորդը՝ Մինաս Թէօթօեանի «Դար մը
գրակառուութիւն» հատորը, հրատարակուած Հ.
Բ. Ը. Մ. Ի Ալեք Մանուկեան Մշակութային
Հիմնադրամին կողմէ, տրտադրութեամբ «Սթե-
ֆըն Տէյ» ընկերակցութեան: Կողքի նկարը պատ-
րաստած է Հրայր Վարդանեան:

Այս երկու հրատարակութիւնները մնայուն
կերպով պիտի ցուցադրուին Նիւ Ինկլընտի գրք-
խառն գրատպարաններուն մէջ, Յունուար 1978
մինչև Նոյեմբեր 23, 1978:

Յուցահանգէսի վարչութիւնը հրատարակած է
գեղաստիպ գրքերի մը, որուն մէջ կը յիշատա-
ւին մէն մի գրքի հեղինակը, հրատարակիչը,
դժուգիչը, զբաւարը, էջագիրը, տպագրիչը եւ
կողմարարը:

ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ

Ալեքսանդր Զինովիեւ, որուն «Նորարաց բար-
ձունքներ»ը կարգ մը թէրթերու կողմէ 1977ի լու-
սադոյն գիրքը հաշտուեցաւ, այս Ապրիլին լոյս
ընծայեց երկրորդ հատոր մը՝ «Շողախայլ ապա-
գան» խորագրով: Այս հատորը կ'արժարժէ Խոր-
հըրդային Միութեան մէջ խոր այժմէութիւն ու-
նեցող կարգ մը լուրջ հարցեր, ի շարքս որոնց՝
այլախոս գրողներու պարագան եւ, հակադրաբար
առաջինին մէջ կիրարկուած այլարանեական ոճին՝
ուշդակի իրենց անուններով կը կոչէ հերոսները,
որոնք կը կոչուին Սոլժենիցին, Սախարով, եւայլն:
Այս հանգամանքը պատճառ կարճած է, որ հեղի-
նակը թիրախ դառնայ մտահոգիչ ճնշումներու:



ԱԼԵՔՍԱՆԳՐ ԶԻՆՈՎԻՆԻ

Փիլիսոփայութեան փայլուն փրոֆեսօր՝ Ա-
լեքսանդր Զինովիեւ արդէն դադարեցուած է իր
բոլոր պաշտօններէն եւ ներկայիս ամէն շաբաթ
կը հարցաքննուի զազունի սպասարկութիւններու
կողմէ եւ ըստ իր գործը հրատարակած Վ. Տի-
միթրիճնիզիի՝ տարիներով ընդդիմադրութեան
մէջ գանուող Զինովիեւ առաջին անգամ ըլլալով
կը դիմէ Արեւմուտքի մէջ գինք ճանչցող մտա-
ւորականներուն, որպէսզի միջամտեն ի նպատակ
իրեն եւ չղիւնան իրենց օղնութիւնը:

Ալեքսանդր Զինովիեւի «Նորարաց բարձունք-
ներ» գործին մասին «Բագին» իր տրամագրու-
թեան տակ ունի Լեւոն Մկրտչեանի կողմէ ասու-
րադրուած ուսումնասիրութիւն մը, զոր ի մօտոյ
պիտի ներկայացնենք ընթերցողին:

ԳՐՊԱՆԻ ԳԻՐՔ

«Գրպանի գիրք» հրատարակչութիւնը այս տա-
րի նշեց իր ջանքը հինգերորդ տարեդարձը եւ 500
միլիոն օրինակ շրջադարձութեան դրած ըլլալու ի-
րողութիւնը:
Գարձակցելով աւելի քան հրատարակչական
80 տուններու, «Գրպանի գիրք»ը կը հաշուէ լուրջ
2 հազար 5 հարիւր խորագիր, Փրանսացի թէ օ-
տար 8 հարիւր գրողներու աստղադրութեամբ:

ԳՈՒԽՄԱ

Ոսկիի իւրաքանչիւր թոնը հազար մարդ ար-
ժած է հոն:

Այս է պատումը Ռապրթ Գանքէսթի «Գո-
լիւս» խորագրով հատորին, որ ուսումնասիրու-
րութիւն մըն է՝ վերապրողներու, անձնական օ-
րագրութիւններու եւ այլ վիպալուծութիւններու վրայ
հիմնուած, ստալինեան ժամանակաշրջանի ամէնէն
անտանելի կեղբոնացման ճամբարներու մէկ ցան-
ցին մասին:

Զերոյէն վար յիսունէն վաթսուն աստիճան-
ներու միջեւ տարուբերող սասնամանիքին մէջ
գտնուող ոսկիի հանքերուն ի հաշիւ, մինչեւ 1956
հոն քլուած են շուրջ 12 միլիոն մարդեր, որոնց
մէկ չորրորդը ընդմիջա կորսուած է:

Արջառներու համար կատուցուած չորեկառ-
քերով դատապարտեալները վեց շաբթուայ ճամ-
բորդութիւն մը կը կատարէին՝ հասնելու համար
Վլադիվոսթոք, այսպէ՛ս նախնական նաւերով (որոնք
յաճախ կ'ընկղմէին սառած ջուրերուն մէջ) Յիւ-
թոսկի ծովուն վրայով կը փոխադրուէին Գոլիմա:

Հարկաւ Գոլիմայի բոլոր «քաղաքացիները»
քաղաքական բանտարկեալներ չէին: Կար խուճր-
մը քրէական յանցանքներով դատապարտուածնե-
րու, որոնք իշխանութիւններու ձեռնամուար լը-
ուսկեամբ՝ սուպրակոմեան, ճնշումի, բանարտ-
րութեան եւ սպանութեան ամէնօրեայ դէպքերով
երկրորդ դժոխք մը ստեղծած էին պետութեան
դժոխքին մէջ...

Ռապրթ Գանքէսթի հատորին մէջ պարզ կ'ե-
րևայ, թէ ոսկիի արտադրման եւ քաղաքական
նպատակներու հետապնդման համար որքա՛ն ա-
նարժէք դարձած է մարդ անհատը, եւ թէ՛ բըռ-
նուպետի մը համար ու վարչակարգի մը կողմէ
ստեղծին ի՞նչ անպարտութեամբ արդարացուցած
են այլ բոլորը:

«Գոլիմա»ն յուրջ վիպալուծութիւն մըն է պատ-
մութեան ամէնէն բարբարոս մէկ երեւոյթին մա-
սին եւ իբրեւ յաւելեալ փաստաթուղթ մը կու դայ
աւելնալու. կեղբոնացման ճամբարներու շուրջ կա-
տարուած փաստական ուսումնասիրութիւններուն
վրայ:

ԻՆՔՆԱՆԿԱՐ՝ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ԸՆՈՄԷՋԷՆ

Նձան կիւն մը, չ'առնկար մեռնելէն-
ես այդպիսին եմ եղած:

ԱՆՆ ՍԷՐՍԹՈՆ

'Նախ՝ Սիլվիա Փլէթ, այդ ինք ու ձոն Գէ-



ԱՆՆ ՍԷՐՍԹՈՆ

րիմէն, անձնասպանութեամբ վերջ կու տային ի-
րենց կեանքերուն: Եթէ Փլէթի «Արիւր»ին մէջ
միջնալուրը ծանրաբեւոտուած էր մահուան ու անձ-
նասպանութեան շեշտակի մղումներով, իսկ ձոն
Պլէթին իր վերջին գործերուն մէջ կը յայտնա-
բերէր ահաւոր ճիւղ մը անխուսափելիէն փրկուե-
լու, Սէքսթոն վաղուց մխրճուած էր անոր մէջ...

Անն Սէքսթոն բանաստեղծութիւն գրելու սկը-
սած էր իր հագեցոյթին թելադրանքով, արտաբե-
րելու համար իր ներքին անձկութիւնները: Անն
Ռապրթ Լաուէլի աշակերտած էր Սիլվիա Փլէթի
հետ եւ սկսած էր գրել Լաուէլի խոստովանական
բանաստեղծութեան ազդեցութեան տակ, սակայն
իրեն ամենամօտ անձերուն յղուած անձնական նա-
ժակներու հրատարակութիւնը ամբողջութեամբ
կը բանայ իր գլալուն ու անպնայող ներաշխար-
հը: Նամակները՝ իր սղջկան գրուած ըլլան, ե-
րիտասարդ բանաստեղծներու թէ պարզ ընթեր-
ցողներու, կը մասնին իր ամբողջական ներկա-
յութիւնը ու նաւերումը:

Միշտ չէ, որ ըմբերցողը սախի կ'ունենայ
մտնելու կոնց մը ու միտմտանակ բանաստեղ-
ծուհիի մը ներքին աշխարհին ահաւոր առանձ-
նութեան եւ անկեղծութեան մէջ:



ԲԻՉՐԲՏ ՊԱՆՆ

ՉՄԲՈՍ ՄԵՍԻԱՆ

«Ըմբոս Մեսիան» նոր գործն է ամերիկացի երիտասարդ գրող Բիչրբա Պաննի, որ ետքը տարի առաջ «Ժողովարան լեվիտիստն լը կոնքրետ» աշուն իր առաջին գիրքով մեծ հռչակի տիրացաւ։ Մեքսիկացած ժողովարանի մեծ «Իրաւունք ունիք դուք ձեզ ըրալու» թեմայով գրուած «Ժողովարան»-ը Ամերիկայի մէջ վաճառուեցաւ 9 միլիոն օրինակ։ Հասարակ Ֆրանսերէն թարգմանութեան առանձն ընդունելութեան նոյն երկուցիւր կրկնուեցաւ նաեւ Ֆրանսայի մէջ։

Ամերիկեան թերթերուն կողմէ փոխ-հարգանքներ պատկերացնող Բիչրբա Պաննի «Ժողովարան»-ը վերածուեցաւ նաեւ Ֆիլիպի։

Հայերանական նոյն խորքով գրուած է նաեւ երիտասարդ հեղինակին երկրորդ գիրքը՝ «Ըմբոս Մեսիան», որուն երկուսը մեծ սպասարութեամբ ողջունեց ամերիկեան մամուլը։

ՀԱՂԵՊԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Հաղպի Բարեն Եփփէ ձեմարանի աւարտական գտարաններէն խուճը մը աշակերտներ, իրենց սուսցիւնն՝ Կար Զարաբանի հսկողութեամբ Ազգիկ ամսուան մէջ կաղմակերպած են Հաղպի պարբերական մամուլին ցուցահանգէտը։

Այդ տարիով հրատարակուած է «Հաղպահայ պարբերական մամուլի կամաւոր նկարագրութիւն» անուն խմբարարող գրքակի մը, որ ինքնին պերճախօս է՝ տարուած աշխատանքին մասին։ Հան յարգուած են գրական ուսումնասիր-

ութիւններէ սկսեալու մտակցման կրթականները, աշխարհը՝ յիշուած են սպիւրհները եւ յըստակ բաժանումներու ենթարկուած են մամուլի գունդան երեսները։

Բնականաբար, աշխատանքի ծանուցման կեդրոնը կը կաղմեն օրաթերթերը, իրենց ներկայացուցած շահեկանութեան ստակէտէն, 1913ին լոյս տեսած «Հայ ժողով»-ն ու «Տարազ»-էն սկսած յետոյ, մինչեւ 1963ին գաղթած «Արեւիկ»-ը։ Աւելի ամբողջական գործնելիւ համար պատկերը պէտք է նշել, թէ գունդան են կամ յիշատակուած 10 օրաթերթեր, 10 շաբաթաթերթեր կամ երկշաբաթաթերթեր, 15 ամսաթերթեր եւ եռամսեայ հանգչաններ, 25 պարբերաթերթեր ու 10 տարեգիրքեր։

Տարուած աշխատանքը յատակ գողտխոր մը կու տայ Հաղպահայ կենցաղին եւ ձեւակաւութեան կենտրոն տարրեր երեսներուն ու հոն արծարծուած հիմնական հարցերուն մասին, սակայն կայ եւ աւելին, որ երիտասարդութեան արեւելումն է՝ նախքան մով ու աւարկայական մտակցումով կեդրանաւալու աղջուցին սովէքներու ու մտահոգութիւններու վրայ։

ՍՊԵՆՏԻԱՐԵԱՆԻ ՎԱՐԳԸ

Հայրենի մտաւորականներէն մէկուն յուշերուն մէջ կը կարգանք, թէ յօրինող Ալեքսանդր Սպենտարեանը մասնադիտութեամբ եղած է իրաւարան եւ 1880էն 1890ի միջև. յաճախած է Մոսկուայի համալսարանը։

Ուսանողութեան տարիներուն, Սպենտարեան ու Ա. Մատուրեան հասարակութի մը ներկայ կը գտնուին եւ, ներկաներէն մէկը, մանկամարդ տղաքի մը երկուքին վրայ ալ ուժգին տպաւորութիւն կը ձգէ... Այս առթիւ Մատուրեանը կը գրէ բանաստեղծութիւն մը, որուն երաժշտութիւնը անմիջապէս կը յօրինէ ինք եւ այդպիսով ծնունդ կ'առնէ Սպենտարեանի հանրայայտ «Վարդը»։

Ա՛յ վարդ, լսի՛ր աղաչանքիս,
Թո՛ւյլ տուր քփից Բեզ քաղիս,
Եւ Բեզանով սիրած կուսիս
Փափուկ կուրծքը գարդարիս։

Մի՛ վախենար, հորա կրծքին
Չես քառամիլ, Բե՛հու՛շ վարդ.
Ոչնաղ մտաւղ կրծքի տակին
Կեսմքի աղբիւր կայ առատ...

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻԻ 4

Ուրախ ենք յայտնելու, որ Ամերիկահայ Գրողներու Համագումարի կազմակերպչական աշխատանքները աւարտած ըլլալով, արդէն կազմած ենք երկօրեայ նիստերու յայտագիրը եւ կատարած կարգ մը ծրագրումներ:

Այսպէս,

1.— Համագումարը տեղի պիտի ունենայ երկու յայտորդական օրերու ընթացքին — Շաբաթ եւ Կիրակի —: Շատ հաւանաբար Հոկտեմբերի վերջը կամ Նոյեմբերի սկիզբը: Վերջնական քուակամը պիտի յայտարարենք մամուլով:

2.— Առաջին օրը, զուտ գրական հանդիպում՝ պիտի ունենանք վեց յայտորդական նիստ: Այս նիստերուն ներկայ պիտի ըլլան նաեւ անգլիագիր գրողներ, վարիչ խմբագիրներ եւ քարգմանիչներ: Իսկ երկրորդ օրուան երեք նիստերուն ներկայ ըլլալու պիտի հրաւիրուին նաեւ հայ մտաւարականներ, մշակութային միութիւններու ներկայացուցիչներ, ազգային բարերարներ, ազգային եւ հասարակական կեանքի մէջ վաստակ ունեցող հայրենակիցներ:

3.— Իրաւանչիւր նիստ պիտի ունենայ յատուկ դիւան մը, բաղկացած ատենապետէ մը, որ պիտի վարէ գեկուցումը եւ անկէ ետք տեղի ունենալիք գրոյցը, եւ ատենադպիրէ մը, որ պիտի արձանագրէ: արտայայտուած կարծիքները եւ հանէ տուեալ նիւթին շուրջ կազմուած բանաձեւը:

4.— Համագումարի Շաբաթ օրուան նիստերու գեկուցումներուն եւ գրոյցներուն համար նկատի ունեցած ենք հետեւեալ նիւթերը.

Ա.— Արտասահմանի հայ գրականութեան տագնապը

Բ.— Արտասահմանի հայ գրականութեան արդի վիճակը

Գ.— Ամերիկահայ գրականութեան պատկերը

Դ.— Ամերիկահայ արձակն ու չափածոն

- Ե. — Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ փոխյարաբերութիւնը գրական ասպարէզի մէջ
- Զ. — Ամերիկահայ մամուլը
- Է. — Ամերիկահայ գրաֆննադատութիւնը
- Ը. — Մեր ժամանակներու դիմագիծը հայ գրականութեան մէջ
- Թ. — Սփիւռքի գրականութեան դիմագիծի մը զարգացումը
- Ժ. — Անգլիագիր գրականութեան հարցը

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ՆԻԻԹԵՐԸ

- Ա. — Հայ գրականութեան ստուարելու միջոցներ
- Բ. — Թարգմանական գրականութիւն
- Գ. — Հրատարակչական հիմնարկի մը ծրագրումի մշակումը
- Դ. — Հիմնադրամ գոյացնելու միջոցներու ֆննարկում:

Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին մեր աշխատանքներու պաշտօնական բաժինը ստարած ըլլալով, հետաքրքիր հայ հասարակութեան առջեւ պիտի գեկուցենք կատարած երկօրեայ նուանումներուն մասին: Ապա, ելոյթ պիտի ունենան այս առթիւ յատկապէս արտասահմանէն հրաւիրուած հիւր գրողները:

Համագումարի վերաբերեալ ուրիշ մանրամասնութիւններ յաջորդիւ:

ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐ
ՅԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՆՅ ՍՈՒՐԷՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ
ԱՏԵՆԱԳՊԻՐ
ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Ռ Ո Ւ Բ Է Ն

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄԸ ՅԻԾԱՏԱԿՆԵՐԸ

(Զ. Հատու)

•

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ

(Պատմության բնի)

•

Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

ԱՐԵՒԵԼՔԻ ՏՂԱՔԸ

(Վեպ)

•

Վ.Ե.ՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Կ Ի Զ Ա Կ Է Տ

(Բանաստեղծություններ)

Ստամբուլում համար գիմեյլ՝

Librairie HAMASKAÏNE

10 Rue Hussein Beyhoum

Beyrouth -- LIBAN

« Բ Ա Գ Ի Ն » Ի

ցրուումի Լիբանանի ներկայացուցիչն է
Գրատուն ՍՈՒՐԷՆ

Նաիր էլ Մար — Հեռ. 262671

ԼԻՐԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 27 ՏՈԼԱՐ

ՀԱՏԱՎԱԶՈՒ 5 Լ. ՈՍԿԻ

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزاقچيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԹԵԱՍԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՍՆԱԳԵԱՆ

Հրատարակմ. 296898